Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Քնարիկ
282
283
284
285
286
287

910.4
1-15

ԹԻՒ 750
Բ. 210

2004

ԿԱԶՄԱՐԱՐԻ Ա. ԲԱՂԴԱՆՈՅՇ
ATELIER DE RELIEUR
A. PAGHTANOUCH
Tchakmakdjilar beyuk yéni han 5-6
Չախմաքճըլար Մեծ Նոր խան Թիւ 5-6

# ԱՍԻԱԿԱՆ
# ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ
## Ի ՀԱՅՐԵՆԻՍ

ԳՐԵԱՑ

**ՊԵՏՐՈՍ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ**

ԿԱՂՀՕԿԵՑԻ

ՀՐԱՄԱՆԱՒ ՄԷԱՐԻՖԻ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՖԵԱՆ
1881

Դ-51

# ԱՍԻԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅՐԵՆԻՍ

ԳՐԵԱՑ

ՊԵՏՐՈՍ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ

ԿԱԼՀՕԿԵՑԻ

ՏՊԱԳՐԵԱԼ ԾԱԽԻՒՔ

ԲԱՐԵՊԱՇՏ ԵՒ ԱԶԳԱՍԷՐ

ԱՔԷԱ ԷՖԷՆՏԻՈՅ

ՈՒՆԺԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՎԱՖԵԱՆ

1881

13282

ССР
Мясникяна

282-2016

1881
39

910.4
Կ-15

# ԱԶԴ

Որպէս տեսանելոց են ընթերցողք, լեզու գրոցս փոքր ինչ տարբեր է Կոստանդնուպոլսոյ աշխարհաբարէ։ Պոլսեցիք ասեն, ալ, իմ հայրենեաց կողմեր գաւառացիք ոմանք ասեն էլ, ոմանք լա, այլք լէ. իսկ մեք փոխանակ սոցա գործածեցինք զեւս շաղկապն։ Նոյնպէս բնակիչք Պոլսոյ և այլ քաղաքաց ինչ զապառնին կազմեն պիտի, պիտ'որ բայիւ, և ուրեք ուրեք ի գաւառս մեր 'տի մասնկամբ, որ պիտի բառի կրճատեալն է, իսկ մեք լաւ համարեցանք ըստ գրաբարին ոց մասնկամբ դնել, գործելոց եմ, ասելոց եմք, եւայլն։ Դարձեալ փոխանակ ներկայ և անկատար ժամանակներու կը մասնկան ըստ արեւմտեայց, ընտրեցաք զկու արեւելեան Հայոց։ Նոյնպէս փոխանակ կըսեմ, ըսի, կըճեմ, ըրի, եդաք՝ ասեմ, ասացի, աճեմ կամ առնեմ, արարի, եւն։ Զհայցականի զ նախդիրն պահեցաք ըստ գրաբարին, և զյօդն ը թողինք, փոխանակ նորա ընտրելով զն, և այլ ինչ ինչ ըստ խրատու բազմաց հայրենակցաց իմոց։ Վասն պարզութեան և դիւրիմացութեան որչափ կարելի էր զգուշացանք զեղչումներէ, ուստի և շատ անգամ կրկնած եմք զմի և զնոյն բառ։ Դիւրիմացութեան բազում ուրեք միտ դրինք, յիշելով զգանգատ բազմաց որ մթին գտած էին զլեզու տետրակին մերոյ որ վասն եպիսկոպոսաց ամուսնութեան։

# ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

## Ի ՀԱՅՐԵՆԻՍ

Ոմանք ի բարեկամաց խնդրեցին ի մէնջ հրատարակել գրով ինչ որ տեսած էինք աչօք, ուշի ուշով դիտած եւ նշանակած ի ստէպ ճանապարհորդութիւնս մեր ի Հայրենիս, մանաւանդ զգետոց եւ զգետակաց թէ ո՛ւր բղխեն եւ ո՛ւր երթան, զլերանց եւ զուղղութենէ նոցա, եւ այլ ինչ որ կարեւոր է եւ արժանի յիշատակութեան։ Սկսիմք յԵփրատայ։

## ԵՓՐԱՏ ԳԵՏ

---

### Ա.

ԱԿՈՒՆՔ ԵՓՐԱՏԱՅ ՈՐ Ի ԿՈՂՄԱՆՍ ԲԱԳՐԵՒԱՆԴԱՅ

Եփրատ գետ երկու է, մին ի Կարին է, և միւսն ի Մուշ։

Կարնոյ Հայերն ուղղակի Եփրատ կու հընչեն, և Մահմետականք՝ Ֆրատ։ Իսկ զՄշոյն՝ երկու ազգք ևս կ՚անուանեն Մուրատ (Արածանի) ինձ թուի թէ Եփրատ բառն խանգարելով եղած է Մուրատ։ Արդ Մուրատ գետոյ հեռաւորագոյն ծայրեր կու բղխեն ի Բագ-

րեւանդ գաւառէ, որ ըստ այժմեան սովո-
րութեան հայերէն ասի Ալաշկերտ և այլազ-
գերէն՝ Էլաշկըր ։ Ալաշկերտու դաշտի մի ծայ-
րըն յարեւելեան կողմն է, և միւսն՝ յարե-
մտեան, և չորս կողմն շրջապատեալ է ի
բարձրագագաթ լերանց ։ Երկու բազուկք գե-
տոյն կու գան, մին՝ դաշտի մի ծայրէն, և
միւսն՝ ի միւս ծայրէն, համարեա թէ երկո-
քին իրարու հաւասար են ։ Մին աստուստ և
միւսն անդուստ՝ դաշտի հարաւային կողմի լե-
րանց ստորոտներէն կու գան, և յեզեր դաշ-
տին, ի հարաւային կողման իրարու հետ մի-
անալով կ'երթան դէպ ի հարաւ, յԱնթապու-
գաւառի միջոյ անցնելով կու հասնին Մանազ-
կերտ քաղաքի առջեւ ։ Իմոյ ճանապարհոր-
դութեան ժամանակ ուշի ուշով դիտած եմ
թէ դաշտի արեւելեան կողմէն եկող բազկի
հեռաւորագոյն և ուղիղ ծայրն կու բազկա-
նայ ի միոջէ առուէ ։ Այս է դաշտին տափ և
անտի, առաւելապէս հարաւային կողմի լեռ-
ներէն, բազում փոքր գետեր և մեծամեծ ա-
ռուներ գալով և իրարու հետ միանալով կու
կազմեն գետոյն զայն բազուկն որ այն կողմէն
կու գայ ։ Թէպէտ մինչեւ յարեւմտեան ծայր
դաշտին չգնացի, սակայն ի հեռուստ դիտե-
ցի և կարծեմ թէ գետոյն միւս բազուկն եւս
որ այն կողմէն կու գայ՝ կու բազկանայ ի փոքր
գետերէ և ի մեծամեծ առուներէ ։ Ըստ պատ-

մեռլոյ նոյն դաշտի Հայ բնակչաց, Ս. Մուքիասանց գերեզմանքն ի Մուկաւ կամ Մուկաւէտ լերին են, որ է յարեւմտեան ծայրի հիւսիսային կողման դաշտին, և Թուրքերէն ասի Գէօսէ–տաղի։ Կու պատմէին նաեւ թէ ժամանակ ժամանակ շատ բազմութիւնք կու դիմեն ի նոյն լեառն, ոմանք վասն ուխտի, և ոմանք վասն իւրեանց ցաւոց և ախտից բժշկութիւն ընդունելոյ ի գերեզմանաց սրբոցն։

Փոքր գետերն և առուներն երկիրներուն օգուտ կու գործեն, մինչդեռ իրարու հետ չեն միացած. իսկ զկնի միանալոյ իրարու հետ՝ ամենեւին օգուտ չունին։ Վերոյիշեալ գետոյ երկու բազուկքն, յետ միանալոյ իրարու հետ, այնպէս կու ստուարանան որ ճանապարհորդներն յամառնային եղանակին անգամ մեծ դժուարութեամբ կարեն անցանել ընդ հունսըն։ Միւս եւս գետ Մանազկերտ քաղաքի արեւելեան կողմէն ի Բատնոց գաւառէն գալով կու խառնի ի Նոսս։ Յետոյ գետն կու դառնայ դէպ յարեւմուտս, և Ապահունեաց կամ Վերին–Պուլանուխայ դաշտի հիւսիսային կողմի լերանց ստորոտներէ անցնելով կու հասնի գրեթէ մինչեւ ի սպառուած դաշտին, և յետ այնորիկ կու դառնայ դէպ ի հարաւ։

Ի յետ կուսէ Մշոյ Ս. Կարապետի վանից արեւմտեան հիւսիսային կողմի լեռներէն բազում ակունք կու բղխեն, յորոց գետ մի

բաղկանալով կ'իջանէ ի դաշտն Վարդոյի, կու դառնայ դէպ յարեւելս, և Հարք կամ Խըլնուս գաւառի դաշտի մէջոյ կ'անցնի ։ Ս. Կարապետի վանից միաբան վարդապետներն ինձ պատմեցին թէ գետ մի եւս Վարդոյի դաշտի հիւսիսային կողմի լերանց միւս կողմէն գալով կու մտանէ լերան միոյ տակ, և յետ երթալոյ ժամու միոյ ճանապարհ, կրկին ելանելով կու գայ խառնուի ի միւս գետն, և ընդ մէջ Խնուսայ դաշտի դէպ յարեւելս ընթանալով Պուլանուխայ դաշտի յարեւմտեան կողման կու խառնուի ի Մուրատ գետ ։

Այս վերջին դաշտի յարեւելեան կողման, դեռ երկու երեք ժամու ճանապարհաւ ի դաշտն, իբր երկու ժամու ճանապարհաւ երկայն և իբր հինգ քառորդ ժամաւ լայն լիճ մի կայ (*) ։ Սոյն լճէ գետ մի ելանելով շատ ջրաղացներ կու դարձնէ և գիւղացւոց արտորէից շատ օգուտ գործելով և դէպ յարեւմուտս երթալով կու խառնուի ի Մուրատ, որ գլխշեալ գետերն յետ յինքն ընդունելոյ՝ կ'ընթանայ դէպ ի Հարաւ ։ Երբեմն յայսկոյս և երբեմն յայնկոյս խոտորելով և յերկոցունց կողմանց փոքր փոքր գետեր առնլով, կու համնի Մշոյ դաշտի յարեւմտեան ծայրն, և

(*) Այս լիճն ի Տարօնոյ Պատմութեան Զենոբայ կ'անուանի Ծէ—Ծ.Լ։

այնուհետեւ կ՚երթայ դէպ յարեւմտեան հարաւ՝ ի դաշտէն փոքր ինչ հեռի, և յարեւմտեան հիւսիսային կողման թողլով զդաշտն, ինքն ընդ մէջ անցանէ, և կու խոտորի յարեւմուտս հարաւոյ: Գինճ և Պօլլան գաւառաց միջոյ և Ճապաղ–ջուր գաւառի հարաւային եզրէն անցանելով կ՚երթայ ի Բալու և Խարբերդ գաւառաց հիւսիսային, և ապա ի Ջարսանճագ և ի Չմշկածագ գաւառաց հարաւային կողմանց միջոյ կ՚անցնի մինչեւ Կիւմիւշ–Մատէն, և կու խառնուի յԵփրատ գետ: Մշոյ դաշտի մի ծայրն յարեւելեան կողմն է, և միւս ծայրն յարեւմտեան կողմն: Արեւելեան ծայրն իբր երեք ժամու ճանապարհ քան զդաշտն նեղ լինելով, հին պատմութեանց մէջ կու կոչուի Տարօնոյ–Ձոր, և ըստ այժմեան սովորութեան ասի Չըխուր: Սորա յարեւելեան կողմի ծայրն, որ անտի մինչեւ ի Բաղէշ քաղաք երեք ժամու ճանապարհ է, կամ իրարու շատ մօտ մեծամեծ ակունք, որ կու կազմեն բաւական մեծ գետ մի, որ ըստ հին պատմութեան կոչուի Մեղրայ գետ, և այժմ ասի Մեղրագետ և կամ Գոռ գետ: Մեր հայրենեաց Դասմի գաւառացիք տղմին կ՚ասեն գոռ կամ գուռ. գետի յատակն տեղ տեղ տիղմ լինելոյն աղագաւ ասի Գոռ գետ(*): Սա Տա-

(*) Տարօնոյ Պատմութիւն զայս նաև անուանէ Արածանի

րնոյ դաշտի մէջոյ անցնելով և ամենեւին օգուտ չգործելով և դէպ յարեւմուտս երթալով կու խառնուի ի Մուրատ ։ Միայն երկու առու կ'արձակէ , և զայնոսիկ եւս ի տեղեաց ուստի կու բղխէ ։

---

## Բ.

### ԱԿՈՒՆՔ ԵՓՐԱՏԱՅ ՈՐ Ի ԿՈՂՄԱՆՍ ԿԱՐՆՈՅ

Եփրատ գետոյ , ըստ Թուրքաց Ֆրատ , հեռաւորագոյն ծայրի այլ ակունք կու բղխեն Կարնոյ դաշտի արեւելեան կողմի լեռներէ ։ Թէպէտ ակունք նորա ինձ անծանօթ են , բայց տեսած եմ և քաջ գիտեմ որ դաշտի արեւելեան կողմէն միջակ գետ մի գալով ընդ մէջ դաշտին կ'անցնի . յեզեր դաշտին գետ մի հարաւային կողմէն և միւս եւս ի հիւսիսային կողմէն , իբր երկու ժամու ճանապարհաւ ի միմեանց հեռի , յինքն կ'ընդունի , և կ'ընթանայ դէպ յարեւմուտս . յերկոցունց կողմանց փոքր գետեր յինքն ընդունելով Քարապիւղ–տէրէ և Դերջան գաւառաց մէջոյ և Երզնկայի դաշտի հարաւային կողմի եզրէն կ'անցնի , երբեմն փոքր ինչ դէպ ի հարաւ , երբեմն դէպ յարեւմուտս խոտորելով , ի Դարանաղեաց և յԱկնայ գաւառաց եւս կ'անցնի , և ընդ մէջ Արապկիր գաւառի արեւելեան և Չը-

մըշկածագ գաւառի արեւմտեան եզերայն անցանելով և սակաւ ինչ դէպ յարեւմտեան հարաւ խոտորելով Կիւմիւշ-մատէնի առջեւուն Մուրատ գետոյ հետ կը միանայ ։ Ցետ այնորիկ Եփրատ կամ Ֆրատ անուանք կը վերնան, և գետն կը կոչուի Մուրատ ։ Ապա երբ Մալաթիոյ դաշտի արեւելեան կողմի եզրն կը հասնի, Կիւրին քաղաքի կամ այն նահանգի մեծ և ահագին գետն յարեւմտեան կողմէն դէպ յարեւելս ընթանալով՝ կը գայ կը խառնուի ի նա, և անտի երթայ դէպ ի հարաւային արեւելս, և զխարբերդու և Մալաթիոյ նահանգաց սահմաններն ի միմեանց բաժանելով՝ կը հասնի ի Ներղուց մի, ընդ որ անցանելով կը դառնայ դէպ յարեւմտեան հարաւ, ապա դէպ ի հարաւ, և կ'երթայ Պիրէճիկ քաղաքի արեւմտեան կողմի աներուպատերուն քսուելով կ'անցնի ։ Անդ իբր հնդետասան մեծամեծ նաւակք (մավունաներ) կան, որովք ճանապարհորդք, կարաւաններ և գրաստք կը փոխադրուին յայսկոյս և յայնկոյս ։ Այս քաղաք Տիգրանակերտ (Տիար-Պէքիր) քաղաքի արեւմտեան հարաւային կողմն է քառասուն և հինգ ժամու ճանապարհաւ հեռի անտի ։

## Գ.

### ՇՂԹԱՅՔ ԼԵՐԱՆՑ ՈՐ ՈՒՆԻՆ ՁԱԽՈՒՆՍ ԵՓՐԱՏ ԵՒ ՄՈՒՐԱՏ ԳԵՏՈՑ

Նեղուցն որ ի վերոյ յիշեցաւ՝ կայ ի մէջ երկու լերանց։ Արեւելեան կողմի լեռն Խարբերդու երկրի սահմանագլուխն է, և արեւմտեան կողմին՝ Մալաթիոյ երկրին սահմանագլուխն։ Ուստի լերանց գօտին յայս Նեղցէ սկսելով տարածուած է դէպ յարեւմուտս Մալաթիա քաղաքի, և անցնելով նորա հարաւային կողմէ՝ կ'անցնի կ'երթայ և կու միանայ այն լերանց հետ որոց ստորոտներէն կու բղխեն Կիւրին քաղաքի կամ այնր նահանգի գետոյ ակունք։

Սղերդ է Բաղէշ քաղաքի յարեւմտեան հարաւային կողման, և չորեքտասան ժամու ճանապարհաւ հեռի անտի, բայց աւելի ընդհարաւ։ Ի Սղերդ քաղաքէ մինչեւ ի Տիգրանակերտ երեսուն և վեց ժամու ճանապարհ է, իսկ ի Տիգրանակերտէ մինչեւ ի Մալաթիա յիսուն և ութ ժամու, և ի Մալաթիայէ մինչեւ ի Կիւրին քաղաք քսան և չորս ժամու ճանապարհ։ Իսկ ի Կիւրին քաղաքէ մինչեւ յակունս գետոյն հարկաւ քսան կամ քսան և երկու ժամուց ճանապարհ լինելոց է։ Ինձ թըւի թէ այն լերանց արեւելեան կողմի ստորոտներէ Կիւրին քաղաքի գետոյ ակունք

կու բղխեն, իսկ արեւմտեան կողմի ստորոտներէն՝ Մարաշու գետոյ ակունք։ Ի Տիգրանակերտէ մինչեւ ի Խարբերդ վաթսուն ժամու ճանապարհ է, և ի Խարբերդէ մինչեւ ի Սեբաստիա (Սըվազ) դարձեալ վաթսուն ժամու ճանապարհ է։ Տիգրանակերտ Սղերդու արեւմտեան կողմն է, իսկ Մալաթիա և Կիւրին Տիգրանակերտի յարեւմտեան կողմն են. Խարբերդ՝ սակաւ ինչ դէպ ի հիւսիս։ Ապա լերանց գօտին զԿիւրին քաղաքի կամ նորա նահանգի գետոյ ակունս ի ներքս, այսինքն յարեւելեան կողմն առնլով՝ կու դառնայ դէպ ի հիւսիս և կու տարածի մինչեւ ի Ծակ-քարն ասացեալ տեղի։ Անտի մինչեւ ի Սեբաստիա յիսն ժամու ճանապարհ է։ Ծակ-քար ասացեալ տեղւոյ արեւելեան կողմի ջուրք կ'երթան կու խառնուին յԵփրատ գետ։ Բարձր և խոնարհ լերինք իրարու հետ միանալով կու կազմեն շղթայ։ Ուստի ուրեք ուրեք լերանց մեծ և փոքր շղթայք և ուրեք ուրեք նոցա մասունք տարածուելով, գետերու չորս կողմ շրջապատած են։ Լերանց շղթայն ի Ծակ-քարէ կու տարածի դէպ ի հիւսիս, Դամ քան զդամ չեղելով ընդ արեւելս հիւսիսոյ, և յետոյ բաւական կու հեռանայ։ Բայց շղթային արեւմտեան կողմի ստորոտներէն կու բղխեն ակունք Սեբաստիոյ Ալիս գետոյ, որ երթալով և դաշտի զարեւելեան և զհարա-

ւայլն եզերբք անցանելով՝ ընդ իւր կու տա-
նի Սեբաստիա քաղաքի տներու շինութեանց
համար գերաններ և վառելու փայտ ։ Ան-
տի երկու կամ երեք աւուր ճանապարհ դէպ
ի հիւսիս , դարձեալ արեւմտեան կողմի ստո-
րոտներէ , միւս եւս գետ կազմուելով , կ՚ըն-
թանայ դէպ յԵւդոկիա քաղաք գերաններ
և վառելու փայտ ընդ իւր տանելով ։ Եւ ան-
տի եւս երկու կամ երեք աւուր ճանապարհ
դէպ ի հիւսիս , փոքր ինչ ընդ արեւելս խո-
տորելով կու հասնի Պաշ-չիֆթլիկի արեւմտ-
եան հիւսիսային կողմի Զամլը-պէլ անուն լեա-
ռըն ։ Դարձեալ արեւմտեան կողմի ստորոտ-
ներէ այլ գետ կազմուելով կ՚երթայ ի Նիւս
կամ Նիքսար քաղաք ։ Այս երեք գետք եւս
կ՚երթան կու թափին ի Պոնտոս ծով ։ Իսկ լե-
րանց շղթայի արեւելեան կողմի ստորոտնե-
րէն բղխեալ գետեր և առուք կ՚երթան յԵփ-
րատ գետ ։

Կարնոյ քաղաք սակաւ ինչ Բաղէշ քաղա-
քի արեւմտեան հիւսիսային կողմն է ։ Նոյնպէս
և Զամլը-պէլ լեառն փոքր ինչ Կարնոյ քա-
ղաքի արեւմտեան հիւսիսային կողմն է ։ Իսկ
Եւդոկիա քաղաք Զամլը-պէլ լերան արեւ-
մտեան հարաւային կողմն է ։ Կոստանդնու-
պոլիս եւս փոքր ինչ Եւդոկիա քաղաքի ա-
րեւմտեան հիւսիսային կողմն է ։ Ի Բաղէշ քա-
ղաքէ մինչեւ ի Կարնոյ քաղաք վաթսուն ժա-

մու ճանապարհ է, և ի Կարնոյ մինչև ի Զամըր-պէլ սարն դարձեալ վաթսուն ժամու ճանապարհ է, և անտի մինչև յԷւդոկիա երեսուն և հինգ ժամու ճանապարհ է։ Էւդոկիա Կոստանդնուպոլսոյ և Բաղէշ քաղաքի ի միջոցին կայ։ Ճանապարհն ի Բաղէշ քաղաքէ որչափ կու տևէ մինչև յԷւդոկիա, այնչափ ևս յԷւդոկիայէ կու տևէ մինչև ի Կոստանդնուպոլիս։ Զամըր-պէլ սարէ դէպ ի հիւսիս կարծեմ թէ հազիւ երկու օրուան ճանապարհ կու մնայ մինչև յափն Սևու ծովու։ Տրապիզոն թերևս նոյն ուղղութենէ փոքր մի ի բացեայ է։ Լերանց շղթայք և մասունք նոցա ի Զամըր-պէլէ դէպ յարևելս դառնալով կու տարածին մինչև ի Կարնոյ դաշտի արևելեան ծայրն և կու միանան Տէվէ-պօյնի լերանց հետ։ Լերանց շղթայ մի ևս Տրապիզոն քաղաքի վերին կողմէ իբր քսան ժամու ճանապարհաւ կու տարածի դէպ ի հարաւ, յետ այնորիկ կու դառնայ յարևելս Ջիւանայ լերան ծայրէն, և Գաղըրգըլը սարի արևմտեան կողմէն անցնելով և պտոյտ առնելով կ'իջնէ Տըրապիզոն քաղաքի արևելեան կողմի ծովեզր, միոյ ժամու ճանապարհաւ ի քաղաքէն հեռի։ Ապա ի տեղւոյն ուր շղթայն կու դառնայ՝ կու կազմուի Տրապիզոնի գետն։ Տրապիզոնի հարաւային արևելեան կողմէն մեծ ձոր մի դէպ ի հարաւ տարածուելով կու հասնի Ջիւանայ

լերան ստորոտն ։ Ցայն ձորոյ երեք մեծ ձորք եւս կու տարածին դէպ յարեւելս , յորոց միջոյ կու գան երեք գետք , և կու խառնին ընդ գետոյն որ գայ ի մեծ ձորոյ միջոյ ։ Այս գետոց ջուրք կ'իջանեն ի Ջիւանայ և Գաղըդըը լերանց · աստի և անտի փոքր գետեր և առուներ գալով և միանալով կու կազմեն ըզ յիշեալ գետն , որ իջանելով ժամու միոյ ճանապարհաւ ի Տրապիզոնէ յարեւելեան կողմն , կու թափի ի Սեաւ ծով ։ Լերանց շղթայի հիւսիսային կողմն Տրապիզոնի նահանգն է · և հարաւային կողմն՝ Երզնկայի նահանգն ։ Ի մէջ Երզնկայ նահանգի հիւսիսային կողմի լերանց և Ջիւանայ և Գաղըդըը լեռներու՝ կայ Կիւմիւշխանէի ձորագաւառն ։ Կիւմիւշխանէ քաղաքի հարաւային արեւելեան կողմէն առու մի կու գայ · աստի և անտի փոքր գետեր և առուներ յինքն ընդունելով և գետ մի ձեւանալով յիշեալ քաղաքի առջեւէն կ'անցնի , և երկու երեք ժամու ճանապարհ դէպ ի վայր իջանէ ։ Դարձեալ ի փոքր գետակաց և առուաց բաղկացեալ գետ մի ի հարաւային կողմանէ կու գայ և միւս գետոյ հետ միանալով կ'երթայ դէպ յարեւմտեան հիւսիս , և դէպ ի հիւսիս Արտասայ անուն վաճառանոցի ընդմէջ անցնելով կու խառնի փոքր ինչ յարեւմտեան կողմն , և չգիտեմ ուր կու թափի ի Սեաւ ծով ։

Գաղըգը լեռան աւուր մը ճանապարհաւ կու տարածի դէպ յարեւելս, և կու հասնի ի սահմանագլուխ Բաբերդու (Պայպուրթ) նահանգի արեւմտեան կողման։ Այս լեռան հիւսիսային կողմէն երեք կամ չորս փոքր գետ կ'արձակէ, բայց չգիտեմ սոքա ճորոխ գետոյ հետ կու միանա՞ն թէ առանձին ի ծով կ'երթան։ Ճորոխ գետոյ ակն կու բղխի ի Սպեր (Սոփեր կամ Սըպեր և կամ Իսփիր) գաւառի, յինձ անծանօթ լերանց ստորոտներէ. բայց տեսած եմ որ յիշեալ գաւառէ գալով կ'ընթանայ դէպ ի հիւսիսային արեւմուտս, և Բաբերդ քաղաքի ընդ մէջ անցանելով կու խոտորի դէպ ի հիւսիս, և նոյն նահանգի չորս կողմի բոլոր ջրեր յինքն ընդունելով կ'երթայ կ'անցնի Արդուին քաղաքի առջեւէն, և երկու ժամու ճանապարհաւ ի Պաթում քաղաքէ ի հարաւային կողման կու թափի ի Սեաւ ծով։ Ի բերանոյ գետոյն մինչեւ յԱրդուին է նաւարկելի։

Տրապիզոնոյ, Բաբերդու և Սպերու նահանգներն կը գտնուին լերանց շղթաներու հիւսիսային կողման։ Իսկ Երզնկայու, Դերջանու, Գարապիւղ–տէրէի և Կարնոյ նահանգներ ի հարաւակողման են։ Մալաթիոյ, Նիւբինի, Հէքիմ–խանի, Արապկիրոյ, Ակնայ, և Տիվրիկու նահանգներ կամ գաւառներն՝ յարեւելեան կողման, իսկ Գարանաղեաց և Պաշ–

չիփթլիկու գաւառներու մի մասն յարեւելեան կողման, և միւս մասն ի հարաւային կողման են ։

Տէվէ-պօյնի անուն լերան շղթայն դէպ ի հարաւ տարածուելով կու միանայ Կարնոյ հարաւային արեւելեան կողմի փալան-տէօքէն լերան հետ ։ Եւ անտի լերանց շղթաներու մի կարգն կու դառնայ դէպ յարեւմուտս Քղի գաւառի հիւսիսային եզրէն և Տէրսիմ կամ Տուժիկ գաւառի մէջ տեղէն անցնելով կ'երթայ Ակնայ հիւսիսային արեւելեան կողման ծայրն, և իջանէ յեզր Եփրատ գետոյ ։ Դարանաղեաց, Երզնկայու, Դերջանու, Գարապիւղ-տէրէի և Կարնոյ գաւառներն ի սորա հիւսիսային կողման են ։ Իսկ Չմշկածագի, Չար-սանճաղի, Բալուայ, Քղւոյ, Ճապաղջրոյ, Պօլլանայ, Գինճու գաւառներն և մի մասն Վարդոյի ի հարաւային կողման են ։ Տէրսիմ կամ Տուժիկ լերան հարաւային կողմի ջրերն կ'իջանեն ի Մուրատ գետ, և որ ի հիւսիսային կողման են՝ կ'իջանեն յԵփրատ ։

Լերանց շղթայքն որ ի վեր անդր յիշուեցան՝ փալան-տէօքէն լերան հարաւային կողմէն կու դառնան յարեւելս, կու խոտորին դէպ ի հիւսիս և կու միանան ի Բիւրակնեան կամ Պին-կէօլ լերին ։ Այս լերան հիւսիսային կողմէն կու կազմուի Երասխ գետն որ կ'իջանէ ի

Բասեն, կու դառնայ դէպ յարեւելս, և յԱբարատեան դաշտի միջոյ անցնելով և անբաւ օգուտներ ընծայելով կ'երթայ, բայց թէ անտի անդր ուր երթայ՝ ինձ անծանօթ է։ Գետ մի եւս ի Բիւրակնեան լերան հարաւային կողմանն կազմուելով կ'երթայ դէպ ի հարաւ, դարձեալ աստի և անտի գետեր և առուներ յինքն ընդունելով կու դառնայ դէպ յարեւմտեան հարաւ, և Քղի աւանի միջոյ կամ առջեւէ կ'անցնի, կ'երթայ կու խառնուի ի Մուրատ գետ։ Վարդոյ գաւառ է ի մէջ Կարնոյ և Մշոյ գաւառաց։ Կարծեմ, Բարձր-Հայք, որ, ըստ Խորենացւոյն, ի չորեսին կողմանս գետեր կ'արձակէ՝ այս գաւառ է։ Կանխաւ ասացաք թէ ի միջոյ Խնուսայ դաշտի դէպ յարեւելս ընթացող և ի Մուրատ գետ խառնուող գետն կու կազմուի յայս գաւառի, որ զԵրասխ գետ կ'արձակէ դէպ ի հիւսիս, և զմիւս գետն գրեթէ դէպ յարեւմուտս։ Նաեւ դէպ ի հարաւ կ'արձակէ գետ մի, որ Ճապաղ-ջրոյ գաւառի միջոյ անցնելով կու խառնուի ի Մուրատ։ Դարձեալ ուղղակի կ'արձակէ դէպ յարեւելս գետ մի, որ ի Ջար-Պօհօրա ասացեալ տեղւոջ խառնուի ի Մուրատ։ Տեղ տեղ լերանց փոքր, տեղ տեղ մեծ շղթայք, և տեղ տեղ մասունք ի Բիւրակն լեռնէ կու դառնան դէպ ի հիւսիս, և Հարք կամ Խնուս գաւառի արեւմտեան կողմէն անցնե-

լով կու դառնան դէպ յարեւելս, կու խոտորին ի հիւսիս, Անթապ գաւառի արեւմտեան կողմէն եւս անցնելով կ'երթան Բադրեւանդգաւառի արեւմտեան կողմի ծայրն, և անտի կու դառնան դէպ յարեւելս, կու տարածին մինչեւ ի Վասպուրական կամ Վանայ աշխարհի Բաղբերունեաց կամ Արճէշ (Արճիշ) գաւառի արեւմտեան կողմն: Տէվէ-պօյնու ասացեալ տեղէն մինչեւ ցայս վայր միւս կողմի ջրեր կու թափին յԵփրատ գետ: Յիշեալ շղթայից մին Արճէշ գաւառի արեւմտեան կողմէն կու դառնայ դէպ ի հարաւ, զԲասենոց գաւառ յիւր ծոց առնլով կու խոտորի յարեւմտեան հարաւային կողմն, և ձորեր բանալով կու հասնի Մանազկերտ քաղաքի հիւսիսային կողմն: Եւ անտի եւս Մուրատ գետոյ հիւսիսային եզրէն դէպ յարեւմուտս տարածուելով զԱնթապ և զԲադրեւանդայ գաւառներն եւս յիւրեան ծոց առնլով կու գայ և Խնուս գաւառի հիւսիսային կողմի լեռան հետ կու միանայ: Յետոյ Խնուսայ դաշտի հիւսիսային կողմի յեզերաց տարածի դէպ ի հարաւային արեւմուտս մինչեւ ի սպառումն դաշտին, և անտի դէպ ի հարաւ խոնարհագոյն թեւով մի կու միանայ Բիւրակն լեռան հետ: Այս լեռան տարածութիւն դաշտի մի ծայրէն մինչեւ ի միւս ծայրն է: Խնուսայ դաշտ ձորագաւառաւ մի կցեալ է Ապահունեաց կամ

Վերին-Գուլամուխայ դաշտին հետ, բայց Մուրատ գետ անցանելով ի միջոյ երկոցունց զերկոսին դաշտն բաժանէ ի միմեանց: Մուրատ գետ զԱպահունեաց դաշտի հիւսիսային և զարեւմտեան կողմանս շրջապատած է, և յամարան եղանակի անգամ ճանապարհորդք և կարաւանք խիստ դժուարաւ կարեն անցանել ընդ այն: Որպէս ի վերոյ ասացաք, դաշտն Ապահունեաց յարեւմտեան կողման ձորագաւառաւ մի Խնուսայ դաշտի հետ կու միանայ. իսկ յարեւելեան կողմանն կու տարածի մինչեւ յեղերան ծովուն Վանայ կամ Բզնունեաց: Բայց դաշտի մի մասն, այսինքն Մանազկերտ քաղաքի արեւելեան կողմն, մինչեւ յեզր ծովուն շեղջի ձեւով յարարչէն շինուած փոքր քարակոյտ բլրակներով լի է. ի հեռուստ դիտողն կարծէ թէ ի մարդկանէ է շինեալ. քանզի փոքր և սեւ քարեր հողախառն իրարու վերայ դիզուած և յիրեարս այնպէս միացած են, մինչ զի քար մի փրծուցանել անկարելի է: Ուստի անուն տեղւոյն կոչի Մանազկերտու բուէք: Քանզի Հայք ընդհանրապէս քարակարկառներու ասեն բույ: Իսկ միջոցք փոքր բլրակաց, թէպէտ ըստ բաւականին ընդարձակ են, բայց որովհետեւ ի միատարր քարէ են և ի վերայ քարին սակաւ ինչ հող կայ իբրեւ զսեր մնացեալ են անմշակ և անբեր: Մանազկերտու քարակարկառ



282-2016

տասցեալ ամուլ դաշտի հարաւային կողմն Սիփան լեառն է, զորոյ ստորոտն փաւստոս Բուզանդացի անուանէ Ոտն մեծի լերին Մասեաց։ « Ո՜վ վարկպարազի արտասցուք, ասէ, (զորմն) վասն դառնացող չար ազգին, չարութեանն դառնացող ազգին, յերկրին Ապահունեաց, յոտին մեծի լերինն Մասեաց, զտեղին զայն որսասցուք »։ Ղուկաս վարդապետ Ինճիճեան ի գիրսն Սորագրութեան Հին-Հայաստանի գրէ թէ Բուզանդ (զայն լեառն) յՈտին Մասեաց լերինն դնէ. բայց պարտ է աստ իմանալ առաւել վասն չղթայի ինչ լերանց, որք Մասիս անուանեցան, սակս կցեալ համարելոյ ի նախնեաց ընդ մեծի ընիկ Մասիս լերին։ Իսկ Ինճիճեան որ՝այսպէս կու գրէ, թուի թէ ականատես չէ, և ոչ լսած է յականատես և հըմուտ անձանց։ Քանզի յԱպահունեաց երկրին քան զՍիփան աւելի մեծ լեառն չկայ. Սիփան է որ բարձրութեամբ գրեթէ կու հաւասարի Մասիս լերան, քանզի Մասիս լերան նիստն կամ տեղին, Արարատեան դաշտ, խոնարհ է, և Ապահունեացն բարձր, և չէ ամենևին կից Մասիս լերան չղթային։ Սիփան լերին արեւելեան կողմն Բզնունեաց (Վանայ) ծովն է, և հիւսիսային կողմն Ապահունեաց դաշտն։ Ինչպէս կանխաւ ասացաք, նոյն դաշտի արեւելեան ծայրն կու հասնի յեզր ծովուն Բըզնունեաց, և արեւմտեան ծայրն Խնուսայ դաշտի հետ միանալով կու տարածի մինչեւ ի

Գլն–կէօլ լեառն։ Ուստի ի մէջ խնուսայ դաշտի արեւմտեան ծայրի և Երասխ գետոյ կայ թեւ մի սակաւ ինչ դաշտէն բարձրացած։ Իսկ Երասխ սակաւ դառնալով կ'անցնի Մասիս լերան հիւսիսային ստորոտներու առջեւէ։ Եւ թող զայս ամենայն. յԱպահունեաց դաշտէ մինչեւ ի Մասիս լեառն վեց աւուր ճանապարհ է, և ի վերայ այսր ամենայնի Մուրատ գետ յԱպահունեաց դաշտէ մինչեւ յԱլաշկերտու դաշտ զլեռներն յայսկոյս և յայնկոյս ի միմեանց կու բաժանէ։ Եւ յԱլաշկերտու դաշտի արեւելեան ծայրն գրեթէ Տիատինու կէտիկ անուն դաշտաձեւ թեւն ի միմեանց կու բաժանէ զլերանց շարն, որոյ միւսոյ կողման ստորոտէ մինչեւ ի Մասիս լեառըն նոյնպէս դաշտ է։ Եթէ զԱպահունեաց երկրի սարն որ ի Մասիս լեռնէ այնչափ հեռի է՝ պարտ էր Մասիս կոչել, զՍուկաւ, զՆըպատ և այլ լերինս եւս պարտ էր կոչել Մասիս, զի սոքա աւելի մօտ են Մասեաց։ Ապա Բուզանդայ ասելն, «Յերկրին Ապահունեաց, յոտին մեծի լերինն Մասեաց» միայն Սիփան սարի համար է, քանզի նոյն պատմիչ այլուր զՄասիս «Սարարատեան լեառն» կ'անուանէ։ Սիփան անուն այն լերան համար՝ յետոյ յայլազգեաց հընարուած կու կարծուի. զոր օրինակ եթէ ըզ Սիփան գրեմք Սի–պան Թրգերէն լեզուէ ի Հայ կու թարգմանուի երեսուն տանիք։ Նոյն լե-

զուլ մէջ լերանց և բլրոց հարթ տարածեալ գագաթներն եւս փոխաբերութեամբ կ'անուանին տանիք ։ Ուրեմն Սիփանայ Հայերէն անուն այն է՝ զոր Բուզանդ կու յիշէ ։

Թովմայ Արծրունի եւս զԱրտամետ աւան նկարագրելով ասէ ․ « Ընդդէմ հայեցած ունելով զմեծ լեառնն Մասիս , բարձրագագաթն ձիւնալից ամպատակափառ իբր զթագաւոր մեծավայելուչ պատուական աւեօք զուարճացեալ ի մէջ նախարարութեանց » եւ ։ Վանայ ծովն ի բարձրագագաթն լերանց շրջապատեալ է , միայն ի Սիփան սարի հիւսիսային կողման Ապահունեաց դաշտի ծայրն կու հասնի յեզր ծովուն , և այն եւս արեւելեան կողմէն կու տարածի դէպ յարեւմտեան կողմն , և Արարատեան լեառն Նորա հիւսիսային կողմն է ․ իսկ Արտամետն դրեթէ յափն ծովուն է , և լեառն Սիփան Նորա յարեւմտեան հիւսիսային կողման ։ Դարձեալ յափն ծովուն սարերն իջած է մինչեւ ի յատակ ծովուն , հանդիպահայեաց Արտամետ աւանի ։ յԱրտամետէ մինչեւ ի լեառն Արարատ եօթն աւուր ճանապարհ է ։ Եթէ ի մէջ երկոցունց հարթ և դիւր դաշտ լինէր , դարձեալ Մասիս կու միար անտես , և կամ շատ դժուարաւ կ'երեւէր , թող թէ լերանց շարն ։ Ուրեմն Թովմայի Արծրունւոյ և Բուզանդայ Մասիքն կամ Մասեաց Ոտն ստուգիւ Սիփան սարն է , ոչ թէ Արարատեան լեառն ։ Թովմայ Արծրունի զԱրարատեան լեա-

ուրն եւս կոչէ Մասիք, և զնորա ստորոտն նոյն Թովմայ և Յովհաննէս Կաթողիկոս կոչեն Բուն Մասեաց ։

Սիփան սարի հարաւային կողման Բզնունեաց գաւառի դաշտն է․ յարեւելեան կողման՝ ծովն է, ի հիւսիսային և յարեւմտեան կողման Ապահունեաց կամ Վերին–Պուլանուխայ դաշտն է ։ Այս լերան ադիք դէպ յարեւմտեան հարաւ բաւական կ'երթան, և ապա դաշտաձեւ փոքր մասն մի ի նոցանէ ոլորուելով կու տարածի դէպ ի հարաւ, և կու կցուի ի Գիլէճան լեառն, և դարձեալ կ'անցնի կէս ժամու ճանապարհաւ, և նոյն ուղղութեամբ տարածուելով կու միանայ բարձր սարի մի հետ, և կու ձգի մինչեւ ի Տարօնոյ ձորի կամ Չըխուրի հիւսիսային կողմ, և անտի մի ծայրն դէպ յարեւելս դառնալով և զԲզնունեաց գաւառն յիւր ծոց առնլով կու միանայ ընդ Նեբրովթ կամ Նէմրուտ լերին ։ Իսկ միւս ծայրն յիւր վերայ Քոսոր անուն գաւառ մի ձեւացուցանելով կու դառնայ դէպ ի հիւսիսային արեւմուտս ։ Գիլէճան լերան հիւսիսային կողմն Վերին–Պուլանուխայ կամ Ապահունեաց դաշտն է․ իսկ հարաւային կողմն Ներքին կամ Ստորին–Պուլանուխն է ։ Ստորին–Պուլանուխայ հարաւային կողմն վերոյիշեալ Քոսորն է, և Քոսորայ հարաւային կողմն Տարօնոյ դաշտն է ։ Յարեւելեան կող-

ման բազկին որ կու գայ ի Սխման սարէ և միանայ ընդ Պիլէճան սարի՝ կայ Նազկայ կամ Գուսայ լիճ, որ գետ մի կ'արձակէ դէպ ի հարաւային արեւելս. այս գետ կ'երթայ Խըլլաթ աւանի հարաւային կողմն ի Կարմունջ գիւղ և կու մտանէ ի Բզնունեաց ծով: Այս լճէն կէս ժամու հեռի, հարաւային կողմի լերան ստորոտէն երկու երեք ակունք բղխելով կու կազմեն փոքր գետ, որ կու գայ խառնուի ի լիճն: Ի վեր անդր յիշեալ Ներբոլթ լերին կայ փոս մի անհնարին խոր և ընդարձակ, որոյ չորս կողմէն լերան քարաժայռկողերն ի Բզնունեաց դաշտի հաւասարութենէն մինչեւ ի գագաթ լերին բարձրացած են. երկու կամ երեք ժամու ճանապարհաւ լինի իջանել ի վայր, և այն մեծաւ դժուարութեամբ: Ի միջոցի այն ընդարձակ փոսոյ կան հինգ լիճք, յորոց մին, ըստ պատմելոյ մօտաւոր գիւղացւոց, իբրեւ ժամու միոյ և կիսոյ ճանապարհաւ մեծ է, և միւս չորքն՝ փոքր: Ասեն թէ Տարօնոյ ձորոյ կամ Ջրխուրի արեւելեան կողման ծայրի ականց ջուր ընդ երկրաւ կու գայ այն լճերէն: Նէմրուտ սար ի հարաւային կողման չղթայիւ միով կցի ընդ Գրգուռ սարին: Ի մէջ Բաղէշու արեւմտեան լերանց հիւսիսային ծայրերու և Գրգուռայ կայ դաշտ մի բարձր, Ռահուայ անուն, որոյ արեւմտեան կողմի ջրեր ի Տարօնոյ ձոր իջանե-

լով կու խառնուին ի Մեղրայ կամ Մեղտայ գետ․ իսկ հիւսիսային և արեւելեան կողմանց ջուրք իջանեն ի ծովն Բզնունեաց, և ի հարաւային կողման գետ մի կազմուելով և երկու ժամու ճանապարհ ընթանալով իջանէ ի Բաղէշ։ Ռահուայ՝ ի Գրգուռ սարէն սկսեալ իբր ժամու կիսոյ ճանապարհ ի հարաւային արեւելս, և նոյնչափ ի հարաւ՝ զլերանց չարս և զմասունս նոցա ի միմեանց բաժանէ։ Բայց ի նորա հարաւային կողմէն սկսելով, Բաղիշոյ արեւմտեան կողմէն կ՚անցնին վերոյիշեալ ջուրք, և չորեքտասան ժամու ճանապարհաւ յարեւմտեան հարաւ տարածուելով, կու հանին Խարզանու դաշտի հիւսիսային կողմն։ Եւ նոյն յորդութեամբ իբր յիսուն ժամու ճանապարհ ընթանալով ընդ արեւմուտս, զԳըզեխն, որ ի Թրքաց ասի Մօտկան, զԽոյթն, զՍասուն, զԽիան և զԿուլփ կամ Խուլփն, ամբողջ գաւառներ, նաեւ զմասն ինչ ի Լճէ, ի Հայինի կամ Հէնէ և Պաղըր–մատէն գաւառայ յիւրեանց մէջ առնլով կու հասնին ի Ճապաղ–ջուր գաւառի հարաւային կողմն, և անտի դառնալով դէպ ի հարաւ երբեմն յայսկոյս և երբեմն յայնկոյս խոտորելով Ծընկոյշ կամ Զընգուշ գաւառի արեւելեան կողմէն կ՚անցնին, և պտոյտ առնելով կու հասնին Տիգրանակերտու յարեւմտեան կողմն դաշտ կամ յանապատն Արաբիոյ։ Թէպէտ

որչափ յիշեալ դաշտ բաւական տեղ զլերանց չորս ի միմեանց կու բաժանէ, և իբրեւ ընդ-նեղուց անցանելով զՏիգրանակերտի դաշտն կու կցէ ընդ Արաբիոյ անապատին, սակայն արեւմտեան կողմի ջրերն կու տայ Եփրատայ, և զարեւելեանն՝ Տիգրիսու: Ապա ի Գարաճայ սարն կու սկսի Տիգրանակերտի հարաւային արեւմտեան կողմէն, և հարաւային կողմէն անցնելով և ման առնլով, կ՚երթայ առ լերամբն և յամնեանն դեկտեմբերի յարեւելս տարածուելով կու հասնի յեզր Տիգրիս գետոյ եօթն ժամու ճանապարհաւ ի Սղերդէ, ընդ արեւմտեան հարաւ: Այս լերանց հիւսիսային կողման են Տարօնոյ ձոր, Տարօնոյ դաշտ, Գինճ և Պօկլան կամ Բալգ-գաւառներն: Ի հարաւային կողման՝ Արզն որ է Խարզան, Նփրկերտ որ է Սըլիվան, Հազրոյի, Լճէու, Հայինի կամ Հէնէու և Պադըր-մատէնու գաւառներն: Իսկ յարեւմտեան կողման շարք լերանց կու տարածին մինչեւ յափն Եփրատ գետոյ՝ զՉընգուշ և զՊուճախ գաւառներն յիւրեանց մէջ պարունակելով: Ի սոցա հարաւային կողման է Արաբիոյ անապատն, և ի հիւսիսային կողման՝ Խարբերդու կամ Քար-բերդու երկիրն: Այսպէս ահա գօտիք և մասունք լերանց յԵփրատայ գետոյ եզերաց սկսեալ շրջան առնլով դարձեալ կու գան յափն Եփրատայ: Ուստի և ջուրք եւս

լերանց այս գաւառայ և գիւղից կու թափին ի Մուրատ և յԵփրատ։

---

## Դ.

### ՅԱՂԱԳՍ ԱՐԱՐԱՏԵԱՑ ԴԱՇՏԻՆ, ԵՐԵՒԱՆ ԵՒ ՏՓՂԻՍ ՔԱՂԱՔԱՑ ԵՒ ՆՈՑԻՆ ԳԵՏՈՑ

Արարատայ դաշտն կայ յԱլաշկերտու դաշտի հիւսիսային և յարեւմտեան հիւսիսային կողման, իբր երեքտասան ժամու ճանապարհաւ։ Արարատայ դաշտի շինութիւն Երասխ գետով է. քանզի այս գետ անցանելով ընդդաշտն, աստի և անտի բազում և մեծամեծ առուս արձակելով կ'ոռոգանէ գրեթէ զբոլոր արտորայս։ Ի ժամանակս երաշտութեան իսկ այն դաշտի բնակիչք ջրոյ կողմանէ նեղութիւն չեն զգար։ Թո՛ղ զայս, յիգտիր քաղաքէ մինչեւ ի մայր Աթոռն մեր, ի Ս. Էջմիածին, անցայ բազում մեծ և փոքր գետեր, որ կու գան այնր դաշտի հիւսիսային կողմի Արագած սարէն։ Գետ մի եւս կու գայ, Երեւան քաղաքի հարաւային արեւմտեան լեռներէն, և քաղաքին հարաւային կողման առաջոյ անցնելով և դէպ ի հարաւ խոտորելով կու խառնուի յԵրասխ գետ։

Տփղիս քաղաք Արարատեան դաշտի արեւմտեան հիւսիսային կողման է, քառասուն

և վեց ժամու ճանապարհաւ հեռի։ Կուր գետոյ ակունք կու բղխին Տփղիս քաղաքի արեւմտեան, արեւմտեան հիւսիսային, և արեւմտեան հարաւային կողմանց սարերու ստորոտներէ։ Ապա յերից կողմանց բազում մեծ և փոքր գետեր գալով և իրարու հետ միանալով կու կազմեն զԿուր գետ։ Ի հինգերորդ ժամու շոգեկառօք ի Տփղիս քաղաքէ մեկնեցաք, և ի մուտս արեւուն հասաք ի լերանց գօտին, որոյ արեւելեան կողմի ջուրեր կ'իջանէին ի Կուր գետ, և արեւմտեան կողմի ջուրեր ի Սեաւ ծով։ Կուր գետ կու գայ Տփղիս քաղաքի միջոյ կ'անցնի, և դէպ ի հարաւային արեւելեան կողմն ընթանալով, կ'անցնի ընդ դաշտ մի մեծ և ահագին, ամուլ և անպտուղ, բայց թէ այնուհետեւ ուր երթայ՝ ինձ անծանօթ է։ Վասն անպտղութեան այնր դաշտի, ուրեք ուրեք եւեթ գիւղեր կան։ Ընդ մէջ Կուր և Երասխ գետոց երկու միջակ գետեր կ'ընթանան դէպ յարեւմտեան կողմն։ Մին Երեւան քաղաքի հիւսիսային լերանց ստորոտէ բղխեալ, ի Քառասնակնեայ (Գըրգ չէշմէ) անուն աղբիւրներէն կու բաղկանայ, և հետզհետէ աստի և անտի զջուրսն յինքն ընդունելով և յորդելով կ'երթայ։ Իսկ միւսն գայ ի ձորոց որ աստի և անտի Տկլիճան քաղաքի։ Այս վերջինս բաւական մեծ է։

## Ե.

### ՏԻԳՐԻՍ ԳԵՏ

*Տիգրիս է գետ մեծ որ կոչի Տիգրանակերտի ջուր կամ գետ, քանզի կ'անցնի Տիգրանակերտի առաջոյ։ Սորա միոյ բազկի ակունք կու բղխին Բալուայ հարաւային կողմի լերանց ստորոտներէ, և միւս եւս բազուկ Զընգուշայ գաւառի կողմէն գալով և միանալով ընդ առաջնոյն կ'անցնի Պագըր-մատէնի հիւսիսային և արեւելեան կողմէն և խոտորելով յարեւմտեան հարաւ, կու դառնայ յարեւելս կոյս, և ուրիշ գետեր եւս յինքն ընդունելով և անցանելով ի հպոյ Տիգրանակերտ քաղաքի հիւսիսային կողման կ'երթայ յարեւելս հարաւոյ, եօթն ժամու ճանապարհաւ ի Սղերդ քաղաքէ ի վայր յարեւմտեան հարաւ, և կու խառնուի ի բուն Տիգրիս գետ։ Բայց չունի օգուտ երկրագործաց, միայն հազարաւոր լիտր բեռամբք ծանր տկալաստներ* (քէլէկներ) *յիւր վերայ բարձեալ կու տանի ի Տիգրանակերտէ մինչև ի Մըսուլ և ի Պաղտատ։ Ի Տիգրանակերտ քաղաքէ յարեւելս կոյս վեց ժամու ճանապարհաւ հեռի Ամպար-չայի* (*)

(*) Թուի Թէ Բուզանդայ Մամբրէն փոխուելով եղած է Ամպար, ուստի Ամպար չայն Թուի լինել Մամուշեղ գետն։

անուն փոքր գետ մի Լճէ գաւառի հիւսիսային լեռներէն բղխելով և դէպ ի հարաւային արեւելս ընթանալով, յետ գործելոյ օգուտ բազում արտորէից և դաշտաց, կու խառնուի ի Տիգրանակերտի գետ։ Եւ անտի դարձեալ երթալով յարեւելս կոյս եօթն ժամու ճանապարհաւ, կու հանի ի Շակլաւիզու գետ։ Այս երկու գետերու մէջտեղ Գուռու-չայ և Կոռըխչի անուն երկու փոքր գետ եւս կան։ Սա եւս ունի Ամպար-չայի մեծութիւն։ Մի մասն նորա կու բղխի Նփրկերտ (Մուֆարկին) այն է Մարտիրոսաց քաղաքի արեւմտեան հիւսիսային կողմէն երեք չորս ժամու ճանապարհաւ հեռի ի քաղաքէն։ Իսկ միւս մասունք նորա կու բղխին նոյն Նփրկերտու գաւառի հիւսիսային լերանց ստորոտներէ։ Այս գետ եւս դէպ ի հարաւային արեւելս ընթանալով և օգուտ բազում գործելով դաշտաց կու խառնուի ի Տիգրանակերտի գետ, և անտի երկու ժամու ճանապարհաւ դէպ ի հարաւային արեւելս կու հանի ի Պըշէրիի գետ, կամ ի Բաթմանայ ջուր, որ յամարան եւեթ տայ հուն։ Այս գետոյ մի բազուկ ի Սասուն գաւառէ, միւս եւս բազուկ ի Խիան գաւառէ և երրորդ բազուկ մի ի Կուլփ կամ Խուլփ գաւառէ գան, և երեքին եւս միանալով լինին գետ, որ կ'անցնի առ Երի Պըշէրկու կամ Պըշէրիի դաշտի արեւմտից կողման, և դէպ

ի հարաւ ընթանալով կու միանայ ընդ Տիգրանակերտի գետոյ, և ապա իբր ութ ժամու ճանապարհաւ երթալով ուղղորդ Պըշէրկու դաշտի միջոյ դէպ յարևելս, կու համնի ի Ռընտուանայ գետ, որ կու գայ ի Խոյթ և ի Գզել։ Ցետոյ կ'անցնի Խարզանու դաշտի արևմտեան կողմի եզրէն և գնայ դէպ յարևելս կոյս Ռընտուան աւանի հարաւային կողմէն, և անոր առաջոյ անցնելով, իբր հինգ քառորդ ճանապարհաւ երթայ խառնուի ի Տիգրանակերտի գետ։ Այս գետ գրեթէ հաւասար է Պըշէրկու գետոյ, բայց երկուքեան ևս սակաւ օգուտ կու գործեն երկրագործաց։ Իսկ հարաւային կողմանէ Տիգրանակերտի երկու կամ երեք փոքր գետակք միայն կու գան, և կու միանան ընդ նմա, քանզի ի հարաւային կողման չկան մեծամեծ լերինք որ մեծ գետեր արձակեն։

Իսկ ի Ռընտուանու գետոյ ութ ժամու ճանապարհաւ յարևելս կոյս արքունի ճանապարհաւ կու համնի Պաշուրայ ջուրն, որ կու գայ ի միջոյ Բաղէշ քաղաքի։ Անտի դառնալով ընդ արևելս, երեք ժամու ճանապարհաւ կու համնի ի Գեզերու ջուր, որ կու գայ ի Տատիկ և Աղնուաց-ձոր գաւառաց։ Այս երկու գետք ևս գրեթէ հաւասար են Ռընտուանու գետոյ։ Այս վերջին երկու գետոց համար յետոյ կու խօսիմք։ Իսկ ի Գեզերու

գետոյ դէպ ի հարաւային արեւելս երկու ժամու ճանապարհ է մինչեւ ի Սղերդ ։

---

## Դ.

### ԲԱՂԻՇՈՅ ԳԵՏ

Թահուայ անուն տեղէն գետ մի կազմուելով և երկու ժամու ճանապարհաւ դէպ ի հարաւ երթալով կու մտանէ ի Բաղէշ ։ Միւս եւս գետ ի հիւսիսային արեւմտեան կողմանէ գալով կու միանայ ի քաղաքին ընդ միւսումն ։ Փոքրիկ գետ մի եւս արեւմտեան հարաւային կողմանէ կու գայ և անցնելով ընդ թաղ մի փոքր, խառնուի ի միւսն ։ Միւս եւս այլ գետ արեւելեան կողմանէ կու գայ, և անցնելով առ քաղաքաւ և առ տամբք, կու միանայ ընդ միւսումն ։ Ապա անդուստ ի վայր երեք քառորդ ժամու ճանապարհաւ կու հանի յայն գետ որոյ ակունք կու բղխեն Փարխանդ գիւղի արեւելեան կողմի լերան ստորոտէն, և մեծ օգուտ գործելով այնմ գեղջ իբր միոյ ժամու ճանապարհ, և դէպ յարեւմուտս կոյս երթալով կու խառնուի ի Բաղիշոյ գետ ։ Իբր քառորդի միոյ ճանապարհաւ Փարխանդ գիւղի հարաւային կողման այլ փոքր գետ կու գայ ի հարաւային արեւելեան կողմանէ և կու խառնուի ի գետն որ գայ ի Բաղիշոյ .

սակայն չունի ակունս, այլ առուներէ և յաղբերաց կու կազմուի, և ամառայնի դըրեթէ բոլորովին կու ցամաքի ։ Այս գետ որ գայ ի Բաղիչոյ՝ ընթանայ ընդ արեւմուտս հարաւոյ, և յերկուց կողմանց փոքր գետեր կամ առուներ ընդունելով կ'երթայ երկու ժամու և կիսոյ ճանապարհաւ ի Սղերդէ ընդ արեւմուտս հարաւոյ, կու միանայ ընդ Գեղերու գետոյ ։

---

## Է.

### ԳԵՂԵՐՈՒ ԳԵՏ

Արդէն ասացաւ թէ Ռահուան ի Գրդուասարէ սկսեալ իբր ժամու միոյ և կիսոյ ճանապարհաւ յարեւելս հարաւոյ, նոյնչափ եւս դէպ ի հարաւ, զլերանց չղթայս և զմասունս ի միմեանց բաժանէ ։ Ջհարաւային կողման լերանց արդէն խօսեցաք անդ ։

Ռահուայու հարաւային արեւելեան կողմի լերանց շարք սկսելով, երկու ժամու և կիսոյ ճանապարհաւ նոյն ուղղութեամբ տարածելով կու հասնին Աղնուաց-ձորոյ կամ Նխջէլ—տէրէի դաշտի հիւսիսային և արեւելեան կողմն, քանզի դաշտն կալով ի մէջ այս երկու կողմանց՝ բաժանէ զշղթայն յերկուս ։ Յետ այնորիկ նոյն ընդարձակութեամբ, նա մա-

*նաւանդ հետզհետէ ընդարձակելով կու տարածի դէպ յարեւմուտ հարաւ: Այս լերանց յարեւմտեան կողման Սալնոյ-ձորն է, որ ի Բաղէշ քաղաքէ երկու ժամու ճանապարհաւ դէպ ի հիւսիս տարածելով Ռահուայի հետ կու միանայ: Իսկ Ռահուայ դաշտավայրն եռանկիւնի է, եւ հարաւային անկիւնն միացեալ Սալնոյ-ձոր անուն ձորագաւառին հետ: Յարեւմտեան կողման կու միանայ Չըխուրի կամ Տարօնոյ ձորոյ հետ, եւ Չըխուրն կու միանայ Տարօնոյ դաշտի հետ: Տարօնոյ դաշտ իբր երկոտասան ժամու ճանապարհաւ կու տարածի դէպ յարեւմուտս: Իսկ հիւսիսային մի անկիւնն դէպ ի հիւսիս տարածելով Բզնունեաց դաշտի հետ կու միանայ. յետոյ դաշտին հանդերձ կու դառնայ դէպ յարեւմուտս, եւ կու հասնի ի Նազկայ լիճն եւ ի փոքր Թեւն արեւմտեան կողման դաշտաձեւին զոր կանխաւ յիշեցաք, եւ որոյ ի միւս կողման Ապահունեաց դաշտն է, որպէս ցուցաւ ի վերոյ: Միւս անկիւն վերոյիշեալ դաշտավայրին ի ծովեզրէն դէպ ի հարաւային արեւելս տարածուելով կու հասնի յայն գետ զորմէ Յովհաննէս Կաթողիկոս կու գրէ թէ* « Ինքն առաջնորդէր բազմութեան զօրացն ընդ լեռնակողմն անջրդի, ապառաժ, մացառախիտ, քարաժայռ, անպողոտայ, ափափայ գնալով զօրն ամենայն զի յոլովք ի ծարաւս իւրեանց կթուցեալք սատակէին. այլ եւս

նորին ամենայն վայրագնաց Ջլաձիգ խղմամբ տաժանեալ, վաստակեալ, լքեալ, թալացեալ, թանձրադանդաղ ձանձրութեամբ, և հատկեալ հազիւ հասանէին ի ջուր ինչ գեղջ մի Թուխ անուն »։

Ցայն Ջրոյ կամ գետակը ժամու և կիսոյ կամ հինգ քառորդ ժամու ճանապարհաւ գնալով հետի, մարթ է հասանել Աղնուաց-ձորոյ դաշտի հիւսիսային ծայրն, ի Կոտոմ գիւղ։ Իսկ ի լերանց արեւելեան կողման Աղնուաց-ձորոյ դաշտն է, որ յԱղձնեաց աշխարհի գաւառներէ մին է, և է Աղնուաց-ձոր խորբենացւոյն։ Վերոյիշեալ Կոտոմ գիւղի համար Թովմայ Արծրունի կու գրէ. « Եւ յառնելն արքայի (Գագկայ) դայսակն յաճախ պատերազմաւ ի վերայ Ասորեստանի, գաւառս բազումս ամրոցօքն հանդերձ յինքն ձգեալ կորզեաց։ Եւ առեալ մերձ ի դրունս Ասորեստանի ամրոց մի յիշխանութեանն Աղձնեաց ի գեօղն Կոտոմ կոչեցեալ, լինելով անպահականաբար զՍուբարեկն կոչեցեալ ազգի, սպառսպուռ կորուսեալ ջնջէ զազգն, և զշինուածս ամրոցին ի հիմանց տապալեալ, զքարինս նորա բարձեալ բերէ ի վերայ մկանաց ծովուն, ընծայելով ի նիւթ շինութեան սրբոյ եկեղեցւոյն (այսինքն վանուցն Աղթամարայ) կանգնելով փոխանակ բազմաձեւ պղծալից յարկացն զտաճար փառաց »։ Ի Պաղտատէ, ի Մուսուլէ, ի Քրդաստանէ, ի Կորդուաց աշխարհէ և յայլ և այլ կողմանց, եթէ ճանապարհորդ կամ կարաւան ի Մուշ, ի Կարին, ի Խնուս, ի Պուլանուխ, յԱլաշկերտ, յԱրարատ, ի Վան և յայլ կողմանս երթալու

լինի, Կատոմ գիւղին յառաջոյ անցանելոց է, վասն որոյ դուռն կոչի։ Բաղէշ քաղաքէ ևս կարէ անցանել, բայց ոչ այնչափ որչափ ի Կատոմայ առաջոյ։ Աղնուաց-ձորոյ կամ Կիւզէլ-տէրէ դաշտի մի ծայրն տարածեալ է դէպ յարևմուտս հարաւոյ, և միւս ծայրն դէպ յարևելս հիւսիսոյ։ Երկայնութիւնն իբր երկու ժամու և կիսոյ ճանապարհ է, իսկ լայնութիւնն տևէ քսան կամ քսան և հինգ րոպէ. յերկուց կողմանց բարձրագագաթ լերինք տարածեալ են ընդ երկայնութիւն դաշտին, և անցանեն երթան անդր զծայր դաշտին։ Երկու կողման լերանց ստորոտներէ իրարու մօտ բազում ակունք կու բղխեն, որոց ջրերն այնքան վճիտ և յստակ են, և յատակի քարերն այնպէս պլիտակ և փայլուն կ'երևան, մինչ զի կու կարծուի թէ նոցա վերայ ջուր չանցնիր։ Այս ակունք յերկոցունց կողմանց հոսելով ի դաշտին կու կազմեն բաւական մեծ գետ, որ իբր երեք ժամու ճանապարհաւ նոյն ուղղութեամբ երթալով կու միանայ ընդ գետոյն որ գայ Տատիկ գաւառի դաշտէն։ Բայց ակունք Աղնուաց-ձորոյ դաշտին օգուտ կու գործեն մինչդեռ իրարու հետ միացեալ չեն, իսկ յետ միանալոյ այն դաշտին օգուտ չունին. սակայն Տատիկ ձորագաւառի հինգ գիւղից մեծ օգուտ կու գործեն։ Որովհետեւ այն դաշտի հիւսիսային

ծայրն իբր կէս ժամու ճանապարհաւ դէպ ի հիւսիսային կողմն խոնարհեալ է, այն կողման ջրեր դէպ ի հիւսիս հոսելով, Կոտոմ գիւղի արեւմտեան կողմէն կ'անցնին հուպ, բայց մին առու եւեթ է։ Իբր երկու ժամու ճանապարհաւ ի Կոտոմ գիւղէ՝ հարաւային արեւելեան կողմի բարձր լեռներու ստորոտներէ ակունք բղխելով, գետ մի կու կազմեն, որ գալով, և անցանելով ընդ մէջ Կոտոմ գիւղի, կու միանայ ընդ առուին որ կու գայ աստորին կողմամբ գիւղին ի Կիւզէլ-տէրէէ, և կ'երթայ Թուխ անուն գիւղի արեւելեան կողմէն կ'անցնի, և իբր քառորդ ժամու ճանապարհաւ յառաջ երթալով կու թափի ի ծով։ Եւ ահա այս գետոյ համար ասէ Ցովհաննէս Կաթողիկոս թէ « Հալու հաստատէին ի ջուր ինչ գեղջ մի Թուխ անուն »։ Կիւզէլ-տէրէի կամ Աշնուացձորոյ դաշտն ունի ոչ միայն զայն պատուական ջրեր, այլ ի գարնան եղանակի ունի և մարգագետիններ, ազգի ազգի կանաչ խոտերով, երփն երփն ծաղկօք այնպէս զարդարեալ մինչեւ զտեսողսն հիացուցանել։ Տափկ դաւառի մի մասն ձորադաւառ է, և միւս մասն՝ փոքր և բոլորակ դաշտ, և ունի միոյ ժամու ճանապարհի տարածութիւն, շուրջանակի պատեալ ի բարձրագագաթ լերանց։ Ի հարաւային կողման դաշտին Նազ անուն բարձր լերան ստորոտէ իբր քսան բոպէի ճա-

նապարհաւ ի միմեանց հեռի երկու ակունք բղխելով կու կազմեն երկու փոքր գետակ. մին՝ յոյժ սակաւ օգուտ կու գործէ արտորէից, և միւսն՝ բաւական օգտակար է. երկոքեան ևս դէպ ի հիւսիս ընթանալով ի միջոցի դաշտին իրարու հետ կու միանան, և կ'երթան դէպ յարեւմուտս հիւսիսոյ: Բայց յայս երկուց գետոց կան այլ ևս առուք, որ զարտորայս ոռոգելոյ անգամ չեն բաւական: Յիշեալ լեռնէ ուրիշ մեծ ակն մի բղխելով կու կազմէ այնչափ յորդ գետ որ ի գարնան եղանակի ճանապարհորդք դժուարաւ կարեն անցանել ընդ այն. բայց հետզհետէ նուազելով մինչև ի Խաչվերաց գրեթէ բոլորովին կու ցամաքի: Մշտաբուղխ միայն յառաջադոյն յիշուած երկու ակունք են, որք իրարու հետ միանալով և իբր երկու ժամու ճանապարհաւ երթալով կու միանան ընդ գետոյն որ կու գայ յԱղնուաց-ձորոյ և կ'երթայ կու խառնուի ի գետն որ կու գայ ի Բաղիշոյ. ապա կ'երթայ չորս ժամու ճանապարհ ի Սղերդէ յարեւմուտս հարաւոյ, և կու խառնուի ի Տիգրիս: Գետն որ գայ ի Ցաւիկ և Աղնուաց-ձոր գաւառներէ կ'անցնի ի Գեղեր գիւղի առաջոյ, վասն որոյ այն երկրի բնակիչք և ճանապարհորդք կ'անուանեն զնա Գեղերու ջուր: Նոյնպէս գետն որ կու գայ ի Բաղիշոյ կ'անուանի Բաղիշոյ ջուր. վասն զի կ'անցնի Բա-

ջուր կամ Պաշուր գիւղի առաջոյ: Այս երկու գետք եւս ի Ցատիկ գաւառէ և ի Բաշէշ քաղաքէ մինչեւ ի Տիգրիս գետ յոյժ սակաւ օգուտ կու մատուցանեն երկրագործաց:

Ոմանք Բաղէշ քաղաքի համար կ'առասպելաբանեն թէ քաղաքէն կէս ժամ հեռի ի հիւսիսային կողման, էշ մի ի ցրտոյ մեռանելով սառած է, և աստի եղած է անունն Բաղէշ, այսինքն՝ պաղ էշ: Իսկ Յովհաննէս վարդապետ, ի Փարխանդ գիւղէ Բաղիշոյ, Պատրիարք Կոստանդնուպոլսոյ, ի վերջ Տարօնոյ պատմութեան Զենոբայ զանունն Բաշէշ կու համարի եղած բդեշխ բառէն, վասն զի, ասէ, Բաղէշ չինեցաւ Արծրունի բդեշխներէ ի տեղին Սալնոյ-ձոր: Բայց չասեր թէ ուստի առնլով գրած է, յաւանդութենէ՞ թէ յազգային հին պատմութեանց: Փաւստոս Բուզանդացի, էջ 38, կու գրէ « Եւ առին զնա և ածին առ Թագաւորն Տիրան, ի գաւառն Աղձնեաց ի Բառէջ աւան »: յԱղձնեաց աշխարհին բաց ի Բաղիշոյ Թագաւորանիստ ուրիշ քաղաք կամ աւան չկայ: Թէպէտ Սղերդ, Զոկ, Հզու և Ոռնոտուան յԱղձնեաց աշխարհի են, սակայն Հայաստանի սահմանագլուխն են, օդն է տաք, և ըմպելոյ ջուրն՝ սակաւ, տաք և անհամ. վասն այսորիկ թուի ինձ թէ Բաղէշ՝ Բառէջ անուանէ եղած է, կամ Թերեւս բդեշխք Արծրունեաց զԲառէջ աւանն ընդարձակելով զանունն փո-

խած են Բդեշխակերտ · բայց Բուզանդայ Բա-ռէջ աւանին համար կու պնդեմ ասելով թէ ճիշդ Բաղէշն է ։

Աղնուաց–ձորոյ դաշտի արեւելեան կողմէն իբր երեքտասան ժամու ճանապարհաւ լե-րանց շղթայ մի կու տարածուի դէպ ի հարա-ւային արեւելս, և միայն Տիգրիս գետոյ ճիւ-ղերով կու բաժնուի ի Կորդուաց լեռներէ ։ Ի մէջ այս լերանց շղթայի հիւսիսային կողման և Վանայ ծովուն է Կարճկան անուն գաւառն, և ի հարաւային կողման է Տատիկ գաւառի երեք մասն և Խորորսու ձորագաւառն ։

---

## Ը.

### ԱԿՈՒՆՔ ՏԻԳՐԻՍ ԳԵՏՈՅ

Բուն Տիգրիս գետոյ ուղղորդ ակունք կու բղխեն Կեցան ձորագաւառի հիւսիսային ա-րեւելեան կողմի լերանց ստորոտներէ, և կու կազմեն փոքր կամ միջակ գետ մի ։ Փոքրիկ գետ մի եւս կու գայ ի Նոյն գաւառի հիւսի-սային կողմէն Բեղու անուն Հայոց գիւղի հիւ-սիսային կողմի լերան և սարերու շղթայի ստո-րոտներէ ։ Փոքրիկ գետ մի եւս կու գոյանայ Յուրանց անուն Հայոց գեղջ, ձորագաւառի երկու կողմանց սարերու և լերանց շղթայի ստորոտներէ, դէպ ի հարաւային արեւելս և

իբր երկու ժամուց և կիսոյ ճանապարհ երթալով կու միանայ միւս երկոցունց հետ, և լինելով մի գետ՝ իբր երեք կամ չորս ժամու ճանապարհաւ կ'երթայ դէպ ի հարաւ, յինքն ընդունելով զգետն որ կու գայ յԱռուենիցձորոյ կամ ի Կարկառու ձորագաւառէ։ Կեցան ձորագաւառն Բաշէշ քաղաքի հարաւային արեւելեան կողման է, իբր հնգետասան ժամու ճանապարհաւ հեռի։ Բելու անունով Հայոց գիւղն ի Կեցան գաւառի հիւսիսային կողմն է իբր երեք ժամու ճանապարհաւ հեռի։

Կարկառ անուն ձորագաւառն գրեթէ ըսկըսելով յարեւելեան եզրէ Տիգրիս գետոյ և հետզհետէ բարձրանալով կու տարածի դէպ յարեւելս։ Ծագէ ի ծագ եթէ չէ աւելի քան ութ ժամու ճանապարհ, պակաս եւս չէ։ Վերին ծայրի Հայոց գիւղի անուն Յաղթ է. այնքան բարձր և ցուրտ, որ նոյն գիւղացիք միայն գարի և տարեկան (չավդար) կու սերմանեն։ Իսկ եթէ այլ սերմանս սերմանեն, չտայ բերք։ Այս ձորագաւառի վերին ծայրն իբր երկու ժամու ճանապարհաւ ընդ երկու կու բաժանի. մին յարեւելս կոյս տարածելով կու հասնի ի Յաղթ, և միւսն դէպ ի հիւսիս տարածելով կու հասնի ի Կիճի անուն Հայոց գիւղ։ Յերկուց կողմանց երկու փոքր գետք գալով կու միանան. ի հիւսիսային կողմի լեռներէ սակաւ, իսկ հարաւային կողմի լեռնե-

րէ բաղում առուներ իջանելով և միանալով կու կազմեն գետ մի որ կ'երթայ ի Տիգրիս։ Այս ձորադաւառ շատ առուներ ունենալով կու կոչուի Առուենից-ձոր։ Այժմ երեք մաս բաժնուած է։ վերին կողմի մասն լինելով ընդ իշխանութեամբ վանայ՝ կոչուի Կարկառ յանուն Կարկառ գիւղի։ Միջին մասն լինելով ընդ իշխանութեամբ Սղերդու, կոչի Եղեգիս յանուն Եղեգիս գիւղի, և Թուրքերէն տափ Աղքիս։ Այլ գիւղք իստորին կողմանն՝ են ընդ իշխանութեամբ Բաղիշոյ. սոքա կից Կեցան գաւառի կ'անուանին Կեցան։

Թովմայ Արծրունի ասէ. « Տեսեալ տէրանցն Մոկաց եթէ բարձրացաւ ձեռն Գաղկայ ի վերայ ամենեցուն, յանուրս իւրեանց ապաստանեալ արգելին ի տալոյ Հարկս, իսկ մեծանուն իշխանն փափաղակի զօր գումարեալ ասպատակեալ յերկիրն Մոկաց և առեալ զկապուտ երկրին՝ դարձեալ գայ ի գաւառն անուանեալն Երխարկ, առնու անդ ըզ բերդն Պաղայ և փարչուաց, գայ ի ձորն Առուենից, առնու զայն եւս ամրոցն »։ Ի վանայ ի Մոկս երթալոյ մօտագոյն և դիւրագոյն ճանապարհն է ընդ մէջ Գաւաշու գաւառի։ Որովհետեւ ուրիշ կողմերէ գրեթէ ճանապարհ չկայ, և եթէ կայ եւս՝ դժուարամատոյց է, հեռաւորութիւնն լինի տասնապատիկ և աշխատութիւն՝ հարիւրապատիկ։ Երխարկ գաւառ ճիշդ Գաւաշն է։ Քանզի Պաղուանց անուն գիւղ անդ է, այն գաւառի բնակիչք այժմ եւս ըզ

գիւղն կ'անուանեն Պաղուանց, և ղբերդն՝ Պաղուանից բերդ։ Երեսուն և հինգ տարի առաջ Խան-Մահմուտ, անուանի քուրդն, կը բնակէր յայն բերդին, և այժմ աւերակ է բերդն։ Կէս ժամու ճանապարհաւ ի ծովէն, ի հարաւային կողման, կայ բլուր լայնանիստ և տափարակ, ուր կայր ժամանակաւ երբեք հարիւր երդէ բաղկացեալ գիւղ մի, իսկ այժմ խապառ աւերակ է, եկեղեցին միայն դեռ ողջ կայ։ Երկրացիք զբլուրն և զաւերակն միայն կը կոչեն Գաւաշ։ Ի հնումն աստ էր ոստանն Ռշտունեաց, և առ Գադկաւ գաւառն կը կոչուէր Երիւարք։ Մոկաց և Նարկառու սահմաններն իրարու դրեթէ կից են։ Մոկաց գաւառի ճանապարհ ուղղակի կ'իջնէ ի Նարեկ գիւղ։ Նոյնպէս ի Նարկառու Ցաղթ գիւղէն երկու ժամու ճանապարհ ընդ զառ ի վայր է Նարեկ։ Թովմայ Արծրունի այլուր ասէ «փութանակի եկն եհաս Ճիրաք ի գաւառն Ռշտունեաց և զզօրսն առխմբեալ ի ձորն Առուանից, ի սահմանս Մոկաց, և անդ գտեալ զճնակիչսն Ռշտունեաց, թափառականս անկեալ յանդորրս և ի մարդախոշոշ շանցն պնչերակերաց։ Յորոց վերայ սուր եդեալ կոտորէին և խուլն արեամբ զերկիրն»։ Ռշտունեաց մօտ և ի սահմանս Մոկաց, բաց ի Նարկառու ձորագաւառէն այլ ձոր չկայ, որ անուանի Առուանից կամ Առուենից-ձոր։ Աղնուաց-ձորոյ արեւելեան կողմի լերանց ի միջոցին մեծ, խոր և ընդարձակ ձոր է, ուր

ժամանակաւ Հայոց գիւղեր կային, և այժմ աւերակ են ։ Նոյն ձորի մէջ գետ մի կազմուելով կ՚ընթանայ դէպ ի հարաւային արեւելս ։ Միւս եւս գետ այն լերանց մէջ ուրիշ ձորէ դէպ ի հարաւ ընթանալով և միւսին հետ միանալով, կու դառնայ դէպ ի հարաւ, և անցանելով Շէն անուն Հայոց գիւղի մի առաջոյ, կու կոչուի Շէնայ գետ, յետոյ կու դառնայ դէպ յարեւելս հարաւոյ, Քլէփիկ, Գուլփիկ և Խորորս անուն Քրդաց գիւղերու հարաւային կողմէն կ՚անցնի, և ի Խորորս գիւղէ սակաւ ինչ ի վայր յինքն ընդունի միւս եւս գետ որ գայ յարեւմտեան հարաւային կողմէ և իբր քսան րոպէի ճանապարհաւ եւս յառաջ երթալով կու խառնուի ի Տիգրիս ։ Այն տեղէն ուր կու խառնուի սա՝ մինչեւ ի տեղին ուր կու խառնուի գետն որ գայ յԱռուենից-ձորոյ՝ երկու և կէս ժամու ճանապարհ է ։ Վերջին գետն ունի երեք ակունս, որք կու բղխին ի Խիզան գաւառի, արեւմտեան սահմանագըլխոյ Դարունց անուն գիւղի հարաւային արեւմտեան կողմի լերան ստորոտէն ։ Այս երեք գետերու մին հինգ րոպէ ի գիւղէն հեռի է, և միւսն տասն րոպէ. իսկ երրորդին ակն կու բղխէ յարեւմտեան հարաւային լեռնէն, իբր քսան րոպէ հեռի ի գիւղէն. և գետն որ կու բաղկանայ ի նոցանէ, ընթանալով դէպ ի հիւսիսային արեւելս վերոյիշեալ Խորորս գիւ-

դէն սակաւ ինչ ի վայր կու խառնուի ի Շինայ գետ ։ Խիզանու բոլոր գաւառի պաղաբերութեան և շինութեան պատճառ վերոյիշեալ երեք ակունք են , մանաւանդ ակնն որ տասն րոպէ ի Դարունց գիւղէ հեռի է ։ Ուստի առակ եղած է , Եթէ չեղնի Դարունից ակն , կ՚երեւա՞յ Խիզնայ վաստակ ։ Խիզան և Տատիկ գաւառներ միեւնոյն ուղղութեամբ ի Բաղէշ քաղաքի հարաւային արեւելեան կողման են , բայց մանաւանդ մօտ յարեւելեանն ։ Դարունց գիւղն երկու ժամու ճանապարհաւ Տատիկ գաւառի սահմանագլխէն հեռի է , և ութ ժամու ճանապարհաւ ի Բաղէշ քաղաքէ ։ Խիզանու գաւառն Մոկաց աշխարհի գաւառներէն մին է ։ Այս գաւառ է զոր Խորենացին կոչէ Իշոց գաւառ ։ Խիզան աւերակ քաղաքի անունն է , և նորա գիւղեր դեռ կու կոչուին գաւառ կամ գաւառներ ։ Շինի-ձոր անուն գաւառն Խիզան գաւառի հարաւային արեւելեան կողման է , և Տիգրիս գետ ընդ մէջ երկոցունց կ՚անցնի ։ Շինի-ձոր գաւառն երկրորդ Իշայր է ։ Թերեւս Իշայր՝ Իշոյ-ձորի փոխուած է , և Իշոյ-ձոր՝ Շինի-ձորի , կամ թէ ժամանակաւ նոյն գաւառի իշխան և բնակիչք զԻշոյ անուն չընդունելով յիւրեանց գաւառի վերայ փոխած են զանունն ի Շինի-ձոր ։ Նոյնպէս Սպարկերտ Շինի-ձորոյ հարաւային արեւելեան կողման է , և նա է առաջին Իշայրն ։

Սորա վանքէն միայն կոնդակի մէջ գրուած է թէ Բարդուղիմէոս առաքեալ զուրբ Աստուածածնայ պատկեր անդ բերելով և շատ սքանչելիս գործելով զանուն գաւառին կոչած է Սուրբ պատկեր, որ հետզհետէ փոխուելով եղած է Սպարկերտ։ Իսկ Թուրքերէն կ'անուանի Սպաէրտ։ Մամրտանք անուն գաւառն ի Սպարկերտու հարաւային արեւելեան կողման է, և Միջա գաւառ նա է։ Քանզի ի նորա մէջի Միջա անուն գիւղ կայ, որ դեռ կու կոչուի նոյն անուամբ։ Մոկաց գաւառն եւս Մամրտանք գաւառի յարեւելեան հարաւային կողման է, իբր քսան կամ քսան և երկու ժամու ճանապարհաւ հեռի ի Բաղէշ քաղաքէ, Շինի-ձոր, Սպարկերտ և Մամրտանք գաւառներն Նորդուաց լեռներու մէջ են, և չունին դետ կազմող ակունս. միայն գարնան ժամանակ, երբ ձիւնն կու հալի, ուղխք կամ հեղեղք կու կազմուին, և յետոյ դարձեալ կու ցամաքին։ Լերինք ի Նկեցան գաւառէ մինչեւ ի Մոկս այնպէս աղխեալ են, որ ոչ ձորերով ի միմեանց կու բաժանին, և ոչ այլով ինչ. ի հարաւային կողման վերոյիշեալ ձորագաւառներն են, և ի հիւսիսային կողման՝ Վասպուրական աշխարհի գաւառներ։ Մոկաց գաւառի հիւսիսային կողմի Նշերով անուն լեռան ստորոտէ ակն մի բղխելով կու կազմէ ահագին գետ

որ ոչ հուն կամ անցք կու տայ, և ոչ այլ օգուտ ունի երկրագործաց, բայց միայն քանի մը աղօրիս կու դարձնէ. միայն առու մի, եօթն ժամու հեռի ի տեղէն կու բղխէ, և ի Պէտար անուն Քրդաց գիւղէ երկու քարընկէց դէպ ի վայր, ի հարաւային կողման գետոյ, ճեղքելով լերան փոքր մասն՝ կ'անցանէ, և բաւական արտորայս կ'ոռոգանէ։ Քրդեր զայն ճեղքման տեղն կու կոչեն Նակապայ Հէրէս, որ թարգմանի խոր կամ խրամ երիցու։ Քան զայս գետ երկիցս աւելի յորդ այլ գետ կու գայ ի հարաւային արեւելեան կողմէ ի Շատախէ կամ Ջերմա-ձորոյ և յայլ գաւառաց և վերոյիշեալ փոքրիկ մասին լերան հարաւակողմէն կ'անցնի։ Այսպէս երկու գետոց ի միջի է լերան այն փոքրիկ մասն, բայց տեղին ուր կ'երթայ միւս գետ՝ յոյժ խոր է։ Եւ անտի դէպ ի վայր իբր երկու ժամու ճանապարհի տարածութեամբ կայ մեծ սար, և նորա խոնարհագոյն կողմի ստորոտի առաջոյ երկու գետք իրարու հետ միանալով, և հինգ ժամու ճանապարհ դէպ յարեւմուտս երթալով, կու խառնուին ի Տիգրիս։ Գետ մի յէրուն անուն ձորագաւառէ դէպ յարեւելս հարաւոյ ընթանալով ի Խիզան կամ յիշոց գաւառի հարաւային կողմի սահմանագլուխ՝ կու խառնուի ի Տիգրիս։ Սա եւս ոչ թէ ի մեծամեծ ականց կու բղխանայ, այլ ի փոքր

աղբիւրներէ ։ Ի գարնան յորդէ յոյժ յոյժ , բայց որչափ ձիւնն ի լերինս հալելով կու պակասի , նա եւս կու նուազի , և յամառան դրեթէ կու ցամաքի ։ Այսպիսի գետեր բազում են , զորս մի ըստ միոջէ նշանակել աւելորդ համարեցայ ։ Երեք կամ չորս ժամու ճանապարհաւ դէպ ի հարաւ այն գետոյ եզրէն որ կու գայ Ջիլրուն գաւառէ և Տիգրիսի եզրէն երկու քարընկէց հեռի յարեւմտեան կողման ակն մի բղխելով լինի գետ մեծ , որ առանց օգուտ գործելոյ կու խառնուի ի Տիգրիս ։ Անտի սակաւ ինչ դէպ ի հարաւ գետ մի ի Շիրուան գաւառէ գալով և դէպ յարեւելս ընթանալով կու խառնուի ի Տիգրիս ։ Եւ անտի դէպ հարաւ Նուրէնեան անուն Հայոց գիւղէն երկու քարընկէց զառ ի վայր գետ մի կու բղխի , և միայն Փուրդ գիւղի միոյ օգուտ գործելով թափի ի Տիգրիս ։ Էրուն ձորագաւառ ի Ցատիկ գաւառի հարաւային կողման է . յերկոցունց միջի է Նադ անուն սարն , բարձրագագաթն և լայնանիստ , և ճանապարհորդն գաւառէն գալով հազիւ ի վեց ժամու ելանէ ի ծայր լերին և գայ ի միւս գաւառն ։ Շիրուան գաւառն Էրնոյ հարաւային կողման է , և սահմանակից ։ Իսկ Սղերդ Շիրուան գաւառի յարեւմտեան հարաւային կողման է , հինգ ժամու ճանապարհաւ հեռի ։ Ի Կեցան գաւառէ որ է ի ծայրն Տիգրիս գետոյ մինչեւ

ի Սղերդ քսան և վեց ժամու ճանապարհ է։ Եւ ի Սղերդէ մինչեւ ի Թլանաւոյ անուն գիւղ՝ եօթն ժամու ճանապարհ է. ապա Տիգրիս գալով և Սղերդի հարաւային կողմէն անցնելով և դէպ յարեւմտեան հարաւ երթալով կու միանայ այն գետոյ հետ որ կու գայ ի Տիգրանակերտէ։ Ի Կեցան գաւառէ մինչեւ անդ Տիգրիս գետի յերկու կողման գրեթէ ապառաժ լերինք բարձրացած են. կամ տեղեր ուր յափն գետոյն իջանել անհնար է։ Գետն երկրագործաց ամենեւին օգուտ չունի, և ի Կեցանայ մինչեւ անդ ուր կու միանայ ընդ գետոյն Տիգրանակերտի՝ սաստիկ որոտմամբ և սրընթացութեամբ կ'երթայ. իսկ անտի ի խոնարհ՝ հանդարտ և գրեթէ անշարժ, մինչեւ ի Բաբելոն քաղաք և անտի ի խոնարհ միանայ Եփրատայ հետ կ'երթայ ի Պասրայ և կու թափի ի ծով։ Աշխարհն որ ի մէջ Եփրատ և Տիգրիս գետոց՝ կ'անուանի Միջագետք։

Վասպուրական աշխարհի գետերէն տեսած եմ միայն զԱնգղայ գետն որ երթայ ի Վանայ ծով. նաեւ անցած եմ զայս գետ, որ այնչափ յորդ է զի յամարան անդամ հազիւ անցք կու տայ։ Այլ թէ ուր կու բղխէ և կամ ուստի կու գայ՝ տեղեկութիւն չունիմ։ Որչափ գետ յիշեմ՝ զամենեսին տեսած և անցած եմ։ Գաւառներէ և լեռներէ կամ՝ ընդ որս ան-

*ցած եմ, և կամ՝ զօրս ի բարձր լերանց ուշի ուշով դիտած եմ: Որովհետեւ տեսած չէի զԱխուրեան գետ, ի Կարս երթեւեկող վաճառականաց և ճանապարհորդաց հարցուցի: Ոմանք պատասխանեցին թէ չէին գիտեր. այլք ասացին թէ այն գետ կ'երթայ և կու խառնուի ի Կուր: Ոմանք եւս ասացին թէ կու խառնուի յԵրասխ գետ. դարձեալ ոմանք թէ ամենեւին որ և իջէ գետոյ հետ չմիանալով առանձին ի ծով կ'երթայ: Վասն որոյ զգետոց և զլերանց զօրս չեմ տեսած՝ չվստահեցայ գրել ըստ բանից այլոց:*

---

## Թ.

### ԿՈՐԴՈՒԱՑ ԱՇԽԱՐՀ

*Բուզանդ զԱրարատ գաւառ եւս Կորդուաց անուանէ յասելն վասն սրբոյն Յակոբայ Մծբընայ հայրապետին թէ* « Զայսու ժամանակաւ խաղաց գնաց մեծ եպիսկոպոսն Մծբնացւոց, այր սքանչելի ծերունի, վաստակաւոր ի գործս Ճշմարտութեան, որում անուն Յակոբ, որ փոխանակ ազգաւն Պարսիկ կոչէր, այր ընտրեալ յԱստուծոյ, յիւրմէ քաղաքէ անտի գալ հասանել ի լերինս Հայոց, ի լեառնն Սարարադայ ի սահմանս Այրարատեան տէրութեան, ի գաւառն Կորդուաց »: *Ինճիճեան ի Հընախօսութեան Հայաստանի, էջ* 80, *կու գրէ թէ* « Ոմանք անծանօթք ազգիս պատմութեան ի Քիւրտից

բնակչաց դնեն ընկալեալ լերին զանուամբ Քիւրտ կամ Քարդու: Կորդիք կամ Կորդուք բազմօք յառաջ է քան զՔիւրտս: Ապա հաւաստին այն է՝ թէ Կորդուք է հին անուն գաւառին, և յայնմանէ կոչեցան և՛ լեառն, և՛ բնակիչքն, որպէս և ողջոյն նահանգն, և ոչ թէ լեառն ի բնակչաց»: Ս. Գրիգոր Նարեկացի ի ճառս խաչին կու գրէ «Թողեալ լքեալ և փախստական ի հարկէ բնակութեան հայրենեաց իւրոց: Ի գաւառէն Մոկաց, ի լեռնէն Կորդուաց: Պարգեւս բարեաց աշխարհի Հայոց, կողմանցն արեւելից, լերանցն Կորդուաց, գաւառին Մոկաց վեր առաքեցին»: Թէպէտ ուրիշ ազգաց պատմիչներէ շատ գաւառներ կու կոչուին Կորդիք, սակայն ըստ գրելոյ Ս. Գրիգորի Նարեկացւոյ և Բուզանդայ պատմագրի, բուն Կորդիք՝ Կարկառն է, որ է Առուենից–ձոր. Շինի–ձոր, որ է միւս Իշայր. Սպարկերտ, որ է Իշայր. Մամրտանք, որ է Միջայ, և Մոկք, որ է Առանձնակ: Ըստ իս Առանձնակ ստուգաբանի առանձին ակն, ինչպէս կանխաւ ասացաք թէ մեծ ակն մի բղխելով կու կազմէ յորդ գետ, այլովքն հանդերձ: Որովհետեւ այս գաւառաց արեւմտեան կողմն Տիգրիս գետն է, որպէս ասացաք, և հիւսիսային կողմն Վասպուրական աշխարհ է, որ կու բաղկանայ ի լերանց, ի դաշտաց և ի ծովուց, քանզի երկու ծով ունի, այն է Վանայ և Արճակունն: Ի հարաւային կողման այն մեծ ահագին գետն է որ գայ ի Ջերմաձորոյ կամ ի Շատախէ և յայլ

գաւառաց։ Նոյնպէս և գետոյ միւս կողման գաւառներ լեռնային են և դաշտային։ Բայց արևելեան կողմն ինձ անծանօթ է։ Իսկ յիշեալ գաւառաց լերինքն իրարու հետ կցեալ միացեալ և միատարր տարածուած են։ Կորդ անունն երկրագործական բառ է։ Երբ ի գետնոյ զքարեր, զփշեր, զմացառներ բրելով հանեն, արօրադրեն, մշակեն, սերմանեն և հնձեն, այն գետին յերկրագործաց կու կոչուի կորդ, և ի յոգնակին՝ կորդեր։ Ինձ թուի թէ Կորդիք կամ Կորդուք կորդ բառի յոգնակին է։ Ուստի փոխանակ այն ամենայն աշխատութեան երկրագործք մի բառ գտնելով ասեն. կորդեցի, և այսու կու հասկնան թէ ի կորդուած գետնէն մեծ աշխատութեամբ հանած են քարեր, փշեր, մացառներ և սոցին նման բաներ և արօրադրած են։ Կորդուաց լեռներու բնակիչք գրեթէ մշակելու համար հարթ և գլուխ գետին ամենևին չունին. քանզի երկիրն անհնարին զառ ի վեր և զառ ի վայր է, վասնորոյ արտօրայք նոցա կորդուելով շինուած են, ուստի և այս պատճառաւ կու կոչուին աշխարհ և լերինք Կորդուաց։ Նաև կորդ բառն անցեալ կատարելոյ նշանակութիւն ունի. այսինքն կորդուած և մշակուած։ Այն աշխարհի ժողովուրդ եթէ տրեխ կամ կօշիկ հագնին և ի լերինս շրջին կամ աշխատին, լպրծելով կու

գլորին. վասն այսորիկ կու չինեն քուրչէ ոտից աման զոր ուրչիկ անուանեն, և ոչ սահին. այս է նշանակութիւն ուրչիկ կամ վուչիկ բառին:

---

## Ը.

### ՎԱՆՈՐԱՑՔ ՀԱՅՈՑ ՈՐ Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՂՄԱՆՍ

Գետն որ գայ ի Շատախ կամ ի Ջերմաձոր գաւառէ՝ ի Մղերդու հարաւային արեւելեան կողման կու խառնուի ի Տիգրիս, և ի միասին երթալով դէպ յարեւմտեան հարաւ, առաջի Թլանաւուոյ գիւղի կու միանայ ընդ գետոյն որ գայ ի Տիգրանակերտէ: Այս գետերու հարաւային կողմերն չունիմք վանորայս, նաեւ Հայ ժողովուրդք եւս սակաւ են յայն կողմանս:

Ի Շատախու գաւառէ դէպ ուղիղ (ոչ գետոց եզերերէ) մինչեւ ի Զրնգուչ՝ իբր յիսուն և հինգ ժամու ճանապարհ է: Իսկ Շատախու, Տիգրիսի և Տիգրանակերտու գետոց հարաւային կողմերն, զՄարտին քաղաքի Հռոմէական Հայեր ի բաց առնլով, հազիւ վեց կամ եօթն հարիւր տուն Հայ կայ: Յիշեալ գետոց հիւսիսային կողմերն կան չէն վանք, որք են 1. Աշխարհածանօթ Ապարանից Ս. Խաչ վանք հիւսիսային կողման գետոյն

որ գայ ի Շատախէ իբր երկու ժամու և կէսոյ ճանապարհաւ հեռի ։ Աստ աշխարհական մի նստելով իւր ընտանեօք վանահայրութեան պաշտօն կու վարէ ։ 2. Սեղայ վանքն ի նորա արեւմտեան կողման է, չորս ժամու ճանապարհաւ անտի, և հինգ եւս՝ ի գետոյն հեռի ։ Քսան կամ երեսուն ամաց հետէ ի Քրդաց երկիւղէն վանահայր ոչ նստի աստ, ուստի և սենեակներ փլած են, միայն եկեղեցին ողջ կայ ։ 3. Սրբոյն Յովսեփայ Արեմաթացւոյ անուամբ կառուցեալ վանքն ի Սղերդու հիւսիսային արեւմտեան կողման, երեք ժամու ճանապարհաւ ի Սղերդէ և վեց ժամաւ ի Տիգրիս գետոյ հեռի է. որոյ վանահայրն հանդերձ ընտանեօք աշխարհական է ։ 4. Նոյն ուղղութեամբ վեց ժամու ճանապարհաւ ի Սղերդէ և վեց ժամու ճանապարհաւ ի Տիգրանակերտու գետոյ, Պարրայ գիւղի Ս. Աստուածածին վանքն է, զոր իբր քառասուն ամօք յառաջ Քրդեր քակեցին և այժմ աւերակ է ։ 5. Անտի հինգ ժամու ճանապարհ հեռի դէպ յարեւմտեան հիւսիս Ս. Կոնոնոսի վանքն է, յորոյ առաջոյ կ'անցնի գետն որ գայ ի Գզելխ և ի Խոյթ գաւառաց. անտի մետասան ժամու ճանապարհ է մինչեւ ի գետն Տիգրանակերտու ։ Բուզանդ կու գրէ թէ

« Երանելին Եպիփան էր ընդ սրբոյն Շաղիտայի, աշակերտ եղեալ մեծին Դանիէլի ։ Եւ սա յետ մահուան մեծի քահա-

նայապետին Ներսեսի եկն բնակեցաւ ի մեծ Ծոփս անապատն որ կոչի անուն տեղւոյն Մամբրէ, ի վերայ գետոյն՝ որ անուանեալ կոչի Մամուշեղ: Եւ լինէր սուրբն Եպիփան լոյս երկրին Ծոփաց, և լուսաւորէր զնոսա մեծապէս: Անցանէր և յերկիրն Աղձնեաց, և լուսաւորէր զնոսա, և լնոյր զերկիրն Աղձնեաց վանօրով»: Աղձնեաց երկրի վանաց անուններ, որպէս Ս. Կոնոնոս և Ս. Աստուածածին զորս ի վերայ յիշեցինք, ի Խարզանու գաւառի են. իսկ Ս. Յովսեփայ Արեմաթացւոյ վանքն՝ ի Ջրուկան գաւառի: Նաեւ խընդրակատար Ս. Աստուածածին, Աւեխու Ս. Աստուածածին, Գոմաց Ս. Աստուածածին և Ծապըկորու Ս. Կարապետ անուամբ չորս վանք խաչաձեւ Բաղէշ քաղաքի չորս կողմի յեզերսն են: Իսկ սրբոյն Յովհաննու Ամորդւոյ վանքն է միանգամայն Թաղի եկեղեցի և Առաջնորդարան: Ասեն թէ զխնդրակատար Ս. Աստուածածնի վանս Թադէոս առաքեալ շինած է: Հինգ քառորդ ժամու ճանապարհաւ ի Բաղէշ քաղաքէ հեռի, ի հիւսիսային արեւելեան կողման ի Պոռ գիւղէ իբր երկու ասպարիզաւ ի բացեայ վանք մի կայ յանուն սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, որոյ վանահայրն գիւղի քահանայն է: վանք մի եւս կայ ի Տատիկ գաւառի յանուն սրբոյն Աթանագինեայ. զայս վանաց ասեն թէ Ս. Գրիգոր Լուսաւորչի որդի Ս. Արիստակէս շինած է, և այժմ նորա վանահայրն աշխարհական է:

Որովհետեւ Խարզանու գաւառն Ծոփաց աւելի մօտ է, Ս. կոմանոսի վանուց շինողն անշուշտ Ս. Եպիփանն է յիշեալ ի Բուզանդայ։ Այս վանուց վանահայրն վարդապետ է։ Բուզանդ դարձեալ Ս. Եպիփանու համար ասէ. «Եւ առնէր նոյն նշանս (յԱղձնեաց երկրին) և դառնայր յիւր վանսն: Եւ էր մօտ ի գեօղն Մամուշեղ աղբիւր մի, և ձուկն բազում երևէր ընդ ակն աղբերն. և բազում մարդիկ հանեալ զձուկնն, օգտէին ի նմանէ: Ապա երկու եղբարք ի վերայ ձկանն հակառակեալ ք, սպան մին զմիւսն. և իբրեւ գնաց սուրբն Եպիփան, ասէ. Ցայմ՝ հետէ այտի ոք ձուկն մի կերիցէ: Եւ անդէն դառնացաւ ձուկն տեղւոյն, և եղեւ իբրեւ լեղի դառն մինչեւ ցայսօր ժամանակի. և ոչ ոք որսաց զնա մինչեւ ցայսօր ժամանակի»։ Ըստ պատմելոյ նորին Բուզանդայ, Ս. Եպիփան վասն վանորէից շինութեան և բարեկարգութեան երբեմն յԱղձնեաց երկրին կը բնակէր, և երբեմն ի Ծոփս կը դառնայր։ Վասն այնորիկ ինձ թուի թէ զվերոյիշեալ ձկանց աղբիւրն փոխանակ գրելոյ յԱղձնեաց աշխարհին և ի Խարզանու գաւառին սխալմամբ կը գրէ այլուր։ Քանզի ճիշդ ըստ բանի նորա ձուկն բերող աղբիւր կայ յեզեր գետոյն որ է յարեւմտեան կողման Ջօկ անուն գիւղաքաղաքի՝ ութ ժամու ճանապարհաւ հեռի ի Սղերդէ, և կը դայ ի Գզելս և ի Խոյթ գաւառաց որ կան ի հիւսիսային արեւմտեան կողման, իբր հինգ քառորդ ժամու ճանապարհաւ հեռի

ի Ջոկայ։ Այն աղբիւր է բոլորակ լիճ լի ձըկամբ, իբր երեք հարիւր քառակուսի կանգուն տարածութեամբ և իբր մէկ կանգուն խորութեամբ։ Ջուրն որ ելանէ ի լճէն ձմերայնի՝ երթայ չարժէ աղօրի մի, իսկ ամարայնի ոռոգանէ զարտորայս։ Որպէս լիճն, նոյնպէս և ջուրն որ ելանէ ի լճէն և երթայ առուօք՝ լի է ձկամբք, որ ելանեն երթան ընդ ջրոյն։ Այս ձկունք նման են ձկանց ծովակին Վանայ։ միայն սակաւ ինչ փոքր։ Հարցուցի մօտակայ գիւղայցւոց թէ ընդէր չորսան, պատասխանեցին թէ այն ձկունք չեն ուտելի։ Ցայնժամ զԲուզանդայ գիրքն չէի կարդացած որ փորձէի։ Իսկ անուն լճին է կէօլ—ա—մասխան, որ թարգմանի լիճ ձկանց։ Վերոյիշեալ Ջոկ գիւղաքաղաքն է առ ստորոտով չղթայի լերանց ի հարաւային կողման։ Այս չղթայ իբր երեք ժամու ճանապարհաւ տարածուած է դէպ ի հարաւային արեւելս։ Երկուստեք դաշտեր կան։ Հարաւային կողմի դաշտն բաւական խոնարհ է, բայց հիւսիսային կողմանն սակաւ ինչ բարձր քան զնա։ Շղթայի մի ծայրն ի միջոյ դաշտին կու սկսի և միւս ծայրն դարձեալ կու յանգի ի դաշտին։ Ջոկ գիւղաքաղաքի արեւմտեան կողմէն դէպ ի հիւսիս ընդ զառ ի վեր, առ երի յիշեալ չղթային բաւական տեղ սակաւ ինչ հարթ է իբրեւ մեծ և բոլորակ բակ, և ունի

մեծ բերան ։ Ցայն բերանոյ իբրեւ քառորդ մի ժամու դէպ ի վայր՝ ընդ երկրաւ կայ պաղ ջրով լի քարեղէն մեծ աւազան ։ Լապտերով իջած և խմած եմ ի ջրոյն ։ Զօկայ բնակիչք ասէին թէ ջուրն որ յաւազանին՝ դրեթէ հանապազ հաւասար է չրթանց աւազանին, և դուն ուրեք կու պատահի որ փոքր ինչ նուազի, և զանունն ևս կու կոչեն Մաղարայ ։ Ս. Կոնոնոսի վանք Զօկ քիւղաքաղաքի յարեւմտեան հիւսիսային կողման է, չորս ժամու ճանապարհաւ հեռի ։ Հէսքիվ կամ Հասան-քէվ քաղաքն ի Զօկայ հարաւային կողման է, և երկոտասան ժամու ճանապարհաւ հեռի ։ Տիգրանակերտի և Պըշէրկու գետերն յետ խառնուելոյ յիրեար, ութ կամ ինն ժամու ճանապարհ գալով կ'անցնին ի նորա հիւսիսային կողմէն ։ Այս քաղաք ի հազար և հինգ հարիւր տանց կու բաղկանայ, և ի միոյ ապառաժի վերայ է . ի վերայ այսր ամենայնի ապառաժի գագաթան մեծ մասն դեռ պարապ է, և կայ դեռ տեղի աւելի քան հազար հինգ հարիւր տանց ։ Ապառաժի գոյնն դեղին է, և չորս կողմն այնպէս կ'երեւի՝ որպէս թէ մարդկային արուեստիւ շինուած և հարթուած է ։ Այնչափ բարձր է զի մարդիկ որ շրջին առ ստորոտով ապառաժին՝ երեւին թզաչափ այնոցիկ որ ի վերայ ապառաժին կալով կու դիտեն զնոսա ։ Փասն տուն Հայ,

քսան տուն եւս Ասորի կան ի քաղաքին, իսկ մնացեալքն Մահմետականք են, բայց խօսին Արաբերէն: Տուներ քարափոր և արուեստիւ շինուած այրեր են: Ի դրանց կողմանէ ունին քանի մը պատուհան լուսամուտ, և մնացեալ մասունք ի վեր ի վայր, յայս կոյս և յայն կոյս՝ են միատարր քարէ: Ճանապարհն ի ստորուստ մինչեւ ի վեր՝ է սանդուղ քարաշէն, որ ունի ի վերոյ քանի մի երկփեղկ և ամուր դռներ: Ըմպելոյ և գործածելոյ ջուրն կ'առնուն ի գետոյն: Ի Ջոկ գիւղաքաղաքէ քսան ժամու ճանապարհաւ հեռի ի հիւսիսային յարեւմտեան կողման Հազրոյ անուն քաղաքն է, յորմէ իբրեւ քսան բոպէլու հեռի ի հիւսիսային կողման Այնի-Իպրիխու վանքն է, և յարեւմտեան հարաւային կողման իբր երկու ժամու ճանապարհաւ հեռի Տէրճէլու վանքն է: Ցայս վանս երբեմն վանահայր վարդապետներ կու նստին, և երբեմն առանց վանահայրի կու մնան: Վանքն Հազրոյ քաղաքէն դէպ ի հարաւ մինչեւ ի Տիգրանակերտի գետն իբր չորեքտասան ժամու ճանապարհ կայ: Մակարայեցւոց վանքն Հազրոյ քաղաքի յարեւմտեան հիւսիսային կողման է, հինգ ժամու ճանապարհաւ հեռի: Այս վանք կառուցեալ է ի վերայ միջակ անտառախիտ լերան, ի վերայ բարձր գագաթան որ է ի ձեւ չեղջի: Առ ստորոտօք նո-

րա, յարեւմտեան կողման է Հանթաղ կամ Անթաղ անուն Հայոց գիւղ։

Սրբոց Մակաբայեցւոց համար ի Յայսմաւուրս Օգոստոս 1, գրեալ կայ թէ «Անտիոքոս յետ 'նահատակելոյ զնոսա, դիւահարեալ գնաց յերկիրն Եղամից գտանել բժշկութիւն յաստուածուհւոյն իւրմէ. և ասացաւ 'նմա թէ, Եթէ ոչ տաս բերել զոսկերս սրբոյն զոր սպաներ և անկանիս առաջի 'նոցա, ոչ բժշկիս։ Եւ Անտիոքոս առաքեաց բերել զնոսա սակաւօք. և մինչդեռ որ առաքեցանն՝ գային ի ճանապարհին, լուան եթէ քարկոծեցաւ Թագաւորն ի տան աստուածուհւոյն, և դարձան ի Հայթաղս, և թաղեցին զսուրբսն ի 'ներքոյ կամրոյն»։ Մակաբայեցւոց վանքն ի Տիգրանակերտու հիւսիսային արեւելեան կողման է, իբր չորեքտասան ժամու ճանապարհաւ հեռի։ Այս վանք առանց վանահայրի ոչ մնայ, և երբ ես տեսայ, վարժատուն եւս ունէր։ Բաբերահայեաց Ս. Աստուածածնի վանքն Տիգրանակերտի յարեւմտեան հիւսիսային կողման է, երկոտասան ժամու ճանապարհաւ հեռի։ Սա արդէն ծանօթ է ամենեցուն։ Ս. Գամաղիէլ և Բարեձորոյ Ս. Մերկերիոս անուն երկու վանք են ի Խիզան կամ յիշոց գաւառի։ Առաջնոյն վանահայր ինքնութնամենի այրի և յաչաց լուսոյ զրկեալ քահանայ էր. իսկ միւսոյն՝ բնատնեաց տէր աշխարհական մի։ Ի կոնդակին գրեալ է թէ Թադէոս առաքեալ զԳամաղիելի գլուխն իւր հետ բերելով, զայն վանս յա-

նուն գամաղխելի շինած է ։ Ս. Խաչ վանքն է ի Շինի–ձոր կամ ի միւս Իշայր գաւառի. յառաջ եպիսկոպոս մի և վարդապետք ոմանք կու նստէին անդ, բայց այժմ վանահայրն վարդապետ է ։ Կ'ասեն թէ Տրդատ թագաւորի նետն անդ ի պահեստի կայ ։ Չորս վանք ևս կան ի Սպարկերտ և կամ յԻշայր գաւառի ։ Առաջին ի Սորու անուն գեղջ, Ս. Աստուածածին անուն, որոյ վանահայրն քահանայ է ։ Երկրորդն՝ ի Բաղենց գեղջ, դարձեալ Ս. Աստուածածին անուամբ. սորա վանահայրն ևս քահանայ է ։ Երրորդն՝ ի Շիրէն գեղջ՝ Ս. Գէորգայ վանք անուամբ. վանահայրն քահանայ է ։ Չորրորդն՝ ֆեղիս գիւղի Ս. Նիրակոսի վանքն, ուր երբեմն վանահայր անուամբ աշխարհական մի կու նստի, և երբեմն երկար ժամանակ փակեալ կու մնայ ։ Արդէն խօսեցաք գնչանաւոր Ապարանից Ս. Խաչի և Ս. Աստուածածնի վանաց որ ի Մամըրտանք կամ ի Միջա գաւառի են ։ Ս. Աստուածածին անուն վանքն ի Սմբոն գեղջ, ի Կեցան գաւառի է, կամ յԱռուենից–ձորոյն ծայր. և վանահայր նորա քահանայ է ։ Ս. Աստուածածին և Ս. Գէորգ անուն այլ երկու վանք կան ի Կարկառու ձորագաւառի կամ յԱռուենից–ձոր, որոյ վանահարք ևս քահանայ են ։

## ԺԱ.

### ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՆՈՒԱՆՔ ԳԱՒԱՌԱՑ ԽՆՁ

*Զգաւառաց անուններ զորս երանելին Մովսէս Խորենացի կու յիշէ յիւր աշխարհագրութեան, թէեւ խափանուած են, և այժմ ուրիշ անուններով կ'անուանին, կամ սակայն գաւառներ որոց անուանք անփոփոխ մնացած են, և նշաններ կարեն օգնել գտնելոյ մնացելոց անուններն ։ Վենետիկոյ Ս. Ղազարու վանուց միաբան ուսումնական վարդապետներէն ոմանք իւրեանց հայրենեաց սիրոյ եռանդեամբ վառեալ, զայս խնդիր պարզելու համար ամէն կարեւոր ջան և աշխատութիւն ի գործ դրին, մանաւանդ Հ. Ղեւոնդ Ալիշան. բայց սա ի հայրենեաց կարի իմն հեռի լինելով, չկարաց անձամբ երթալ ականատես լինել ։ Յանուանց գաւառաց զորս յիշէ՝ ոմանք ճիշդ են, և ոմանք կու վրիպին ի ստուգութենէ ։ Զայս գիտելով ինքն եւս կու խոստովանի ասելով* « Այլ մինչչեւ մտեալ ի նկարագիր նոցուն կարգեսցուք զնախնեացն բաժանմունս գաւառաց, պատշաճեցուցանելով նոցին զայժմեան վիճակսն, որքան և կարելին » ։

## ԱՂՁՆԻՔ

| | | |
|---|---|---|
| Ա· | Արզն | Խարզան |
| Բ· | Նփրկերտ | Մուֆարղին |
| Գ· | Քեղ | Խարզան ( Խզու ) |
| Դ· | Կէթիկ | Տիգրանակերտ (Տիարպէքիր) |
| Ե· | Տատիկ | Դատուան |
| Զ· | Աղնուաց–ձոր | Սուսան |
| Է· | Խերհեթք ( Սեր- | Սղերդ |
| Ը· | Գզեխ խեթք ) | Խիզան |
| Թ· | Սալնոյ–ձոր | Բաղէշ |
| Ժ· | Սասունք | Սասուն |

Թէ Արզն է Խարզան և Նփրկերտն Մուֆարղինն, ուղիղ է. բայց զԿէթիկ անուանել Տիգրանակերտի և անմիջապէս զՏատիկն յարել՝ ուղիղ չթուի. քանզի ի Տատիկ գաւառէ մինչեւ ի Տիգրանակերտ յիսուն և ութ ժամու ճանապարհ է, և Արզն, Նփրկերտ և ուրիշ քանի մը գաւառներ յերկոցունց միջի կան: Թող զայս, Տիգրանակերտ կու վերաբերի Ծոփաց: Թէեւ Բուզանդ զՏիգրանակերտ կու դնէ յԱղձնիս, ինձ թուի թէ զԽարզանու այժմեան աւերակ քաղաքն կ'անուանէ Տիգրանակերտ. իսկ այժմու Տիգրանակերտ կու կոչէ Ամիդ, յասելն վասն սրբոյն Ցակոբայ Մծբնայ հայրապետի թէ « Ոսկերք

նորա շնորհեցան քաղաքին Ամդացւոց»։ Հ. Ղ. Ալիշան Տաթիկ գաւառի հանդէպ կու դնէ զԴատուան գիւղ, իբր այն թէ Տաթիկ և Դատուան միեւնոյն ասել է։ Տաթիկ անուն երբէք փոխուած չէ, այժմ եւս այն գաւառ կոչի առհասարակ Տաթիկ. իսկ Դատուան գիւղ է, և է ի Բզնունեաց գաւառի. և Աղնուաց-ձոր կամ Կիւզէլ-տէրէ անուն գաւառն յերկոցունց մէջի կայ։ Աղնուաց-ձորոյն հանդէպ կու դնէ զՍուսան, որպէս թէ երկոքեան միեւնոյն են. բայց Սուսան նոյն է ընդ Սասնոյ. Հայք և Թուրքք կ՚ասեն Սասուն, այլ այն երկրի Քրդերն և Քուրդ-Հայեր ասեն Սուսան։ Այս գաւառ ի Խոյթ և ի Կուլփ կամ Խուլփ գաւառաց մէջի կայ, և կու վերաբերի Տուրուբերան աշխարհին։ Նոյնպէս Հ. Ղ. Ալիշան Խիզան անուն կու տայ Գզեխ գաւառի։ Խիզան Մոկաց գաւառներէն մին է. իսկ Գզեխն Բաղէշ քաղաքի յարեւմտեան կողման է. Նոյնպէս և սորա անուն երբէք փոխուած չէ. Մահմէտականք կ՚ասեն Մօտկան։ Բայց նոյն գաւառի Հայերուն եթէ հարցանի «Ո՞ր երկրէ ես» կու պատասխանեն «Գզեխու եմ»։ Եւ եթէ գիւղին անուն եւս հարցանի, պատասխան կու տան թէ «Կնձուայ եմ», «Քաչախու եմ», և այլն։ Թէ Սալնոյ-ձոր Բաղէշն է, այն ուղիղ է։ Արդարեւ Բաղէշ ի Սալնոյ-ձոր է։ Տիգրանակերտ, Խիզան, Սասուն,

Դատուան, որ արտաքոյ Աղձնեաց աշխարհին են՝ այն աշխարհի բոլոր գաւառներ կու փակեն ի մէջ իւրեանց խաչաձեւ: Եւ բաց յերից գաւառաց որ են Արզն, Նփրկերտ և Սալնոյ-ձոր՝ միւս եօթն գաւառներ կու մնան առանց անուան:

Այսուհետեւ և մեք ըստ կարի մերում ջանամք զգաւառներու այժմեան անուանս պատշաճեցուցանել նոցին հին անուանց զորս քերթողահայր մեր Խորենացի յիւր աշխարհագրութեան կու գրէ ասելով. «Աղձնիք առ Տիգրիս գետով կայ. գաւառս ունի տասն. զԱրզն, զՆփրկերտ, զԳեղ, զԿէթէկ, զՏատիկ, զԱզնուաց-ձոր, զԽերհէթս, զԳզեխ, զՍալնոյ-ձոր և զՍասուն»: Աղձնիք անուն թերեւս առնուած է աղի հանքերէն, քանզի աղն որ կ'ելնէ ի Խարզան, որ է Արզն, և ի Ջրուկան, որ է Գեղ, գաւառներէ՝ ըսպիտակ է առաւել քան զձիւն: Կանխաւ գրած եմ, և դարձեալ կու կրկնեմ ասա թէ, Տիգրիս գետ ի Սղերդու հարաւային կողմէն կ'անցնի, և չորս ժամու ճանապարհաւ դէպ յարեւմուեան հարաւ երթալով, և յետ յինքն ընդունելոյ զգետն, որ կու գայ ի Բաշէշ քաղաքէ և ի Տատիկ և յԱզնուաց ձոր կամ Կիւզէլ-տէրէ գաւառներէ, երեք ժամու ճանապարհ եւս երթալով ի Թիլանաւոյ անուն գիւղի ստորին կողման կու միանայ այն գետոյ հետ որ կու գայ Տիգ-

րանակերտի կողմէն ։ Ուստի Արղն կամ Խարզան գաւառի արեւելեան կողմի սահմանն՝ գետ է որ կու գայ ի Բաղիշոյ մինչեւ ի Տիգրիս ։ Անտի ի վայր Տիգրիս է՝ մինչեւ ի Տիգրանակերտու գետն ։ Հարաւային կողմի սահմանն՝ Տիգրանակերտու գետն է ․ արեւմտեան կողմանն՝ Պըշերկու գետն մինչեւ ի Բաթմանու կամուրջ, և հիւսիսային սահմանն՝ լերանց ստորոտներ ։ Հզու գիւղաքաղաք, Ս․ Կոնոնոսի վանք և Մէլէֆան գիւղ ի Խարզանու կողման կու մնան ։ Նփրկերտու գաւառ որ այժմ անուանի Սլիվան, ի Խարզանու յարեւմտեան կողման է, և սահմանակից նմա ։ Քանզի Պըշերկու գետ կամ Բաթմանու ջուրն անցանելով ընդ մէջ երկու գաւառաց զսահմանս կու բաժանէ ։ Եթէ զՏիգրանակերտ Աղձնեաց գաւառներու հետ առնումք, պարտ է միացունել Նփրկերտու հետ, ապա թէ ոչ արդէն ի Ծոփաց գաւառին է ։ Սղերդ և Զըռըկան գաւառի մասն ի Խարզանու արեւելեան կողման է և սահմանակից նմա, և միւս մասն կու դառնայ դէպ ի հիւսիսային արեւելս ։ Շիրուան գաւառի մի մասն կու հայի դէպ յարեւելս, և միւս մասն՝ դէպ յարեւմուտս ։ Ապա զայս վերջին մասն և զՍղերդ միացունելով Զըռկան գաւառի հետ՝ նոցա տալ պարտ է զանունն Քեղ ։ Քանզի Քիդան անուն գիւղ մի կայ ի Զըռկան գաւառի ․

հաւանական է թէ յառաջագոյն քաղաք էր այս և կոչէր Թեղ, յետոյ փոխուելով եղաւ Թիղան։ Եւ Նակոյ անուն գաւառ ի Ջրւկան կամ Թեղ գաւառի հիւսիսային արեւելեան կողման է, և սահմանակից Նմա. անդ եւս կայ Կէթէկ, կամ, ըստ Ալիշանեանի, Կէթիկ անուան յարմար Կուլթիկ անուն քիւղաքաղաք. վասնորոյ զայն գաւառ մարթ է համարել Կէթէկ։ Տաւիկ գաւառն Կէթէկ գաւառի յարեւելեան կողման է, և սահմանակից Նմա։ Իսկ Աղնուաց-ձոր կամ Աղնուաձոր որ է Կիւղէլ-տէրէ, ի Տաւիկ գաւառի հիւսիսային կողման է, Նմանապէս սահմանակից Նմա։ Խէրհէթք գաւառի հիւսիսային կողման՝ Վանայ ծովն է. ի հարաւային կողման՝ Տաւիկ գաւառն է, և ճիւղ մի Տիգրիս գետոյ. յարեւելեան կողման՝ Տիգրիս գետն, և յարեւմտեան կողման՝ Աղնուաց-ձորն է։ Այս է զոր Խորենացի կոչէ Խէրհէթք. քանզի երկու գիւղք կան յայս գաւառի Խարիթ անուն որ Նման են Խէրհէթ անուան։ Գզեխ գաւառ ի հարաւային կողման սահմանակից է Արզն գաւառի. ի հարաւային արեւելեան կողման՝ Թեղ կամ Ջրւկան գաւառի, և մասն ինչ Կէթէկի յարեւելեան կողման՝ սահմանակից է Սալնոյ-ձորոյ, և Կէթէկի միւս մասն՝ ի հիւսիսային կողման Սասուն գաւառի։ Իսկ Սասուն գաւառ յարեւմտեան կողման սահ-

մանակից է Տարօնոյ կամ Մշոյ դաշտին, ի հիւսիսային կողման՝ Ներքովթ և Գրգուռ լերանց և Բզնունեաց գաւառին․ իսկ յարեւելման կողման Սալնոյ-ձորոյ։ Սալնոյ-ձոր ի հարաւային կողման կու սահմանակցի Կէթէկ գաւառի․ յարեւմտեան կողման՝ Գզեխու, և յարեւելեան կողման՝ Աղնուաց-ձորոյ։ Իսկ նորա հիւսիսային կողմէն արդէն Սասուն գաւառի ծայրն անցնելով կու խառնուի ընդսահմանին Աղնուաց-ձորոյ։

Հ․ Ղեւոնդ Ալիշան զՏուրուբերան աշխարհի գաւառաց հին անուններն դրելով, զնոր անուանսն կու պատշաճեցուցանէ հնոցն այսպէս․

| | | |
|---|---|---|
| Ա․ | Խոյթ | Խութ |
| Բ․ | Ասպակունիք | Մերձ ի Խուլփ և Գինճ |
| Գ․ | Տարօն | Մուշ, Ջուխուր |
| Դ․ | Աշմունիք | Խուլփ, Վարդոյ |
| Ե․ | Մարդաղի | Թէքման, Վարդոյ |
| Զ․ | Դասնաւորք | Գարա-եազը |
| Է․ | Տուարածատափ | Կէօք-սու Գարա-եազը |
| Ը․ | Դալար | Թօրլու |
| Թ․ | Հարք | Խամուր, Խնուս |
| Ժ․ | Վարժնունիք | Խամուր, Լիզ, Պուլանըգ |
| ԺԱ․ | Բզնունիք | Խլաթ, Արծկէ |
| ԺԲ․ | Երեւարք | Կիւզէլ-տէրէ |
| ԺԳ․ | Աղիովիտ | Փատնոց, Սարը-սու |

| | | |
|---|---|---|
| ԺԴ. | Ապահունիք | Մելազկերտ |
| ԺԵ. | Կորի | Լիզ |
| ԺԶ. | Խորխոռունիք | Պուլանըգ |

Իսկ յաշխարհագրութեան Խորենացւոյն գրուած են այսպէս. «Տուրուբերան յերի կայ Չոր-րորդ—Հայոց, և գաւառք են ի նմա վեշտասան. Խոյթ, Աս-պականիք, Տարօն, Աշմունիք, Մարդաղի, Դասնաւորք, Տուարածատափ, Դալար, Հարք, Վարաժնունիք, Բզնու-նիք, Երեւարք, Աղիովիտ, Ապահունիք, Տկորի, Խուխո-ռունիք»։

Խոյթ անուն անփոփոխ մնացած է, և այժմ եւս Հայք և Մահմետականք ասեն Խութ, և է ի Տարօնոյ կամ Մշոյ դաշտի հարաւային կողման և սահմանակից նմա։ Սասուն գաւառ Խութայ յարեւմտեան կողման է, և ըստ Ալիշանեանի նա է Ասպականիք։ Տարօն արդարեւ Մշոյ դաշտն է։ Կուլփ կամ Խուլփ Սասնոյ յարեւմտեան և Մշոյ յարեւմտեան հարաւային կողման է։ Աշմունիք եւս նոյն է։ Գինճ և Պօլլան ի Մշոյ դաշտի յարեւմտեան կողման են։ Մարդաղի անուն եւս պարզ է նոցա տալ։ Կարծեմ թէ ուղիղն Մարգաղի է, և վրիպմամբ գրչաց եղած է Մարդաղի։ Քանզի Մարգ աղի կարէ լինել, իսկ Մարդ աղի ոչ։ Գիւղացիքն ի մարգաց խոտ կու հնձեն. Նոցա գետին բազում ուրեք ջրոտ է, և թերեւս այն ջուր աղի է, և

*այս աղագաւ կու կոչուի Մարգ աղի, ընդ-նմին եւ անուն գաւառին։ Դամնաւորք ըստ իս ստուգաբանի դասաւորեալք։ Այս անուն եւս կու պատշաճի ճապաղ-ջրոյ գաւառին։ Հայաստան աշխարհ յայն կողմանս չկան այն-պէս գաւառներ որ ընդարձակ դաշտ եւ մշա-կելի առատ երկիրներ, մրգաբեր եւ անմըր-գաբեր ծառեր, այգիներ, անտառներ եւ, միանգամայն ունենան. կամ, կան գաւառներ որ ունին ծառեր եւ անտառներ, այլ սակայն ըստ բաւականին մշակելի արտեր չունին, եւ կամ, ունին ընդարձակ դաշտեր, եւ զայլսն ոչ ունին. Իսկ ճապաղ-ջրոյ գաւառն ունի զամենայն, այսինքն ընդարձակ դաշտս, այ-գիս, ծառս, անտառս. այսոքիկ ամենայն դասաւորեալ կան յայնմ գաւառի։ Նաեւ ճապաղ-ջուր բուն անուն է գիւղաքաղաքին, եւ նովաւ բոլոր գաւառն կու կոչուի ճապաղ ջուր։ Այս գաւառ ի հարաւային արեւելեան կողման՝ սահմանակից է Գօկլանայ. ի հիւսի-սային կողման՝ Վարդոյ գաւառի։*

*Նոյնպէս Տուարածատափ ըստ իս ստուգա-բանի Տափ տարած, կամ Տափարակ տարա-ծեալ։ Այս անուն եւս կու պատշաճի Վար-դոյ անուն գաւառին։ Գրած եմ կանխաւ, եւ դարձեալ կրկնեմ թէ այս գաւառ, բաց ի փոքրագոյն գետոց, չորեսին մեծամեծ գետս ընդ չորս կողմանս արձակէ, զմին՝ յա-*

րեւելս կոյս, միւս եւս՝ յարեւմուտս, զերասխ՝ ի հիւսիս, և զմիւսն՝ ի հարաւ։ Ի հարաւային կողման նոյն գաւառ սահմանակից է Գինճի և Պօկլանայ, և յարեւելեան, ի հիւսիսային և ի հարաւային արեւելեան կողմանս սահմանակից է Տարօնոյ և Հարք գաւառին. իսկ յարեւմտեան հիւսիսային կողման՝ սահմանակից է Ջրոկան անուն գաւառի, և յարեւմտեան կողման՝ Քղի գաւառի։ Դալար անուն եւս պարտ է տալ վերոյիշեալ Ջրոկան գաւառի, քանզի Ջրոկան անուամբ երեք գաւառք կան. մին այն՝ զոր յիշեցինք, միւսն՝ յԱղձնեաց աշխարհին, և երրորդն՝ ի Զորրորդ-Հայս։ Հարք կամ Խնուս գաւառ յարեւմտեան կողման՝ սահմանակից է Ջրոկանայ. ի հարաւային կողման՝ Վարդոյ գաւառի, և մասին մի Տարօնոյ. ի հիւսիսային կողման լերանց շղթային, և յարեւելեան և ի հարաւային արեւելեան կողմանս՝ սահմանակից է Վարաժնունի և Ապահունի գաւառաց։ Առաջինն կոչի Վերին-Պուլանուխ, և երկրորդն՝ Ներքին, այսինքն՝ Ստորին-Պուլանուխ։ Շատ գաւառներ կան որք այժմ երկու, երեք և չորս փոքր գաւառներ բաժանեալ են։ Ի սոցա կարգէն է նաեւ Ապահունիք, զոր յերկու մասն բաժանելով, զմի մասն Մանազկերտ քաղաքի անուամբ կու կոչեն Մելազկիր, և զմիւս մասն՝ Վերին-Պուլանուխ։ Թէ Մանազ-

կերտ և Ապահունիք մի գաւառ են և Մանազկերտ քաղաք յԱպահունեաց գաւառին էր, կու հաստատէ Թովմայ Արծրունի յառեղն. « Եւ էր պաշարեալ նորա յայնժամ զքաղաքն Մանազկերտ Ապահունեաց աշխարհին »: Զայս քաղաքի անուն նոյն Թովմայ կու գրէ Մանազկերտ, այլք կ'անուանեն Մանածկերտ. Ի պատմութեան Տարօնոյ գրուած է Մանծկերտ, աշխարհաբար եւս ասի Մանծկերտ: Ինձ թուի թէ Ներքին կամ Ստորին–Պուլանուխ Պալունեաց գաւառն է, և փոխուելով եղած է Պուլանուխ: Ի տարօնոյ պատմութեան գրըուած կայ, « Դարձան ինքեանք ի բանակետղ, և զկարասին և զգանձն ժողովեցին և զերիւարս և զուղտսն, և արձակեցին ի գաւառն Պալունեաց որ ծածկէր զերեսս գաւառին »:

Կանխաւ գրած եմք թէ, Գիլէճան լեառն տարածելով յարեւելից յարեւմուտս, զԱպահունեաց և զՊալունեաց գաւառսն ի միմեանց բաժանէ, զԱպահունիս՝ ի հիւսիսային կողման, զՊալունեաց կամ Ներքին–Պուլանուխ՝ ի հարաւայինն: Ապահունեաց գաւառի Քուրդ պէյերու անուամբ այն լեառն եւս կու կոչուի Գիլէճան: Յովհաննէս արքեպիսկոպոս Մամիկոնեան զլիճն՝ որ է յԱպահունեաց դաշտի կողման, ի լերան ստորոտն՝ Ծխա–ծով անուամբ յիշէ, իսկ զանուն սարին ոչ յիշէ: Ներքին–Պուլանուխ, որ է Վարաժնունիք, յարեւելեան կողման սահմանակից է Բզնունեաց

գաւառի, զոր այն աշխարհի Հայք կու կոչեն Կըլհաթ, Թուրքերն՝ Ախլաթ, և Քրդեր՝ Խըլւաթ։ Այս գաւառի յարեւելեան կողմն՝ է Վանայ ծովն. ի հիւսիսային կողման՝ Սիփան լեառն, որպէս ասացաւ վերագոյն, և ի հարաւային կողման՝ է Նէմրուտ սարն։ Ալիշանեան զԳիւղէլ–տէրէ կ'անուանէ Երեւարք։ Գիւղէլ տէրէ յԱղձնեաց աշխարհին է։ Ջամանէ ըստ բաւականին տեղեկութիւն տուած եմք վերագոյն, աստ եւս դարձեալ համառօտիւ յիշեսցուք։ Թովմայ Արծրունի վասն Թագաւորին Գագկայ կու գրէ. « Եւ տեսեալ մերձ ի դրունս Ասորեստանի ամրոց մի յիշխանատանն Աղձնեաց, ի գեօղն Կոտոմ կոչեցեալ »։ Կոտոմ գիւղ ի Գիւղէլ–տէրէի դաշտի հիւսիսային կողմի ծայրն է, և այժմ եւս Հայք և Թուրքք զայն գիւղ անուանեն Կոտոմ։ Քասըր գաւառ է ի վերայ լերինն որ ի հարաւային ծագէ Բզնունեաց գաւառի կու տարածի ի մէջ Ներքին–Պուլանուխի և Տարօնոյ դէպ յարեւմուտս հիւսիսոյ, վասն որոյ և Երեւարք անուն նմա կու պատշաճի։

Երեւար ըստ իս կու նշանակէ « Երեւել », և կու յարմարի այն գաւառին։ Ապահունիք Վերին–Պուլանուխի և Մանազկերտու գաւառն է։ Աղիովիտ փառնոյն է։ Տկորի ըստ իս Այնթապ գաւառն է։ Այս երկու գաւառք յԱպահունեաց գաւառի հիւսիսային կողման են, և սահմանակից նմա։ Ալաշկերտ կամ գաւա-

ռըն Բագրեւանդայ ի սոցա հիւսիսային կողմանն է ։ Բուզանդայ պատմութիւն զիմ կարծիս կու հաստատէ թէ Խորխոռունիք Բագրեւանդայ գաւառի արեւելեան կողմի մի մասըն է ։ Բայց ըստ Խորենացւոյն ամենեքին ի միասին Խորխոռունիք են ։ Անթապ գաւառի յարեւմտեան կողմն մինչեւ յԵրասխ գետ ինձ անծանօթ է ։ Եթէ գաւառ կայ անդ, զԽորխոռունին անուն պարտ է տալ նմա և կամ Ալաշկերտու, ապա թէ ոչ ի Տուրուբերան աշխարհին չմնաց այլ գաւառ որում տանք զԽորխոռունի անուն ։

Խորենացին կու գրէ ․ « Մոկք յելից կալով Աղձնեաց, ունի զամուրս Տաւրոս լերին ։ Գաւառս ունի ինն. զԻշայր, զՄիւս Իշայր, և զԻշոց գաւառն, զԱռուենից–ձոր, զՄիջայ, զԱռանձնակ Մոկս, զԱրքայից գաւառ, զԱրգաստովիտ, զՋերմաձոր » ։ Ալիշանեան ի Խորենացւոյ առնլով և նոր անուններ պատշաճեցուցանելով հնոց, կու գրէ այսպէս.

| | |
|---|---|
| Իշայր<br>Միւս Իշայր<br>Իշոց գաւառ | Զըռկան, Սպարկերտ, Կարկառ |
| Առնունենից–ձոր | Առուենից–ձոր |
| Միջայ<br>Մոկք Առանձնակ | Մոկք |
| Արքայից գաւառ | ի մէջ Մոկաց և Շատախու |

| | | |
|---|---|---|
| Արդասովիտ | } | Շատախ |
| Ջերմաձոր | | |

Սպարկերտու մօտադոյն գաւառն, Ջրուկան անուն, յԱղձնեաց գաւառին է, քան և ինձ ժամու ճանապարհաւ հեռի ի Սպարկերտէ: Թէ Իշայր է Սպարկերտ, ուղիղ է: Իսկ Առուենից-ձոր է ճիշդ կարկառն. Թէ Առուենից-ձոր է կարկառ, յայտնի է ի Թովմայի Արծրունեաց պատմութենէ, որպէս յիշեցաւ ի վերոյ. նաեւ գաւառն կարկառ ինքնին կու գոչէ տեսողաց Թէ Առուենից-ձոր եմ: Նոյնպէս պատճառներով յայտնած ենք ի վերոյ Թէ միւս Իշայր՝ է Շինի-ձոր. Իշոց գաւառ՝ Խիզան, և Միջայ՝ Մամրտանք: Ուղիղ են նոյնպէս Թէ Մոկք Առանձնակ՝ է Մոկք, և Ջերմաձոր՝ Շատախ: Բայց այս այն Շատախ չէ, որ ի Տարօնոյ պատմութեան գրուած է. « Իշխանն Արջուց կողմանն Գէորգ շատախօս, որ կոչեաց զանուն գաւառին իւրոյ Շատախ, վասն աւելի անուանն իւրոյ »: Այս վերջին Շատախն ի Սասուն գաւառին է, մօտ ի Մուշ և սահմանակից նմա: Արքայից գաւառ և Արդասովիտ անծանօթ են ինձ: Բայց ճիշդ է Թէ ի Բարձր Հայս Գարանաղի՝ է կամախ որ այժմ կոչի Քեմախ. Եկեղեաց՝ Երզնկա, Դերջանն՝ Թէրճան, Սպեր՝ Իսփիր, և Կարին՝ Էրզրում, քանզի սոցա անուանք գրեթէ անփոփոխ մնացած են:

Իսկ Մնացեալքն, և Չորրորդ–Հայոց գաւառներու այժմեան անուններ թէեւ գիտեմ, բայց չեմ կարող յարմարեցուցանել զնոսա հին անուանց: Վասպուրականի գաւառներէն հազիւ թէ երկուս կամ երիս տեսած եմ և գիտեմ, նոյնպէս և զմնացեալ աշխարհացն: Ի կատարածի այսր ամենայնի կարեւոր համարիմ ասել թէ յԱլիշանէ յիշեալ գաւառք ինչ մասունք են գաւառաց, ոչ թէ ամբողջ գաւառք: Զոր օրինակ Հ. Ալիշան Լիզ անուն կու տայ Տկորի կամ, ըստ իւր ուղղագրութեան, Կորի գաւառին: Բայց Լիզ գիւղ է ի Վարաժնունեաց կամ ի Սաորին–Պուլանուխայ գաւառին: Երբէք լսած չեմ թէ կայր գաւառ Լիզ անուն: Վասն զի Լիզ գեղջ շրջակայ և մօտագոյն գիւղեր են Փիրնկ, Հապրի, Ցատկոնք, և Մալաքանտ: Իւրաքանչիւր գիւղ իւր անուամբ կու կոչուի, և ոչ յիշի Լիզ անուն գաւառ: Որովհետեւ Հ. Ալիշան ականատես չէ այն տեղեաց, ի լրոյ միայն այսչափ կարէր գրել: Կանխաւ յիշած եմ թէ հարցի ճանապարհորդաց վաճառականաց որ երթան ի Կարս, թէ Ախուրեան գետ, Արփայ չայի, ո՛ւր կ'երթայ: Ոմանք պատասխանեցին թէ չգիտեն. այլք ասացին թէ կ'երթայ յԵրասխ գետ, ոմանք եւս՝ թէ թափի ի Կուր գետ, դարձեալ ոմանք թէ ոչ երթայ ի Կուր գետ, և ո՛չ յԵրասխ, այլ ի ծով: Հարկաւ յերից աս-

տի մին է ճշմարիտ, բայց մարգարէական հոգի պիտոյ է որ գիտնայ թէ որն է ճշմարիտ և որն՝ սուտ։ Քերթողահայրն մեր Մեծն Մովսէս Խորենացի գաւառաց ինչ անուններ ոչ յիշէ. ինձ թուի թէ չէ յիշած, վասն զի այն գաւառք փոքր են և կամ միւս գաւառաց մասունք։ Զորօրինակ զՀայոց-ձոր ի պատմութեան կու յիշէ, և յաշխարհագրութեան՝ թողու։ Ոչ յիշէ նաև զերկու գաւառաց անուններ, որպէս Երևարք կամ Երիվարք, ի Վասպուրական աշխարհի, զոր յիշէ Թովմայ Արծրունի, և զՀաշտեանս սահմանակից Տարօնոյ դաշտի արևելեան կողման ոչ յիշի յաշխարհագրութեան Խորենացւոյ։

Բայց զմիւս Հաշտեանս որ է ի Զորրորդ-Հայս, և զԵրևարս որ է ի Տուրուբերան աշխարհի, կու յիշէ Խորենացին, քանզի այն երկուքեանն ամբողջ գաւառներ են։ Նոյնպէս ինձ թուի թէ մի և նոյն գաւառ յաւուրս Խորենացւոյն կամ երկու անուն ունէր, որոց զմին կու յիշէ և զմիւսն կու լռէ, և կամ յետ նորա փոխուած են անուանք, զոր օրինակ զԳալունեաց գաւառ որ այժմ կոչի Ներքին Գուլանուխ, նա կ'անուանէ Վարաժնունիք։ Բայց միւս Գալունիք և Վարժնունիք տարբեր են ի սմանէ։ Քանզի սոքա ի Վասպուրական աշխարհի են, և նա՝ ի Տուրուբերան աշխարհի։

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Մանուէլ վարդապետ Քաջունի, որդի ազգային և օտար ճանապարհորդներէ տեղեկութիւն առնլով, յիւր Հին և Նոր Հայաստանի աշխարհագրութեան կու գրէ. « Հրազդան գետ, որ կ'ելլէ Գեղամայ ծովէն, և կ'անցնի Այրարատ նահանգին մէջ Երեւան քաղաքին քովէն և կը միանայ Երասխ գետոյն հետ »: Գեղամայ ծով Երեւան քաղաքի յարեւմտեան հիւսիսային կողմն է, երկոտասան ժամու ճանապարհաւ հեռի: Արագած լերան հետ միացեալ բազում լերինք ի մէջ Արարատեան դաշտի, Երեւան քաղաքի և Գեղամայ ծովուն բարձրացած են: Թող զայս ամենայն, բարձրագագաթն լեռներ ըզ ծովու չորեսին կողմանս շրջապատած են: Թէպէտ յեզերս ծովուն ուրեք ուրեք դաշտավայրեր և գիւղեր կան, բայց առքա եւս լերանց ստորոտներն են: Ի դիտել իմ ի հեռուստ, ինձ այնպէս թուեցաւ թէ ի ծայրի արեւմտեան հիւսիսային կողման կար նեղուց մի: Գետ որ կ'արձակի՝ ի նոյն նեղուցէն է, և ընթացք գետոյն լինի դէպ ի Կուր գետ: Նոյն հեղինակ կու գրէ այլուր. « Պայէզիտ գաւառին մէջ կը բղխէ Եփրատայ արեւելեան ճիւղը, որ Մուրատ կ'ըսուի »: Մուրատ գետոյ հեռաւորագոյն ծայրն կու բղխէ ի Տիատին աւանի, լերանց ստորոտներէ: Իսկ Պայէզիտու գաւառն ի

Տիատինու հիւսիսային կողման է, և յերկոցունց միջի ոչ միայն լեառն կայ, այլ և Պայազիտու գաւառն քան զՏիատին ի խոնարհ կայ ժամու միոյ ճանապարհաւ: Ըստ պատմելոյ Պայազիտցւոց, Կոգովիտ է անուն գաւառին նոցա: Եւ Թովմայ Արծրունի յիւր պատմութեան կու գրէ. « Գնաց և թագաւորն Գագիկ ի գաւառն Կոգովիտ, և պաշարէ զամուրն Դարինս, պողոցեալ անուն ի գլխերի ըստ յաջողելոյ նմա ի վերուստ »: Ի Հայաստան զառ ի վեր և զառ ի վայր տեղերու կ'ասեն դար ( եօգուշ ), և Դարինք, ինձ թուի թէ, Դար—ուն ասել է, այսինքն ունել զդար: Եւ այս բառեր կու յարմարին Պայազիտ քաղաքի և նորա բերդին: Քանզի ի նորա հարաւային կողման կայ յարարչէն շինեալ ձոր, որոյ յերկու կողմանց եւս անհնար է իջանել զառ ի վայր կամ ելանել զառ ի վեր: Արեւմտեան կողմն զառ ի վայր է յոյժ, իսկ հիւսիսային և արեւելեան կողմանք դըրեթէ ի քարաժայռ լեռներէ շրջապատեալ են: Բերդ նորա է ի վերնակողման քաղաքին ի բարձրաւանդակի: Ի մէջ Պայազիտ քաղաքի և Արարատեան սարի կայ դաշտ իբր երկու ժամու ճանապարհի: Գաւառին ջուրք կու կազմեն միջակ գետ, որ կ'անցնի ընդ վերոյիշեալ դաշտն, և դէպ ի հիւսիս ընթանալով կու խառնուի յԵրասխ գետ: Դարձեալ այլուր կու գրէ նոյն հեղինակ.

« Ծակ-քար ըսուած քարաժայռը Մշոյ և Բաղէշի մէջ, որոյ տակէն ճամբայ բացուած է, միջէն կ՚անցնին ճամապարհորդները » : Ծակ-քար չէ ի մէջ Մշոյ և Բաղիշու, այլ կայ ի վերայ ճանապարհին որ ի Բաղիշոյ ի Սղերդ, ի Տիգրանակերտ և յայլ կողմանս, իբր երկու ժամու ճանապարհաւ հեռի ի Բաղիշոյ, յարարչէն չինեալ իբրև բարձր ինչ պարիսպ, սակաւ ինչ դեղնագոյն. մի ծայրն է ի մէջ գետոյն որ երթայ ի Բաղիշոյ, և միւս ծայրն իբր տասն կամ երեքտասան բոպէ տարածուած հարթ և սակաւ ինչ զառ ի վեր գետնի վերայ դէպ յարևմտեան հիւսիս : Ճանապարհորդաց դիւրութեան համար ծակելով դուռն բացած են, որպէս զի սոքա երթալով և ծայրէն դառնալով աշխատութիւն չկրեն : Դարձեալ այլուր կու գրէ. « Հայաստանի մէջ Հայոց մէկ մասը Քիւրտ եղած են, ոմանք քիչ մը քրիստոնէական հաւատքի նշան պահելով, իսկ ուրիշները Քիւրտերուն պէս Մահմետական են » : Այսպիսի ինչ ո՛չ 'ի պատմութեան կարդացած եմ, ո՛չ 'ի ծերոց լսած, և ո՛չ անձամբ իրազեկ եմ այսմ: Հայաստանի հարաւային սահմանագլուխներ, նաև յԱսորեստան կամ յԱրաբիա կան այնպիսի ցեղեր, որոց մայրենի լեզուն Քրդերէն և Արաբերէն է. բայց հաւատքով կատարեալ քրիստոնեայ են. և անոնց եկեղեցական արարողութիւնք կամ Հայերէն են, և կամ Ասորերէն : Զայսպիսեաց արդէն տեղեկու-

թիւն տուած եմ ։ Իսկ Մահմետական Քրդ-դեր ոչ միայն քրիստոնէական հաւատոյ նը-շան չպահեն , այլ և կան շատեր որ Հայե-րէն գիտեն , բայց Հայերէն խօսել աններելի մեղս համարելով , Հայերէն բառ մի անգամ չեն հաներ 'ի բերանոյ ։

Նաև ունին աւանդութիւն թէ յԱրաբիոյ և 'ի Քրդաստանէ եկած են ։ Սասուն գաւա-ռի Սարմըցի Մուսեցի և Պէլէկցի անուն ե-րեք ցեղ Քուրդք կան , ունին աւանդութիւն թէ յԱրաբիոյ եկած են , և դեռ լեզու նո-ցա Արաբերէն է ։ Սարմըցիք և Մուսեցիք Հա-յերէն չեն գիտեր , բայց Պէլէկցիք Հայոց հետ խառն բնակելով այնքան վարժ են՝ որ շատ անգամ իրարու հետ Հայերէն կու խօ-սին ։ Բաց 'ի սոցանէ շատ Քրդաց բերնէն լը-սած եմ որ կ'ասեն . « Մեր ցեղն ի Պաղտատայ եկած է » ։ Ասեն թէ՝ եկած են 'ի Քէրքուկայ , ո-մանք եւս թէ՝ դարձեալ յԱրաբիոյ ։ Ի վեր-ջոյ կարեւոր համարեցայ ծանօթութիւն տալ թէ , Թօնդրակ աւան՝ յորմէ Թօնդրակեցւոց աղանդն յառաջ եկած է՝ 'ի Մանազկերտ քա-ղաքի հարաւային կողման է , իբր միոյ ժա-մու և կիսոյ ճանապարհաւ հեռի անտի , և այժմ է Հայոց և Քրդաց գիւղ ։ Հայերն դեռ կ'ասեն Թօնդրակ , և Մահմետականք՝ Թէն-տուրաք ։ Մանազկերտ , Թօնդրակ և Ծիա ծով որ այժմ կ'անուանի կաղամա կէօլ յԱպա-

հունեաց դաւառի կամ 'ի դաշտի են, որ այժմ ասի Վերին–Պուլանուխ ։

## ՅԱՂԱԳՍ ԿՈՐԾԱՆՄԱՆ ԱԿՈՌԻ ԳԵՂՋ

Ի Թուականի փրկչին մերոյ 1879, եօթն շաբաթներու մէջ իջեւանեցայ յԱրծափ անուն գեղջ, որ մօտագոյն գիւղ է յԱկոռի ։ Տ. Յակոբ ծերունի քահանայն և նմա հասակակից ծերք պատմեցին ինձ թէ, Ակոռի գիւղացւոյ ուրումն յերազի յայտնեցաւ. « Ասա՛ գիւղացւոց, յիւրեանց մեղաց թող դառնան, ապաշխարեն, թող մատաղ կտրեն, խաչօրհնէք տան առնել, աղքատս կերակրեն, ապա թէ ոչ գիւղն կու կործանի » ։ Զորս գիշեր չորս անգամ զնոյն երազ տեսանելով կու պատմէ ։ Բայց գիւղացիք զնա ծաղրելով ասեն. « Ջատումներ որել է՝ որ միս ուտէ » ։ Ապա յամի մարդեղութեան Տեառն 1840, ի Համբարձման, հինգշաբթի գիշեր որ յուրբաթն լուսանալոց էր, Մասիս լերան յարեւմտեան կողմէ մասն ինչ գալով զգիւղն բոլորովին կու ծածկէ. երեք կամ չորք միայն կ'ազատին, որք յայնմ գիշերի չէին ի գիւղին ։ Մասիս լերան ի կէսն, արեւմտեան և հարաւային կողմանք, իբր քառորդ մի ժամու ճանապարհաւ տափարակ է, և ինչպէս որ գմբեթն յեկեղեցւոյ տանեաց մէջոյ կու բարձրանայ,

նոյնպէս և Մասիս լեառն յայն տափարակ վայրերու մէջ բարձրացած է ։ Մինչեւ յայն տափարակ տեղին և նորա ուղղութեամբ չորս կողմէն մարդիկ և անասունք կ'ելանեն և կ'իջանեն ։ Մինչեւ ի յիշեալ տեղիս եթէ գող և աւազակ Քրդաց ամարանոցք չլինէին , մշակելոյ համար շատ յարմար հող է ։ Քանզի ի տափարակ տեղւոջէն ի վայր հողն գալով զգիւղն ծածկած է ։ Ի թուականի փրկչին 1840, ամենեւին կաթիլ մի անձրեւ յերկնից ի վայր չիջաւ . վասն որոյ այնպիսի թանկութիւն եղեւ , որ մեծ բազմութիւն մարդկան մեռան ի սովոյ ։ Ուստի չոր և ցամաք լերան խլել և գալ զգիւղն ծածկել՝ յայտնապէս յաստուածակոյս կողմանէ պատիժ էր ։ Մասիս լեառն երեք տէրութեան սահմանագլուխ է . արեւմտեան և հիւսիսային կողմերն Ռուսաց է . հարաւային կողմն՝ Օսմանցւոց , և արեւելեանն՝ Պարսից ։ Յարեւմտեան հարաւային կողման նորա և ի խաչ-կէտիկի լերան միջոցի Արարատեան դաշտի հաւասարութենէն բաւական բարձր ձոր մի կայ , և միայն այն ձորի ծայրէն փոքր թեւով միացած է լերանց հետ ։ Յարեւմտեան և հիւսիսային կողման Մասեաց Արարատայ դաշտն է . հարաւային կողմն և մասն ինչ արեւելեան կողման դարձեալ դաշտ են . ի սպառուածի այս դաշտին ձոր է , յորոյ ի միջոյ , ի հարաւոյ դէպ

ի հիւսիս, գետ մի երթալով կու խառնուի յԵրասխ: Ձիաւոր ոք յերկս աւուրս հազիւ կարէ Մասիս լերան չորեսին կողմանս ժուռ գալ: Մասիս լեառն զինքն տեսողաց այնչափ սեպ ուղղորդ (տիք) չցուցանէ, մինչեւ մարդոյ չկարողանալ ի նորա գագաթն ելանել: Ի հեռուստ դիտելով բաւական չեղ երեւի, մինչ զի մարդ կարծէ թէ ձի և եզն կառօք անդամ կարեն զառ ի վեր մինչեւ ի գագաթն ելանել: Քան զՄուկաւ լեառն թուի հարթ. բայց ի Մուկաւ լերան չորեսին կողմանէ մարթ է մինչեւ ի ծայրն ելանել. սակայն ի Մասեաց գագաթն՝ բնաւ: Երասխ գետ յԱրաբատայ դաշտի միջոյ գալով, կ'անցնի Մասիս լերան հիւսիսային կողման միոյ մասին առ ստորոտով: Ի հիւսիսային կողման գետոյն, իբր երեքտասան բոպէի ճանապարհաւ հեռի կայ Խոր-վիրապի վանքն, որոյ միաբանքն յԵրասխ գետոյ կու խմեն ջուր: Վանաց եկեղեցւոյ բեմին ի ներքոյ կայ փոքրիկ դուռն, ընդ որ մարդ կ'անցնի փորի վերայ սողալով, և կ'երթայ ի հորոյն բերան: Փայտեայ սանդուղ մի որ քանեւերկու (բաւական ի մեծեանց հեռի) մատունս ունի՝ դրուած է մած յորմն վերուստ ի վայր: Երկու քարէ աստիճանք կան ի վերին ծայր սանդղոյն և սոքօք լինին քանեւչորս մատունք: Ի հորին կայ խորանաձեւ շինուած, որոյ լայնութիւն ի

չորից կողմանց է երկու և կէս գրկաչափ, իսկ բարձրութիւնն՝ աւելի քան երեք գրկաչափ։ Փոքրիկ սեղան մի եւս ունի, և ի տարւոջն մի անգամ, ի տօնի մտից Ս. Գրիգորի ի վիրապն մատուցանի պատարագ ի նմա։ Ի վանաց Ս. Էջմիածնի մինչեւ յԵրեւան քաղաք չորս ժամու ճանապարհ է, և անտի եւս եօթն ժամու ճանապարհ մինչեւ ի Խորվիրապի վանս։

## ՑԱՂԱԳՍ ՔՐԴԱՑ

Ըստ պատմելոյ Յովհաննու Կաթողիկոսի, Քրդաց նախահօր անուն Մադայ է. « Եւ ի մերոյն Յաբեթէ նախ ծնանի որդի և անուանի Գամիր, ուստի և 'նորուն աշխարհ կոչեցաւ Գամիրք։ Զկնի ծնանի Մագոգ, և սերունդք Մագոգայ Կեղի, և Գաղատացիք, և ապա զՄադայ՝ որ զաշխարհ տոհմին յիւր անուն՝ Մարս անուանեաց »։

Ներսէսի Շնորհալւոյն ժամանակակից Կաթողիկոսն Ասորւոց Միխայէլ յիւր պատմութեան կու գրէ. « Մարք որ են Քուրդք »։ Քրդեր կարի ջերմեռանդ են ի Մահմետականութեան. յատուկ գիր և դպրութիւն չունին, Արաբերէն լեզուաւ կու գրեն և կու կարդան։ Եթէ սխալմամբ « Սէլամ ալէք » ասելով Քրիստոնէի ողջոյն տան և յետոյ իմանան թէ Քրիստոնեայ էր նա, կու նեղեն զնա ասել տալ « Ոչ սէ-

լամ ալէքիմ և ոչ ալէքիմ սէլամ » · որպէս զի այսպէս ասել տալով ողջոյնն ետ դառնայ, և հանդչի ի վերայ նորա որ ետ զողջոյնն, ապա թէ ոչ վասն նոցա աններելի մեղք է։ Կան ի նոսա այնպիսի անձինք որ՝ որ և իցէ կերպով Քրիստոնէից ողջոյն տալ և առնուլ մեղս կու համարին։ Լեզու նոցա խառն է · մի մասն Հայերէն է · միւսն՝ Արաբերէն, և միւսն ևս՝ Պարսկերէն։ Ցատուկ բառեր զորս ունին՝ սակաւ են յոյժ։ Ուստի կարևոր համարիմք ի բառից զորս առած են ի Հայերէնէ՝ զոմանս դնել աստ այբուբենի կարգաւ, նախ զՀայերէնն դնելով և ապա զՔրդերէնն առաջի։

| ՀԱՅԵՐԷՆ | ՔՐԴԵՐԷՆ | ՀԱՅԵՐԷՆ | ՔՐԴԵՐԷՆ |
|---|---|---|---|
| Ալուք | Ալուք | Գաղայ | Գաղէ |
| Ախոռ | Ախօ | Գաղիշ | Գըղիշ |
| Ամբար | Էմբար | Գերան | Քէրան |
| Առաստաղ | Առիք | Գերանդի | Գէլէնտի |
| Առեղ | Արէղ | Գոմ | Գօվ |
| Ասող | Ասօղ | Գոմէշ | Գամէշ |
| Արջ | Հըրջ | Գուրպայ | Գօրէ |
| Բազայ | Բազէ | Գրիւ | Գրի |
| Բակլայ | Բակլէ | Դարձ | Դարս |
| Բաղարջ | Փաղաջ | Դէզ | Դէզ |
| Բաճիկ | Բաճիկ | Դող | Թայ |
| Բամպակ | Պամպու | Դու | Դու |
| Բարձ | Բարկէլ | Դուռն | Դէրի |
| Բեռն | Բար | Դրամ | Դրաֆ |
| Բորանի | Բորանի | Եղբայր | Բըրայ |
| Բտեմ | Բիստ պըկեմ | Եղէգն | Նէգ |

| ՀԱՅԵՐԷՆ | ՔՐԴԵՐԷՆ | ՀԱՅԵՐԷՆ | ՔՐԴԵՐԷՆ |
|---|---|---|---|
| Ընգոյզ | Գօզ | Կրակ | Ակըր |
| Թաթպան | Թաթըկ | Հազար | Հէզար |
| Թալուկ | Թալ | Հաւկիթ | Հէ |
| Թառ | Թառ | Ձաւար | Սաւար |
| Թարմ | Թազէ | Ձըձում | Սըսում |
| Թեփսի | Թէփիւր | Ճանիճ | Ջըմջըմ |
| Թոնիր | Թէնիւր | Ճիւղ | Ճըկ |
| Ժաժիկ | Ժաժի | Ճլօր | Ճըլօլ |
| Լիճ | Լիճ | Ճնճղուկ | Ճուկ |
| Լօշ | Լօշ | Ճոռ | Ճօռ |
| Խազէզ | Խաղէզ | Ճրագ | Ճրայ |
| Խաշած | Խաշանտի | Մազ | Միւ |
| Խաշեմ | Պըխաշինըմ | Մածուն | Մաստ |
| Խար | Խառ | Մակաղ | Մէղէլ |
| Խժեմ | Վ_ախոմ | Մաճ | Մանճ |
| Խռիւ | Խռիֆ | Մայր | Մակ |
| Խօտաղ | Խօտաղ | Մանգաղ | Մանկաղ |
| Ծեկ | Ճէկ | Մաշ | Մաշ |
| Ծիլ | Ջիլ | Մաշարայ | Մըշարէ |
| Ծիծ | Ճըճըգ | Մառան | Մառան |
| Կամն | Կամ | Մատակ | Մանկ |
| Կապ | Կապ | Մարգարիտ | Մրարի |
| Կարաւան | Կարւան | Մարդ | Մէր |
| Կաքաւ | Կեաւ | Մարդակ | Մարդակ |
| Կերճ | Կէրճ | Մաքի | Մի |
| Կոկով | Կակըլ | Մեղու | Մէշ |
| Կող | Կօղ | Մեռանիմ | Պըմրըմ |
| Կոճ | Կօճ | Մեռաւ | Մըր |
| Կոյր | Կօր | Մեռեալ | Մըրի |
| Կորանամ | Կօռ պըպըմ | Մկրատ | Մէկէս |
| Կորեկ | Կիւրիկ | Մոլեմ | Մոլէ պըկեմ |
| Կուզ | Կիւզէ (–––) | Մուկ | Մըշկ |
| Կռան | Կեռան | Մսրանի | Մսրանի |
| Կռուիմ | Կռէն պըկեմ | Մրջիւն | Միւրի |

| ՀԱՅԵՐԷՆ | ՔՐԴԵՐԷՆ | ՀԱՅԵՐԷՆ | ՔՐԴԵՐԷՆ |
|---|---|---|---|
| Նազեմ | Նազան պըկեմ | Վառել | Վառըկ |
| Նոր | Նիւ | Վարագ | Պէրագ |
| Նուռն | Հընար | Տաշեմ | Պըթալէշըմ |
| Շագանակ | Շամպէլութ | Տաշտ | Տեաստ |
| Ճաղ | Շաղ | Տատրակ | Տէտէուիլ |
| Շաղափ | Շաղափ | Տարեկան ([illegible] | Տարէկան |
| Շամփուր | Շիշ | [illegible]) | |
| Շարան | Շարան | Տաւար ([illegible], | Տէուար |
| Ճեմ | Շիփանէ | [illegible], | |
| Շողգամ | Շէլըմ | [illegible]) | |
| Շուկայ | Սուկ | Տնազ | Տնազ |
| Ոսպն | Նիսկ | Տուրիկ | Տիւր |
| Որայ | Օրան | Տրամ | Տէհտ |
| Ունկի | Վոկի | Տրկաւ ([illegible] | Տարըկի |
| Ջիր | Ջիրըկ | [illegible]) | |
| Ջորս | Ջար | Ցախաւել ([illegible] | Սախաւէլ |
| Պանիր | Պէնիր | [illegible]) | |
| Պապ | Պապիր | Փարփառ | Փարփառ |
| Պառաւ | Պիր | Փերթ ([illegible] | Փինէ |
| Պարտէզ | Փառէզ | [illegible] | |
| Պեղ | Պէղ | [illegible] | |
| Պուխէրիկ | Պըխէրի | [illegible], | |
| Ջերմ | Գէրմ | [illegible]) | |
| Ռէհան | Ռըհան | Փշրուկ | Փշրիկ |
| Սակաւ | Սակառ | Փոր | Ուր |
| Սարդիոստան | Սէրէնտօստ | Փչեմ | Փըֆ պըկեմ |
| Սարեկ | Սէկ | Քալամ | Քէլէմ |
| Սիւն | Ստիւն | Քաշեմ | Պըքէշեմ |
| Սմբակ | Սըմ | Քար | Քէուըր |
| Սուր | Շուր | Քիշ | Քաշ |
| Սպիտակ | Սպի | Քերիչ | Քանիչ |
| Սռատ | Սըռատ | Քէն | Քէն |
| Սխտոր | Սիր | Քըրչ ([illegible]) | Քընջ |
| Ստուար | Ստուր | Քունջ | Քընջ |

Քրդերէն ասացուածք հեռի են ի Հայերէն ասացուածոց ։ Մեք ի մեր լեզու ասեմք · Գնացի , բերի հաց · նոքա ասեն . Ես գնացի , ինձ հաց բերի ։ Մեք ասեմք · Ննջեցի , կամ քնացայ · նոքա ասեն . Ես ի քուն գնացի ։ Մեք ասեմք , մոռացայ · նոքա ասեն · Մոռացօնս արարի . (ըստ գրաբար լեզուի) կամ, Ցիմ մտաց գնաց ։ Նոցա կրաւորական բայեր գամ բայով կու շինուին . զոր օրինակ · մեք ասեմք · Սպանաւ . նոքա ասեն · Եկաւ ի սպանումն ։ Նոցա յատկացուցիչներ է բայիւ և առ նախադրութեամբ կու շինուին · որպէս՝ մեք ասեմք · Գետոյ ջուր , լերան ծաղիկ . նոքա ասեն · Ջուր առ գետ , ծաղիկն է լերան եւայլն ։ Նոցա յատկացուցիչ կու դրուի զկնի յատկացելոյն , և ածականն՝ զկնի գոյականի ։ Եթէ յատկացուցիչն նախադաս լինի յատկացելոյն , իմաստ բանին կ՚այլայլի , կամ լինի անիմանալի · Նոյնպէս եթէ ածականն նախադաս լինի գոյականին , իմաստն կու փոխուի · զոր օրինակ · Երբ ասեն Տուն մեծ , կու հասկնան Մեծ տուն · իսկ եթէ ասեն , Մեծ տուն , կու հասկնան Տան մեծն ։ Ի Քրդերէնի կան գրեթէ շատ սակաւ բառեր որոց Հայերէնն չունի գոնէ մի կամ երկու գիր ի նոյն Քրդերէն բառն · զոր օրինակ , փոր բառի Քրդերէնն է Ուր · և Ոսկր բառի ասեն Հասթի ։ Յառաջին բառին ո և ր , յերկրորդին՝ ս կայ

յերկուսին լեզուս։ Մեք ասեմք, Աշխատ. նոքա ասեն, Խապատ։ Ընդհակառակն, նոցա բառերէն ոմանք ի մեր գրաբարին կու գըտնուին։ Նոքա ճանապարհի ասեն Ռէհ. մեք եւս ասեմք, Ռահ։ Նոքա զմեր Չոգայ, Երթամ բայի անցեալ կատարելոյ որ է առաջին վանկն առնլով, նոյն բայի բոլոր ժամանակներ շինած են. զոր օրինակ մեր ներկայն՝ Երթամ, երթաս, երթայ, Քրդերէն է՝ Պը-չեմ, պը-չի, պը-չէ. մեր անցեալ կատարեալն՝ Չոգայ, չոգար, չոգաւ, Քրդերէն է՝ Չոմ, չոի, չո։ Իսկ մեք զՉո ինոցանէ առնլով ասեմք, Չուեմ, չուես, չուէ. կամ, Չու առնեմ։ Մեր ընդունելութեան ներկայն ող է. նոցայն՝ կեր. զոր օրինակ՝ մեք ասեմք, Աշխատող. նոքա ասեն՝ Խապատ-կեր, այլովքն հանդերձ։ Բայց ի մեր լեզուի եւս կայ այս մասնիկ։ Ս. Գրիգոր Նարեկացի ի ԾԱ. գլուխ և ի հինգ համարին ասէ. « Եւ պաղօթկերայ (այսինքն պաղօթողաց) բարկութիւն սուսերաւ մահու խողխողեալ »։ Ամենեցուն յայտնի է թէ Ասորիք հին ազգ են, և ունին հին պատմութիւններ, և բազում հին գըրոյցս։ Ցաւուր միում ի վերայ Քրդաց խօսէաք. Ասորւոց եպիսկոպոս մի ասաց թէ Ս. Գրիգոր Լուսաւորչի և մեծին կոստանդիանոսի ժամանակ բոլոր Քրդեր և Արաբացիք Քըրիստոնեայ էին, և երբ դարձան ի Մահմետականութիւն, մի մասն ի Քրդաց և յԱրա-

բացւոց միայն քրիստոնէական հաւատով։ Ոմանք Հայոց, այլք՝ Ասորւոց կրօնիւք միալով, զիւրեանց լեզուս առանց փոփոխման պահեցին։ Սոքա ազգաւ քուրդ և Արաբացի են, և հաւատով քրիստոնեայ։ Յետ այսորիկ իբր տասն կամ հնգետասան ամօք զկնի հարցուցի այլ եպիսկոպոսի որ Ասորի Հռոմէական էր, և ուսեալ էր Լատիներէն, Իտալերէն, Ասորերէն և Արաբերէն ի Հռոմ։ Սա յաւել ասել թէ յաւուրս Ս. Գրիգորի Լուսաւորչին և մեծին Կոստանդիանոսի երեք հարիւր եպիսկոպոսք կու նստէին յԱրաբիա. և թէ վրանաբնակ Արաբացիք զեկեղեցիս իւրեանց որ խորան էր՝ շրջեցուցանէին ընդ իւրեանս։ Անուանք Հայոց բնակելոց ի գաւառս որ ի մէջ Տիգրանակերտի և Սղերդու՝ են Ալի, Օսման, Ապտուլլահ, Լէվէնտ, Շէրէֆ եւն. իսկ Մահմետականաց անուանք՝ Խաչոյ, Մարգար, Պետոյ, Նազարէթ, Գորգոյ, Գրիգոր, եւն։ Հարցուցի զպատճառ, և առի պատասխանի թէ, Քրիստոնեայք Մահմետականաց անուններ կու դնեն իւրեանց որդւոց, և Մահմետականք՝ զՔրիստոնէից, որպէս զի իւրեանց որդիք չմեռանելով շատ ապրին։

Ոմանք որ ոչ գիտեն քրդերէն՝ ի Ռաշկոտան անուան՝ շ, և ի Մամքկանի մ և կ տառեր տեսնելով, կու կարծեն թէ Ռաշկոտան քրդեր՝ յԱրշակունեաց, և Մամքկանն ի Մա-

միկոնեան ցեղերէ են ։ Ռաշ՝ սեւ, եւ Կոտ՝ տուփ կու թարգմանուի, եւ Ռաշկոտան լինելով յոքնակի, սեւ տուփեր կու նշանակէ ։ Եթէ նոցա հարցուի, գիտեն եւ կու մեկնեն թէ ընդէր այն անուամբ կու կոչուին ։

Դարձեալ, երբ Հայք ազգականութեամբ ի միմեանց հեռանալով աղջիկ տան եւ առնուն, զանուանս ցեղից իւրեանց կու մոռանան. իսկ Քրդեր՝ ոչ. եւ զի են ցեղ ցեղ, ոմանց նախահօր անուն Ցառուտ է, եւ ցեղին անուն Ցառուտան. ոմանցն՝ Պէքիր, եւ ցեղին անուն՝ Պէքիրան. ոմանց Ալիջան է, եւ ցեղն կոչի Ալիջանան. Զայնոյն՝ կոչի Զայնիկան. Զալոյն՝ Զալկան եւն ։ Նոյնպէս Մամըկան Քըրդերու նախահօր անուն Մամէ է, վասնորոյ ցեղին անուն կու կոչուի Մամըկան. եւ ոչ թէ վասն զի յԱրշակունեաց եւ Մամիկոնեան ցեղերէ են ։

## ՅԱՂԱԳՍ ԱՐԵՒՈՐԴԵԱՑ, ՆՈՑԱ ԱՂԱՆԴԻՑ, ՀԱՒԱՏՈՑ, ԵՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

Սոքա ի Քրդաց կ'անուանին Էզտի, ի Թուրքաց՝ Եզիտ ։ Ինձ թուի թէ ըստ մեզ Արեւորդիք սոքա են ։ Ջունին գիր եւ գրագրութիւն ։ Լեզու նոցա է Քրդերէն ։ Անուանք նոցա են Այխոյ, Բրհոյ, Շամոյ, Միրոյ, Կա-

կոյ, փակոյ, Միրզա, Օղման, փուրթոյ, Օմար, խուտէտան, որ է Աստուածատուր, Համոյ, Զալինոյ, Նասոյ, Գալհոյ, Մահմուտ, Մամէտ, Ֆէրհոյ, եայլն:

Արեւորդիք զԱստուած արարիչ երկնի և երկրի կու ճանաչեն, Քրիստոսի կու հաւատան, բայց զամենաչար սատանայն եւս ջերմեռանդեամբ կու պաշտեն: Եթէ ասէ ոք առաջի նոցա Շէյթան, այնչափ կու բարկանան, եթէ հարկ լինի, մեռանին և կու մեռուցանեն: Ծ ի սկսեալ քրդերէն անուններ փոխած են, զոր օրինակ, Քրդեր կատուատի ասեն Շահտան, սոքա ասեն, Ջակարակ: Քըրդեր սանդրի ասեն, Շէհ, սոքա ասեն, Տարկէ սէրխուն, այսինքն՝ գլխոյ փայտ: Քրդեր ձիոյ պայտին ասեն Նալ, սոքա ասեն Սօլ—ա—համախուն, այսինքն ձիոյ կօշիկ: Այս վերջին բառ մօտ է Շէհլթանէս Նահլըթ բառերու, վասն որոյ կու զգուշանան:

Զչար սատանայն կ'անուանեն Տաուզ—է—մալաք (մէլայիք): Ի Մուսուլայ կողմեր կայ նոյն անուամբ հոյակապ շինուածովք ուխտատեղի, և ի նմա ի չափ և ի ձեւ աքաղաղի Տաուզ—է—մալաք անուն ոսկեպղնձեայ կուռք, որում սպասաւորող մարդիկ կ'անուանին Կաւալ: Սոքա չափազանց գինի և օղի կու խմեն: Տարին մի անգամ յաշնան եղանակի զկուռս իւրեանց առնլով կու գան շրջել յիւրեանց ժողովըր-

դեան ։ Ցեռլին աղքատք անգամ որ չունին զաւուրն պարէն՝ կու տան, թէպէտ դժուարաւ, քան դաշնեկան, և երբ կուռքն կ'երեւի, կարի լինի ջերմ եռանդեամբ երկրպագութիւն կու մատուցանեն այն պղծոյն ։ Ի ծագել արեգական զխուրեանց դէմս յարեգակն դարձուցանելով և զերկու ձեռս երկու երեսաց մերձեցուցանելով յաղօթս կան, ապա զերկու ձեռս կու քսեն յերկու երեսս, և դադարին ։ Ցերկու աչաց դէպ յերկու ականջ սակաւ մի մազ յայսկոյս և սակաւ մի յայնկոյս կու թողուն առանց սափրելոյ, և զծայրերն այնչափ կու կարեն՝ զի միայն սեւութենէ յայտնի են ։ Զխուրեանց չապիկներու փողպատ կամ օձիս բոլոր կու ձեւեն, վասն որոյ բոլոր փողպատ եւս կ'անուանին ։ Այս երկու նշաններն նոցա հաւատոյ և կրօնից էական մասունք են ։ Զխուրեանց արծաթն ի վարձու ոչ տան, և տոկոս ամենեւին չառնուն ։ Զգողութիւն իբրեւ արդար վաստակ կու համարին ։ Ասեն թէ երբ Քրիստոս Տէր ի խաչին բեւեռեցաւ, ինքեանք մեծ բեւեռ մի գողցան. նմին իրի Քրիստոս Տէր զգողութիւն իբրեւ արդար վաստակ կու համարի վասն նոցա ։ Եթէ վասն գողութեան երդումն տալ հարկ լինի, կ'երդնուն սուտ յանուն Աստուծոյ. բայց եթէ սախպուլին երդնուլ յանուն սատանայի, կու յայտնեն զգողութիւնն. յա-

նուն սատանայի չերդնուն սուտ ։ Երբ ճանապարհորդեն յերկիւղալի վայրեր, վերոյիշեալ նշանները կու ծածկեն ։ Իսկ եթէ հարցանես թէ ինչ ազգ են, և եթէ գիտնան թէ սուգիւ մեռանելոց են, զատոյգն խօսին · եթէ ուրանան՝ յիւրեանց հաւատոյ կու զրկուին, և այնուհետև եզիտ չեն ։ Եթէ սրտնեղին, զիւրեանց երես կու խաչակնքեն · որպէս մեք առնեմք · զայս՝ աչօք տեսած եմ ։ Մինչեւ 1835 փրկչի թուականին, այնչափ զօրեղ էին, զի ոչ ի տէրութենէ կախումն ունէին և ոչ ի Քուրդ պէյերէ ։ Իւրեանց զօրեղ ժամանակ, մինչդեռ ես տղայ էի, աչօք տեսայ զի Գալհոյ անուն երեւելի աղա մի ի նոցանէ զիւր զէնս հանելով և ի մի կողմն դնելով և զգլուխն բանալով մեծ եռանդեամբ մտաւ յեկեղեցի, զչորեսին անկիւնս, զբեմն, զՍ· խաչ և զԱւետարան համբուրեաց, և ել արտաքս ։ Բայց նոցա ազդու երդումն այս է · « Մասն և բաժին չունենամ ընդ Տաուզ—է—մալաքայ », որ է չար սատանայն ։ Նոցա դենպետք կ՚անուանին շեխ և փիր, և այս պաշտօն յորդւոց յորդիս նոցա ցեղին սեպհական է ։ Ոտանաւորներ ունին զորս ի բերանոյ ուսուցանեն միմեանց, և ասեն ի ծածուկ ի կատարել ամուսնութիւնս, ի թաղել զմեռեալս, և, ըստ իւրեանց աղանդոյ, ի պահանջել հարկին ։ Յորժամ գային առ իս, զերկու ձեռս իւրեանց

յիրեար մածուցանելով և զմատանց ծայրեր մերձեցուցանելով յիմ ձեռս և յիւրեանց բերան տանելով, կու բանային զձեռս իւրեանց և համբուրելով կու դնէին յիւրեանց ճակատոյ վերայ: Մի անգամ ի ճանապարհորդութեան Եղխուոյ կամ Արեւորդւոյ տուն իջեւանեցայ, և լսելով թէ միշտ զՔրիստոսի պատուական անուն կու յիշէին, հարցուցի. «Դուք զՔրիստոս ինչպէս կ'ընդունիք, կամ ինչպէս կու հաւատաք»: Պատասխանեցին. «Այնպէս որպէս դուք»: Ասացի. «Մեք կու դաւանիմք զնա Որդի Աստուծոյ և Աստուած ճըշմարիտ»: Պատասխանեցին. «Մեք եւս այնպէս կու դաւանիմք և այնպէս կ'ընդունիմք»: Յայլում նուագի ի խօսել իմ ընդ նոսա, ասացին. «Դուք կ'ասէք թէ Տաւղ-է-մէլիք յերկնից անկած է. խսկ մեք ասեմք թէ անկած չէ, այլ յերկինս է»: Այս ամենայն բանից մեծ մասն լսած եմ յԱրեւորդւոց բերանոյ, և զմնացեալն՝ ի բերանոյ Հայոց որ խառն ի միասին ի միում գեղջ բնակին ընդ Արեւորդեաց: Ի 1835 փրկչեան թուականին Սուլթան Մահմուտի հրամանաւ Րէշիտ փաշայն նուաճեաց զնոսա, և եղեն հպատակ: Այս Արեւորդեաց վասն յաւանդութենէ լըսած եմ թէ վանահայր վարդապետի միոյ խընամոց ներքեւ կային երկու ճգնաւորաց վանքեր. մին ամուրի արանց, և միւսն կոյս աղ-

ջկանց ։ Վանահայր վարդապետ յետ հոգալոյ զկարեւոր պէտս վանուցն , կ'երթայ ի Ս․ Երուսաղէմ. ապա չար սատանայն նոյն վանահօր կերպարանօք իբր այն թէ ստրջացեալ ի Ս․ Երուսաղէմ երթալոյ , ետ դարձաւ ։ Յետ այնորիկ իւր չար հրապուրանօք զայն երկուսեռ ճգնաւորներ համոզելով ընդ միմեանս կ'ամուսնացուցանէ , և կ'աներեւութանայ ։ Իսկ ճշմարիտ վանահայրն ի Ս․ Երուսաղեմէ գալով , և տեսնելով զնոսա յայն խայտառակ վիճակի , նա եւս թողու և կու հեռանայ . ապա յայն վանականաց ծնեալքն կու լինին Եզիտ կամ Արեւորդի ։ Յաւուր միում պատմեցի նոցա զայս , և պատասխանեցին . « Մեք իսկ եւս ասեմք թէ մեր նախկին առաջնորդվարդապետ էր » ։ Սոքա տարին աւուրս ինչ Մահմետականաց պէս ծոմ եւս կու պահեն ։

## ՅԱՂԱԳՍ ԼԵԶՈՒԻ ՊՈԼՍՈՅ ԵՒ ԳԱՒԱՌԱՑԻ ՀԱՅՈՑ

Կոստանդնուպոլսի Հայոց լեզուն , փափուկ է , և բանք նոցա քաղցր , բայց աւաղ , զի հոգ չտանելով զիւրեանց լեզուի մեծ մասն կորուսած են , և յետոյ ի Թրքաց մուրանալով նոր ի նորոյ բառեր և ոճեր հնարեալ և կազմեալ են ։ Թողլով ադամ, գըեմ, կըթեմ, բա-

ուեր, ի Թրքաց առնլով կ՚ասեն, քաշեմ, նետեմ և քամեմ. որպէս Սուրճ քաշեմ, Բուրդ նետեմ և Կաթ քամեմ: Ընդհակառակն Հայաստանցիք ասեն. Ալիւր, ձաւար, եւն. աղամ. Բուրդ գզեմ. Կաթն կթեմ: Նոյնպէս փոխանակ ասելոյ ընեցի, Կոստանդնուպոլսոյ Հայք ասեն Թրքաց ձեւով ծախու առի: Ասեն նոյնպէս ըստ Թրքերէնի, ձեռք անցուցի, աչքէ անցուր, Թող երթայ կենայ. փոքր անօթի է. ըզխնցս ելաւ, եւն: Ի մեր լեզուի կան տարբեր բառեր և անուններ, զորս Թուրքերէնն ի հասարակ խօսակցութեան մի բառիւ եւեթ կու թարգմանէ. զոր օրինակ, զխարդին, զբուրդն, զակօսթն և զբուրդ կ՚անուանէ Թուրքն օձակ. զհովիտ, զձոր և զձորադաւառ կ՚անուանէ տէրէ: փոխանակ շրջեմ, դարձուցանեմ, ոլորեմ, կործանեմ, չորս բառից ունի միայն դարձուցանեմ: փոխանակ գէճ, Թաց և խոնաւ բառից ունի միայն Թաց: փոխանակ չոր և ցամաք բառերու ունի չոր եւեթ, և որ ի կարգին: Զայսմանէ տես ի գաւառական անուանս որ զկնի: Թող զայս ամենայն. բ. գ. դ. ե. ձ. ո. ջ գրերու հնչմունս կորուսանելով զբ՝ փ, զգ՝ ք, զդ՝ թ, զե՝ է, զձ՝ ց, զո՝ օ, զջ՝ չ կու հնչեն. նաև շատեր կու պնդեն Թէ այն եօթն գրերն յատուկ հնչմունս չունին ամենեւին: Սղերդցւոց մայրենի լեզուն Արաբերէն է, ուստի և զծ՝ զ, զձ և զյ՝ ս կու հնչեն: փոխանակ գրելոյ ծաղիկ, կու գրեն զաղիկ. փոխանակ

ձորոյ՝ սօր, և փոխանակ ցօղոյ՝ սօխ կու գրեն։ ծի, զի, ձի, ցի և սի հնչմունք որչափ ի միմեանց տարբեր են, այնչափ եւս վերոգրեալ չորեքտասան գրոց հնչմունք օտար են ի միմեանց։ Ցիմ հայրենիս ուսմունք գրեթէ ոչ գոն, ի վերայ այսր ամենայնի այն ուսմիկ ժողովուրդ զայն գրերու հնչմունս այնքան կատարեալ ունի, մինչ զի Փերական և կանոն մի Սաղմոս կարդացողն երբէք զբ՝ փ, զգ՝ ք, զդ՝ թ, զե՝ է, զձ՝ ց, զո՝ օ, և զջ՝ չ ոչ կու հնչեն և ոչ կու գրեն. ի խօսելն զիւրաքանչիւր գիր իւր հնչմամբ կու հնչեն։ Արդարեւ զբառեր աղաւաղելով, նապաստակի տեղ լապտառակ, թամբի՝ թամբը, ճապաղիրի՝ ճապղիր, թափ քայլէի՝ թափը բէլա, կողկողելի՝ կոկղամ, փխրեմի՝ փրխեմ, լպրծիմի՝ լպլտրիմ, կօշտի՝ կըյօշտ, եւ. սակայն եթէ աղաւաղութիւնք ուղղուին, լեզու նոցա մերձենայ ի գրաբարն։ Իսկ եթէ զԹուրքերէն ասացուածս և ի նոցանէ թարգմանուած ձեւք ի Կոստանդնուպոլսեցւոց լեզուէ մաքրուի, կէս անգամ լեզուի նոցա չմնայ։ Որ ի Կոստանդնուպոլսոյ յԱսիոյ Հայոց գաւառներ գան, ջանան ծուել զլեզու նոցա, փոխանակ ղաղաւաղեալ բառեր ուղղելոյ։ Նաեւ զբ՝ փ, զգ՝ ք, զդ՝ թ, զե՝ է, զձ՝ ց, զո՝ օ, և զջ՝ չ հնչել կու տան իւրեանց աշակերտաց ի կորուստ Հայկական լեզուի։ Եթէ Կոստանդնուպոլսոյ Հայոց այժ-

*մեան ջանք և աշխատութիւն լինէր յԱսիական գաւառս, և գաւառացիք հոգ տանէին ուսման և գիտութեան և մաքուր խօսելոյ, նոցա լեզուն սակաւ կու տարբերէր ի գրաբարէն :*

## ԳԱՒԱՌԱԿԱՆ ԲԱՌՔ

| | | | |
|---|---|---|---|
| *Ագըն* (*) | 238 | *Աճառ* | 328 |
| *Ալոչ* | 358 | *Ամառն* | 474 |
| *Ալուք* | 343 | *Ամբար* | 110 |
| *Ալուճ* | 322 | *Ամոլ* | 163 |
| *Ախոռ* | 118 | *Ամոլ փոկ* | 123 |
| *Ախռխմ* | 625 | *Այծ* | 358 |
| *Ակութ* | 68 | *Անեղ* | 567 |
| *Ակնատ* | 74 | *Անթրոց* | 73 |
| *Ակռայ* | 527 | *Անժուռ* | 481 |
| *Ակռատ* | 506 | *Անեղ* | 231 |
| *Ակռիլ* | 566 | *Անծեղ* | 363 |
| *Աղամ* | 264 | *Անղան լար* | 230 |
| *Աղապատ* | 213 | *Անղան փայտ* | 232 |
| *Աղաւնի* | 361 | *Անուշուկ* | 480 |
| *Աղբխս* | 158 | *Անտառն* | 190 |
| *Աղիք* | 538 | *Ապռոն* | 164 |
| *Աղցան* | 477 | *Ապսպարեմ* | 610 |

(*) Զմեկնութիւն իւրաքանչիւր բառի գտանես ի ստորեւ ըստ Թուանշանին որ կայ առաջի բառին :

| | | | |
|---|---|---|---|
| *Առեղ* | 562 | *Բատիկ* | 38 |
| *Առ ի կողն* | 187 | *Բարեկամ* | 409 |
| *Առիչկան* | 226 | *Բարեմ* | 227 |
| *Առիք* | 116 | *Բարձր* | 416 |
| *Ասող* | 127 | *Բէտ* | 220 |
| *Ատամն* | 528 | *Բլիթ* | 490 |
| *Արեգդէմ* | 188 | *Բղիկ* | 5 |
| *Արմուկ* | 529 | *Բղուղ* | 2 |
| *Արպինջան* | 530 | *Բշտեմ* | 227 |
| *Արջառ* | 373 | *Բոլորկտուր* | 239 |
| *Արմնոց* | 42 | *Բոյլ* | 429 |
| *Արօտ* | 364 | *Բոյն* | 379 |
| *Արօրի կոճ* | 125 | *Բոյս* | 339 |
| *Արօրի նետ* | 124 | *Բոպիկ* | 536 |
| *Աւազ* | 200 | *Բոլ* | 75 |
| *Ափն* | 568 | *Բոլեմ* | 267 |
| *Աքլոր* | 352 | *Բոր* | 609 |
| *Բաղա* | 569 | *Բոց* | 444 |
| *Բաղէ* | 569 | *Բու* | 380 |
| *Բաղուկ* | 324 | *Բուճ* | 570 |
| *Բաղուկ ձեռին* | 532 | *Բունիկ* | 45 |
| *Բակլայ* | 484 | *Բուշ* | 541 |
| *Բահ* | 165 | *Բուռն* | 539 |
| *Բաղարջ* | 485 | *Բուռուղիկ* | 6 |
| *Բազմ* | 167 | *Բուսաւ* | 338 |
| *Բաճիկ* | 330 | *Բուք* | 433 |
| *Բանջար* | 488 | *Բռնուածք* | 491 |
| *Բաշ* | 437 | *Բռնցի* | 540 |

| | | | |
|---|---|---|---|
| *Բրդեմ* | 492 | *Գուրպայ* | 570 |
| *Բրդոն* | 494 | *Գուրպի փող* | 531 |
| *Բրդուճ* | 496 | *Գրիւ* | 33 |
| *Բրէտ* | 381 | *Գրանակ* | 438 |
| *Բրուտ* | 240 | *Գօղուէճ* | 332 |
| *Բրտին* | 241 | *Դալ* | 478 |
| *Գագաթն* | 526 | *Դալար* | 512 |
| *Գադայ* | 478 | *Դախ* | 365 |
| *Գադիշ* | 159 | *Դահ* | 366 |
| *Գաղ* | 230 | *Դամին* | 572 |
| *Գանդ* | 571 | *Դառնինճ* | 316 |
| *Գանի* | 328 | *Դարբին* | 235 |
| *Գառն* | 358 | *Դարձ* | 51 |
| *Գառնարած* | 138 | *Դարձուցանեմ* | 256 |
| *Գառն տարեւոր* | 354 | *Դարակ* | 61 |
| *Գաւաթ* | 35 | *Դարբին* | 235 |
| *Գետային* | 441 | *Դառնամ* | 274 |
| *Գերան* | 50 | *Դգում* | 326 |
| *Գերանդի* | 162 | *Դեղ անձին անեմ* | 274 |
| *Գզեմ* | 265 | *Դէզ* | 160 |
| *Գէժուկլ* | 273 | *Դմակ* | 367 |
| *Գէճ* | 428 | *Դուր* | 234 |
| *Գիլ* | 573 | *Դուրան* | 431 |
| *Գլորկլ* | 573 | *Դուխէճ* | 60 |
| *Գլուխ լերան* | 181 | *Դրանդի* | 57 |
| *Գոմ* | 84 | *Եղունկ* | 536 |
| *Գոռեխ* | 362 | *Եղուրջ* | 176 |
| *Գուշիկ* | 13 | *Երակ* | 537 |

Երակ մի անձրեւ 442
Երիկամ 368
Երինջ 371
Երտ 440
Երկայն վիզ 483
Դղում 483
Երկու տապակ 310
Երկու տակ 634
Զոթեմ 281
Զոխ 306
Զումփ 236
Ընթրիս 486
Թան 487
Թաթպան 574
Թակ 237
Թաղիս 543
Թամբք 374
Թանձր 410
Թառ 383
Թառիլ 382
Թասիկ 9
Թավուր 443
Թաւշիլ 335
Թեղանիք 544
Թեւ 182
Թեփ 421
Թէփսի 32
Թըվուր 443
Թիղ 545
Թիկունք 628
Թլուատ 618
Թծուծ 377
Թոնիր 62
Թուղ 498
Թուխ 422
Թուխս 63
Թուշ 547
Թուփ 334
Թռիլ 575
Թրիք 156
Թրծեմ 576
Ժաժիկ 489
Ժեխ 64
Ժուռ 65
Ժուռ գամ 269
Իլիկ 216
Լակ 423
Լակոտ 423
Լամբանք 10
Լաստ 47
Լար 231
Լարան 453
Լերան գագաթն 181
Լիսեռն 215
Լմեմ 565
Լպզտրիմ 548

| | | | |
|---|---|---|---|
| Լպրծիմ | 548 | րվու | 595 |
| Լող | 436 | Խուրձ | 145 |
| Լոկ | 425 | Խուփ | 26 |
| Լոր | 425 | Խստել | 614 |
| Լուծն | 119 | Խոփ | 126 |
| Լուսուտիկ | 454 | Խօռայ | 198 |
| Լօրող | 426 | Խօտաղ | 137 |
| Լօրողիկ | 426 | Ծամ. Ծամեր | 551 |
| Լօշ | 485 | Ծայր.ք բերդի | 97 |
| Լօռ կամ լօր | 427 | Ծառ | 345 |
| Լօփ | 67 | Ծափ | 4 |
| Խաղէզ | 327 | Ծեկ | 49 |
| Խաշնարած | 143 | Ծեփեմ | 295 |
| Խարճէկաթ | 70 | Ծըլաւ | 336 |
| Խեղամղիմ | 627 | Ծըկեմ | 49 |
| Խզուղ | 104 | Ծիլ | 337 |
| Խէշտրան | 432 | Ծիրան | 318 |
| Խիզար | 238 | Ծղոն | 149 |
| Խիճ | 199 | Ծներդ-ք | 226 |
| Խմբիլ | 276 | Ծվեմ | 275 |
| Խնձոր | 319 | Կաթիլ | 72 |
| Խոյ | 359 | Կաժ | 229 |
| Խոնաւ | 577 | Կալ | 151 |
| Խոնջան | 549 | Կախաղ | 617 |
| Խոնջնդարձ | 550 | Կաղպար | 439 |
| Խոռայ | 198 | Կաղպարիկ կամ | |
| Խոր | 413 | կաղպըրիկ | 8 |
| Խորվու կամ խո- | | Կաճ | 578 |

| | | | |
|---|---|---|---|
| Նամս | 150 | Նիր | 584 |
| Նանափ | 499 | Նծկեմ | 243 |
| Նան գամ | 269 | Նծկիլ | 303 |
| Նանեմ | 259 | Նծիկ | 242 |
| Նանդրիւ | 122 | Նղունձ | 633 |
| Նանթ | 27 | Ննէտ | 386 |
| Նասկածիմ | 277 | Նշտանոց | 55 |
| Նասկրէք կամ Նասկարէք | 71 | Նոթ | 40 |
| Նատար | 385 | Նոծիծ | 632 |
| Նարագ | 500 | Նող | 387 |
| Նարաս | 1 | Նոկոլ | 308 |
| Նարկտան | 579 | Նողոլ | 43 |
| Նարմնջակ | 207 | Նոզխաձագ | 44 |
| Նարպետ | 66 | Նոճոպեմ | 279 |
| Նարւան | 445 | Նոյա | 501 |
| Նացի | 458 | Նոշտ կամ Նլոշտ | 168 |
| Նաւ | 580 | Նոռի | 583 |
| Նեղեւ | 349 | Նորի | 429 |
| Նեղուեմ կամ Նեղւեմ | 270 | Նործանեմ Նորկոտ | 258 503 |
| Նեռ | 580 | Նու | 155 |
| Ներճ | 307 | Նուղ | 388 |
| Նթեմ | 564 | Նուղ մարդ | 388 |
| Նթխայ | 30 | Նուժ | 28 |
| Նթոն | 310 | Նունդ | 210 |
| Նթոց | 15 | Նունդ-իկ | 552 |
| Նիսեմ | 288 | Նուսր | 450 |
| | | Նուց | 553 |

| | | | |
|---|---|---|---|
| Կուան | 244 | Հոբալ | 389 |
| Կսկծալ | 278 | Հոսելի | 152 |
| Կսկուծ | 482 | Հովիտ | 183 |
| Կտաւ | 412 | Հովիւ | 142 |
| Կտաւատ | 166 | Հուղ | 582 |
| Կտուց | 384 | Հրամէն | 508 |
| Կտրատեմ կամ | | Հօն | 133 |
| կտրտեմ | 493 | Հօնած | 134 |
| Կրակահան | 581 | Հօտաղ | 137 |
| Կրակահանի քար | 581 | Ձար | 76 |
| Կրիճակ | 208 | Ձարէմաղ | 77 |
| Կրկուտ | 446 | Ձաւար | 504 |
| Կրտել | 282 | Ձեռաց թաթ | 522 |
| Կցան | 502 | Ձեռք մի | 613 |
| Կցեմ | 280 | Ձըմայ | 189 |
| Կօտ | 36 | Ձըձում | 25 |
| Հաղարթեղթեկ | 447 | Ձըմէն | 189 |
| [illegible] կամ | | Ձըմերուկ | 505 |
| [illegible] | 321 | Ձող | 246 |
| [illegible] | 18 | Ձողան | 245 |
| [illegible] | 622 | Ձոր | 191 |
| Հանդուցեմ | 268 | Ձորադաւառ | 192 |
| Հաց ու պանիր | 621 | Ձու | 509 |
| Հերգնամ | 449 | Ճախարակ | 209 |
| Հերու | 448 | Ճախարակի թեւեր | 211 |
| Հերուընեկ | 371 | Ճախարակի ոտներ | 212 |
| Հերուն | 451 | Ճախարակի չափիկ | 214 |
| Հնջան | 20 | Ճախրկի ականջներ | 217 |

| | | | |
|---|---|---|---|
| Ճախրկի լար | 218 | Մածուն | 510 |
| Ճախրկի թաթիկ | 218 | Մակառուղ | 624 |
| Ճան | 554 | Մակարդ | 514 |
| Ճանիկ | 78 | Մակաղիլ | 475 |
| Ճաշ | 507 | Մաղ՝ տան | 54 |
| Ճապաղիլ | 284 | Մակաղատեղ | 475 |
| Ճարել | 283 | Մաղումնչք | 615 |
| Ճարիկ | 557 | Մաճ կամ Մանճ | 228 |
| Ճետ | 392 | Մամուռ | 616 |
| Ճըլօր | 11 | Մանած | 220 |
| Ճիրեմ | 285 | Մանգաղ | 161 |
| Ճիւ | 533 | Մանգեռ | 171 |
| Ճխան | 58 | Մանեմ | 263 |
| Ճղակ | 585 | Մանիճ | 249 |
| Ճղլակ | 585 | Մանր | 419 |
| Ճղօր | 79 | Մաշարայ | 132 |
| Ճնճղուկ | 393 | Մաշք | 80 |
| Ճոպան | 169 | Մառան | 81 |
| Ճոռ | 12 | Մասուր | 331 |
| Ճու | 312 | Մասրայ | 225 |
| Ճուլթ | 348 | Մատակ | 479 |
| Ճուռն | 535 | Մատղաշ | 511 |
| Ճրագ | 586 | Մատղի | 82 |
| Ճրագու | 390 | Մարագ | 83 |
| Մաթրաթ | 22 | Մարդակ | 52 |
| Մազքաշ | 623 | Մաքի | 356 |
| Մալեմ | 260 | Մեղրէհաց | 516 |
| Մախաթ | 452 | Մեղրիհաց | 515 |

Մղեղ 340
Միջնավայր քաղաք 24
Մերան 513
Մխեմ 286
Մկնալուծ 323
Մկրատ 292
Մղեղ 154
Մշակ 136
Մոլեմ 294
Մորմոր կրակ 455
Մուխ 456
Մումիաքս 85
Մուր 456
Մուրճ 460
Մռեխ 154
Մռմռալ 293
Մռմռթալ 293
Մսուր 86
Մորանի 87
Յատեն 587
Յիշ 461
Յստակ 434
Յատկեմ 271
Նաղուկ կամ
Նաղուք 224
Նախիր 140
Նախորդ 141
Նաշախ 459
Նետ 210
Ներքին 418
Նօսր 411
Շալակ 555
Շալկուոր 555
Շաղ 342
Շաղափ 247
Շարան 350
Շեգլիմ 287
Շեգ 588
Շեղբիկ 88
Շեմ 56
Շերեփ 37
Շերտ 290
Շերտ 462
Շերտ 290
Շերտեմ 289
Շէկ 589
Շիշաք 355
Շիշկռիմ 291
Շիւար 556
Շիւղ, շղեր 248
Շրշէտ 347
Շրջեմ 257
Ոգոր 148–261
Ոլորեմ կամ Ոլրեմ 262
Ոլոգ 534
Ողն 590

| | | | |
|---|---|---|---|
| Ողոմ | 202 | Պալ | 195 |
| Ողորդ | 542 | Պախուրց | 398 |
| Ոռուամնք | 98 | Պահանդ | 89 |
| Ոսպն | 521 | Պատառ | 497 |
| Ոտնուրագ | 619 | Պատիճ | 172 |
| Ոտն լերան | 144 | Պատուհան | 90 |
| Որայ | 184 | Պատռոն | 59 |
| Որայն | 146 | Պարկ | 91 |
| Որթիկ | 370 | Պարկուճիկ | 92 |
| Որձ | 395 | Պարտկել | 297 |
| Որձայ | 341 | Պեղ | 131 |
| Որոջ | 355 | Պինչ | 377 |
| Որորոց | 113 | Պղտոր | 591 |
| Ուլ | 357 | Պճեղն | 399 |
| Ուլարած | 139 | Պճոճ | 559 |
| Ուլինդ | 139 | Պնակ | 34 |
| Ուկ | 296 | Պոչ | 367 |
| Ուղտ | 396 | Պոր | 314 |
| Ուսքուրայ | 14 | Պորանի կամ | |
| Ուրագ | 249 | Բորանի | 592 |
| Ուրդ | 130 | Պորեմ | 313 |
| Ջամշեկ | 39 | Պորտ | 593 |
| Ջարկամ | 409 | Պուխէրիկ | 69 |
| Ջափուկ | 46 | Պուճախ | 115 |
| Ջիր | 517 | Պուտկալայ | 48 |
| Ջոր | 468 | Պուտուկ | 7 |
| Ջոխթրիկ | 21 | Պպկել, պպուկ | 398 |
| Ջորթան | 518 | Պտուտեմ | 259 |

Պտտուր 157
Պրակ 190
Պրտեմ 626
Ջախջախեմ կամ
Ջանջխեմ 299
Ջաղաց 202
Ջաղցի ցից 206
Ջոկ 594
Ջոկեմ 300
Ջոլ 147
Ջրհատ 207
Ջրտադ 16
Ջրտուն 205
Ռուպ 524
Սալ 197
Սալ դարձեալ 201
Սալար 196
Սալար քար 196
Սալոր 595
Սակառ 41
Սաղր 414
Սաղր տեղ 415
Սամի 120
Սամի թել 121
Սանդ 93
Սանդերք 96
Սանդր երկու նը-
շանակութիւն
ունի 251
Սանդի տուն 95
Սանդ.քար 94
Սատր 596
Սատրեմ 305
Սարակ 135
Սարեկ 99
Սարեկ չուան 100
Սարի ադին 185
Սարի կողն 186
Սարի ոտն 184
Սարի պառեկ 187
Սաւան 463
Սափոր 17
Սեկ 597
Սեռսուք 435
Սերսրեմ 301
Սերկեւիլ 317
Սըղկեմ 629
Սինձ երկու նշա-
նակութիւնու-
նի 322
Սինձ 351
Սիսեռն 520
Սիւն 53
Սխտոր 598
Սխտոր ծեծ 101
Սկիլ 302

| | | | |
|---|---|---|---|
| Սղոց | 254 | Տատրակ | 402 |
| Սոխաթան | 522 | Տաւար | 403 |
| Սողնակ | 202 | Տերեւ | 335 |
| Սոսկ | 424 | Տզրուկ | 465 |
| Սոր , սորալ | 208 | Տիղ | 466 |
| Սպւոր | 309 | Տիկ | 400 |
| Սպուիլ | 375 | Տկճոր | 400 |
| Սռատ | 103 | Տնազ | 560 |
| Սռնեմ | 599 | Տնկեմ | 306 |
| Սրի | 464 | Տուար | 631 |
| Վադ | 204 | Տուրիկ | 467 |
| Վառեկ | 391 | Տոփան կամ տափան | 107 |
| Վարոց | 173 | Տոփեմ, Տփեմ | 107 |
| Վերլին | 417 | Տրամ | 193 |
| Վէմ | 194 | Տրորեմ | 519 |
| Վիլակ | 221 | Ցախ | 467 |
| Վիլկեմ | 223 | Ցախաւել | 108 |
| Վռիկ կամ փռուշ | 523 | Ցածր | 416 |
| Տագդեղ | 524 | Ցամաք | 468 |
| Տալ ի մակաղ | 476 | Ցան | 469 |
| Տանիս , տանիք | 117 | Ցանգ | 600 |
| Տանձ , ( արմուտ ) | 320 | Ցանցառ | 601 |
| Տանուտէր | 105 | Ցաք | 602 |
| Տանտիկին | 106 | Ցից | 603 |
| Տաշտ | 31 | Ցնգնաւ | 406 |
| Տապակ | 111 | Ցրթաւ | 405 |
| Տապար | 457 | Ցուիցք | 620 |
| Տապղին | 323 | Ցուլ | 372 |

| | | | |
|---|---|---|---|
| ցուլ | 343 | քած | 394 |
| ցրուել | 304 | քաղհանել | 180 |
| փաղախ | 117 | քաղհանք | 179 |
| փալայ | 135 | քամել | 605 |
| փածեղ | 369 | քամոց | 473 |
| փայտատ | 175 | քաշիկ | 558 |
| փապար | 561 | քառէշտ | 153 |
| փարախ | 408 | քասայ | 23 |
| փարեկամ | 3 | քարթաթօշ | 563 |
| փարեմ | 266 | քեշ | 430 |
| փարչ | 19 | քերիչ | 255 |
| փարփառ | 346 | քերոց | 407 |
| փացի | 316 | քըրչ | 472 |
| փեթակ | 109 | քիլ | 546 |
| փեթակ մեղուաց | 111 | քիս | 606 |
| փերթ | 470 | քիրիճակ | 378 |
| փինչ | 471 | քշտել | 607 |
| փշրուկ | 525 | քոս | 612 |
| փոխինդ | 604 | քուլայ | 228 |
| փոկ | 472 | քունջ | 114 |
| փող | 531 | քուրայ | 252 |
| փոցխ | 170 | քուրձ | 608 |
| փուրխ | 177 | քուրչ | 472 |
| փուք ունդի և | 174 | քռաղ | 29 |
| փուք բերնի | 174 | քցիփ | 315 |
| փուքս | 253 | քօշ | 360 |
| փրխել | 178 | Օթեկի | 630 |
| քալամ | 325 | Օղ մանած | 222 |
| քախանք | 179 | Օղին կամ ըղին | 347 |

# ՄԵԿՆՈՒԹԻՒՆՔ ԳԻՒՂԱԿԱՆ ԲԱՌԻՑ

1. Կարաս, ([illegible]) ։
2. Բղիւղ կամ Բղող, է փոքր քան զԿարաս ։
3. Փարեկամ, փոքր է քան զԲղիւղ ։
4. Ճափ, քան զՓարեկամ փոքր է. ունի երկու կանթ ([illegible])։ Գերդաստանք որ բազում ընտանիս ունին՝ զՃափ կ'իջուցանեն ի Թոնիր եւ նովաւ Թան (ապուր) եւ այլ ինչ կ'եփեն եւ կ'ուտեն ։
5. Բղիկ կամ Բղճիկ, քան զՃափ փոքր է, նեղաբերան, լայնափոր եւ անկանթ ։
6. Բուռուզիկ, Բղճկի ձեւով է, բայց աւելի փոքր ։ Կարաս եւ Բղիւղ զնոյն ձեւ ունին, Փարեկամ եւ Ճափ փոքր ինչ կու տարբերին ։ Նոյնպէս Բղճիկ եւ Բուռուզիկ փոքր ինչ տարբեր ձեւ ունին ։ Այս էր առաջին ձեւ Թակուկի ։
7. Պուտուկ կամ Պտուկ գրեթէ Կ. Պոլսոյ պուտանց ձեւ ունի, բայց այնքան մեծ է, զի քսան հոգւոյ կերակուր կ'եփի ի նմա ։ Քան զայն փոքրն կոչի միջնաւոր պտուկ ։
8. Կաղպարիկ կամ Կաղպրիկ Պուտկի ձեւ է, բայց քան զՊուտուկ փոքր ։
9. Թասիկն քան զԿաղպրիկ փոքր է, նեղաբերան եւ երկկանթ ։ Բարակ եւ կարճ չուանի զմի ծայրն ի մի կանթէն եւ զմիւս ծայրն ի միւս կանթէն անցուցանելով զերկու ծայրսն կու կապեն յիրար, եւ կերակուր լցուցանելով ի Թասկին կանայք կամ աղջկունք յայն չուանէ կու բռնեն, եւ զԹասիկն ի կախ կու տանին ի լեռներ եւ դաշտեր աշխատաւորաց ուտելու համար ։
10. Լամբանք, վեր յիշուած չուանի անուն է ։
11. Ճլօր ([illegible]), շատ փոքր է, ունի մի կանթ, եւ երկու տեսակ է. միոյ տեսակի բերան բոլոր է որպիսիք կան հողէ ամաններ վաճառողաց խանութներ. միոյ տեսակի բերան ճոռ է, այսինքն ցռկաւոր, նման սրճարանի ([illegible]) ։
12. Ջայս անուն տան իբրեւ վերադիր Ճլօրի, Ճոռ Ճլօր ։ Կան արք կամ կանայք որոց շրթունք ի ծնէ ճեղքուած

են եւ ատամներ կ'երեւան , սոցա եւս ասեն ճռռբերան ։

13. Գուշիկ կամ կուռայ կու կոչուին ամանք յորս աղ, ծը-խախոտ եւ սոյին նման նիւթեր կու դնեն . նաեւ անուշի աման կարէ կոչուիլ Գուշիկ ։

14. Ուսքուրայ , են ամանք, նման այն ամանոց ուր մածուն շինելով երկու դահեկանի վաճառեն ի Կ. Պոլիս ։

15. Կժոց , ունի մի կանթ , բերանոյ լայնութիւն է իբր մի քիլ, բարձրութիւնն է ի չափ սափորոյ եւ կու տանի չորս կամ հինգ քաշ ջուր ։

16. Ջրտագ , քան զՍափոր մեծ է , ունի երկու կանթ, եւ մար-դոյ ձեռն որչափ եւ մեծ է, դիւրաւ կու մտանէ ի նորա բերան , կանայք նովաւ ջուր ջեռուցանեն ։

17. Սափորք կան մեծ եւ փոքր , մեծն կու տանի վեց կամ եօթն քաշ ջուր ։ Կ. Պոլսոյ մեծ կուժք սափոր են , բայց Հայաստանի սափորք այլ ձեւ ունին ։

18. Համալիկ կամ Խամալիկ եւ Սափոր՝ միեւնոյն են ։

19. Փարչ եւս Կ. Պոլսոյ փոքր ([illegible]) են , բայց Հայաս-տանցւոցն աւելի ձեւաւոր են , նեղաբերան եւ գեղեցիկ . կու տանին մի քաշ ջուր ։

20. Հնջան Կոստանդնուպոլսոյ մեծ ([illegible]) են ։ Ի Հայաս-տան լաթ կու լուանան ի նոսա ։

21. Ջոխթրիկ , փոքր է քան զՀնջան եւ յատակն ուրեք ու-րեք ի չափ բեւեռի գլխոյ բարձր է ։ Ի ձմերան չոր թան տրորելով թան ապուր եւ այլ կերակուր կ'եփեն ի նմա ։

22. Մաթրաթ քան զՋոխթրիկ փոքր է , ուր կերակուր լցու-ցանելով կ'ուտեն ։

23. Քասայն քան զՄաթրաթն փոքր է ։

24. Միջնավար քասան քանզՔասայն փոքր է ։

25. Ջձում երկու տեսակ է . առաջինն իբր երկու կանգուն երկայն եւ բոլորակ է . բերանն է ի միջոցին , իբր մի քլաչափ երկայն եւ չորս մատնաչափ լայն . երկու գը-լուխքն են իբրեւ աշտանակի . երկու չուաններու երկու ծայրեր վեր ի գերան կապուած են , եւ մէջտեղուանք իջած են ի խոնարհ . ուստի Ջրձմի ընդ մի գլուխն մի չուան կ'անցուցանեն եւ ընդ միւս գլուխն՝ այլ չուան . ապա մածուն լցուցանելով ի նմա եւ երկու այր կամ

*երկու կին, մին առաջոյ կանգնելով ի միոյ գլխոյն եւ միւսն ի միւս գլխոյն կու հրեն դէպ ի միմեանս մինչեւ որ մածուն լինի թանն, եւ կարագն ջոկուի կամ զատուի։ Իսկ երկրորդին բերան եւ տակ նեղ կամ բարակ է, եւ փորն թանձր, եւ ի միջոցին կայ կանթ: Իսմա եւս մածուն լցուցանելով եւ ի բերանն սարեկ* ([illegible]) *դնելով բարակ չուանով կու կապեն պնդով, եւ բարձ մի ընդ փորովն դնելով եւ կանթէն բռնելով կու շարժեն, այնպէս զի, բերանն կ'ելանէ ի վեր, եւ յատակն կ'իջանէ ի խոնարհ, յետոյ յատակն կ'ելանէ ի վեր, եւ բերանն կ'իջանէ ի խոնարհ մինչեւ լինի թան։*

26. *Ջխուփն՝ կոստանդնուպոլսեցիք կոչեն* ([illegible])։
27. *Ջկանթ՝ կոչեն* ([illegible])։
28. *Կուժ քան զՄափոր փոքր է, եւ քան զփարչ մեծ։*
29. *Քռազ կամ զինւոյ Քռազն, է ի չափ Կժոյ կամ սակաւ ինչ աւելի փոքր. բայց կանաչ է եւ բերանն ճոռ* (*ցըռկաձեւ*, [illegible])*. Իսմա զինի լցուցանելով կու բերեն ի խընջոյս, եւ կթխանելով կու խմեն։*
30. *Կթխայն է աման ուր զինի լնուն եւ խմեն։ Փայտեղէն անօթոց շատք կու շինուին ի բնոյ ընկուզի ծառոյ։*
31. *Տաշտն է նեղայատակ եւ լայնաբերան, բոլորաձեւ, եւ ունի շրթունս։ Յայս աման ալիւր կու թրեն եւ շաղուեն։*
32. *Թէփսիի յատակ գրեթէ հարթ է, բերան բոլոր, եւ շըրթունքն իբր երկու մատնաչափ բարձր է դէպ ի վեր. Իսմա ցորեն, ձաւար եւ այլ ինչ կու լնուն եւ վեր կու նետեն. այսպէս հող, թեփ եւ ժեխ կու զատուին կ'երթան, եւ ցորենն, ձաւար եւ այլք դարձեալ անկանին ի նմա։ Ինձ թուի թէ այս բուն Հայոց բառ է, զանուն ի թեփէն առած է, եւ ըստ իս կարէ ստուգաբանիլ սրբիչ թեփոյ. եւ կամ թերեւս ափսէ բառէն յառաջ եկած է։*
33. *Գրիւ դարձեալ Տաշտ է, եւ այսպէս կու կոչուի Տաշտն որ կու տանի մի գրիւ ցորեն։*
34. *Պնակ, փայտէ Մաթրաթ է, Թուրքերէն* ([illegible])։
35. *Գաւաթն դարձեալ Պնակ է. ոմանք ասեն Պնակ եւ ոմանք Գաւաթ։*
36. *Կօտի բերան եւեթ նեղ է, իսկ փոր եւ յատակն լայն։*

Սորա մեծն մի քաշ միայն մեղր կու տանի ,

37. Շերեփի՝ Թուրքք ասեն ([illegible]) ։

38. Բատիկ քան զՇերեփ փոքր եւ կոթն կարճ է ։

39. Ջամչեկ քան զԲատիկ փոքր է , բայց կոթն երկայն է ։

40. Կոթի՝ Թուրքք ասեն ([illegible]) ։

41. Ցխուն քաշէ մինչեւ հարիւր քաշ յարդ տանող կողովներու ասեն Սակառ ։

42. Արսնոցն քան զՍակառ փոքր է ,

43. Կողովն քան զԱրսնոց փոքր է ։

44. Կողովաճագն քան զԿողով փոքր է ։ Բայց ամենեքին միեւնոյն ձեւ շինուած են ,

45. Բունկլի՝ Թուրքերէն ասեն ([illegible]) , եւ ի Կ. Պոլիս կու գործածեն միայն ձորձ դնելու ։

46. Ջափուկ՝ կանթ եւ խուփ ([illegible] եւ [illegible]) ունեցող կողով է , ուր կերակուր դնելով տղայք իւրեանց հետ կու տանին ի դպրոց ։

47. Լաստն՝ կաղնոյ Թանձր ուռերով հիւսուած է , երկու կուշտքն , այսինքն երկու քովեր բարձր են , ողն փոքր ինչ բոլորակ է , գլուխն մինչեւ քովերու ծայրերուն հաւասար է , դարձեալ աւելի բարակ ուռովք հիւսուած է . երկրագործք ի բարխլի վերայ դնելով աղբ , հող եւ այլ ինչ տեղէ ի տեղ կու փոխադրեն ։

48. Պուտկալայն զրեթէ մարդաչափ է . կան որ եւս աւելի բարձր են , բերանն նեղ , մէջն՝ լայն եւ բոլորակ ։ Ի սմա չորացեալ բանջար եւ այլ չոր նիւթեր կու լնուն ։

49. Ծեկ ։ Ի հարկի , առ ի չքամանել զտուն կամ զսենեակ յերկուս եւ առ չկորուսանել շատ տեղ , փոխանակ որմոյ ի ստորուստ կամ ի յատակէ մինչեւ յառաստաղ կաղնւոյ Թանձր ուռերով կու հիւսեն . այն հիւսուածոյ կ'ասեն [illegible]. եւ հիւսողոյն կ'ասեն [illegible] ։ Երբեմն այսպէս Ծեկ շինելով եւ շնչով ուռուցուած տկերուն վերայ դնելով իբրեւ նաւակ ի գետոց վերայ կու գործածեն ։ Զայն Ծեկ դարձեալ կ'անուանեն Լաստ . իսկ զծեկ կամ զլաստն եւ զտկերն ի միասին Հայք , Թուրք եւ Քուրդք կ'անուանեն ([illegible]) ։

50. Գերան ։ Հայաստանի գիւղացւոց տունք չորեքանկիւնի են . իւրաքանչիւր որմոյ երկայնութիւն ի չորս գրկաչափէ

մինչեւ յերկոտասան կամ եւս աւելի գրկաչափ է ։ Ապա մեծ եւ փոքր տանց համեմատ երեք չորս կամ եւս աւելի Թանձր եւ երկայն գերաններու մի ծայրն կու դնեն ի մի որմն, եւ զմիւս ծայրն՝ ի միւս որմն, եւ այնպէս զգերաններ կու շարեն յորմոց վերայ ։

51. Ցետ այնորիկ յայն մեծ գերանաց վերայ փոքր գերաններ կու շարեն, զորս կ'անուանեն Դարձ ։

52. Դարձերու վերայ աւելի բարակ եւ երկայն փայտեր կու շարեն, եւ զնոսա կ'անուանեն Մարդակ. ապա մարդակներու վերայ՝ ցախ, եւ ցախերու վերայ՝ խոտ, եւ խոտոյ վերայ՝ հող կու լնուն ։

53. իսկ ([illegible]) կ'ասեն Ս[illegible] ։

54. Գերաններու միջոցք կ'անուանին Մաղ ։ Կ. Պոլսոյ տունք ունին չորս գերան ([illegible]). իսկ Հայաստանի տունք՝ չորս Մաղ ։

55. Մի դուռն երկու կշտանոց ունի ։

56. Մի Շեմ եւ մի Դրանդի ։

57. Դրանդին զամուած է երկու կշտանոցի վերին ծայրերուն վերայ, եւ շեմն է ընդ ստորին ծայրիւք ։ Դրան երկու բարակ ծայրք, որոց մին դէպ ի վեր ելած է, յորմն, եւ միւսն՝ դէպ ի վայր, եւ որովք դուռն կու փակուի եւ կու բացուի. ուստի այն երկու ծայրք եւ երկաԹն կամ քար

58. որ ի ներքոյ ստորին ծայրի ի միասին կ'անուանին Ճխան ։

59. Դրան պատռոններուն Պոլսեցիք ասեն ([illegible]) ։

60. Դռխէճ բառնալի ([illegible]) դրան անուն է ։

61. Դարակ՝ ([illegible] եւ [illegible]) կ'ասեն ։

62. Թոնիր, է ([illegible]) ։

63. Թուխս, ճագ հանելու համար հաւկիԹներու վերայ նստող հաւն է ։ Մինչդեռ ճագունք ելած չեն, հաւուն եւ հաւկիԹներուն ի միասին ասեն Թուխս. իսկ յետ ելանելոյ ճագուցն, հաւուն ասեն Թխսմայր, եւ ճագուց՝ հաւու ճագ ։

64. Ճենին, Թուրքերէնն է ([illegible]) ։

65. Ճուռ, է ազոխ ([illegible]) ։

66. Կարպետն, է ([illegible]) ։

67. Թանձր եւ անզարդ կարպետի ասեն Լօփ ։

68. Երբ մի քար դնի յայս կոյս եւ մի քար յայն կոյս, եւ միւս

եւս քար ի Թիկանց, յերկոցունց լինի վառարան ([illegible]) եւ կոչի Ակուծ ։

69. Պուխէրիկ, է անուն վառարանի որ է շինուած ի մէջ որմոյ ի գրոց բարբառ ասի եւս Խարոյկ ։

70 Խարճնկած, է անուն այն երկաթոյ զոր կու դնեն վերոյիշեալ Ակուծ անուն Թոնրոյ վերայ, եւ զպղինձն կու դընեն ի վերայ խարճնկածոյ եւ Ակըթի ։

71. Կասկրէքն՝ Թուրքերէն կոչի ([illegible]) ։

72. Կաթիլ՝ Թուրքերէն ([illegible]) ։

73. Անթրոց՝ կրակ խառնելոյ փայտն է ։

74. Ակնատ է ի Հայաստան աշխարհի պատուհան յորմն որ ի մէջ երկու տան, վասն տալոյ միմեանց որ ինչ պիտոյ է. եւ եթէ զոք մտանեն ի տունն եւ չտան թոյլ տան մարդոց ելանել արտաքս, սոքա յակնատէն ազդ առնեն ի միւս տունն, եւ նոքա այլոց ։

75. Բովն կրկին է. առաջին՝ ոսկերչաց բովն է. երկրորդն՝ ամանն խարելոյ ցորեն կամ սուրճ ։

76. Ջար, է անուն ձիոյ ագւոյ մազերուն ։

77. Ջիոյ ագւոյ մազէ շինուած մաղ կոչի Ջարէ Մաղն ։

78. Ճանիկ, ասի դրան սողնակի ([illegible]) որով կու փակի դուռն առանց փականաց ։ Երբ անազախառն պղնձէ ([illegible]) գործին որ է արտաքոյ դրան՝ դարձուցանեն, սողնակն որ ի ներքս է՝ կու քաշուի, եւ կամ ամբառնայ ի վեր եւ դուռն կու բացուի ։

79. Ճղոր, է Ոլորան, զոր շինեն չուանոյ երկու ծայրն ի միոյ կողմանէ կապելով ի մի ցից կամ սիւն, եւ միւս երկու ծայրն՝ յայլ ցից կամ սիւն ։ Ապա բանալով դնեն ի միջի կտաւ կամ այլ ինչ նոյնպիսի, եւ որորեն զմանուկ դնելով ի վերայ կտաւոյն որ ննջէ ։

80. Մաշք, խաղախորդի արհեստով շինուած եւ մաքրուած ոչխարի մորթն է, զոր ի Հայաստան Երկանի ([illegible]), խմորոյ եւ շատ բաներու համար կու գործածեն ։

81. Մառան, է Թուրքերէն ([illegible]) ։

82. Մառղի է անուն փայտի որ նման է վառելու փայտի ([illegible]) ։

83. Մարագ, է անուն շինուածոյ ուր դնեն խոտ ([illegible]), յարդ

([illegible]) ։

84. Գոմ, ոչխարաց բնակելոյ տան անուն է ։
85. Մումրաքս, է ի գետնայարկէն ի վերնայարկն ելանելոյ սանդուղք ([illegible]) ։
86. Մսուր, է ([illegible]) ։
87. Մսրանի, է անուն փայտին որ տարածուած է մսրի ([illegible]) պռկին ([illegible]) վերայ ։
88. Շեղբիկ՝ կոչի դանակ որով հացավաճառք կու կտրեն հաց եւ կու վաճառեն ։ ի Հայաստան նովաւ միս, բանջար, ծխախոտ եւայլն կու ջարդեն ։
89. Պահանգ, է որմերու մէջ դրուած մեծ եւ երկայն եւ տաշուած գերանոյ անուն ։
90. Ջպատուհան բառ կու գործածեն նաեւ փոխանակ խորշի ([illegible]) ։
91. Պարկ՝ կոչեն զտիկն ի մորթոյ ոչխարի զոր խաղախորդի արհեստով մաքրելով կու շինեն, ալիւր, ձաւար, ցորեն, նաեւ բուրդ, բամբակ եւ սոցին նման նիւթեր նորա մէջ պահելու ։
92. Պարկուճիկ՝ կոչի զառին կամ ուլու պարկն ։
93. Սանդ, Թուրքերէն ([illegible]) ։
94. Գործին՝ որով ի սանդի լցուած նիւթեր կու մանրեն, եթէ քարեղէն է՝ կու կոչուի Սանդքար ։
95. Եթէ փայտեղէն է՝ Սանդխոռն ։
96. Սանդերք․ ի ծայրն իբր մի կանգուն երկայն, եւ իբր կէս կանգուն լայն տախտակի շարուած են կարգաւ խիտ առ խիտ երկու կարգ փոքր սաղանման շիւղեր, ընդ որս անցուցանելով զբուրդն զզեն ։ Այսպէս յոռի մասն բրդոյն կռուի ընդ սանտրն, եւ մաքուրն կու մնայ ի ձեռին զզողին ։
97. Զզեալ բրդոյ մաքուր մասն կոչի ծայրք ։
98. Զզեալ բրդոյ յոռի մասն կոչի Ցռուանք ։
99. Ցարեկն, է սեկի կտոր, զոր դնեն ի բերան ամանոյ յորում դնեն իւղ, պանիր, կաթն, մածուն եւ սոցին նման նիւթեր, եւ առասանաւ կու կապեն պնդով ։
100. Ջառասանն, որով կապեն պնդով զցարեկն ի բերան ամանոյ՝ կոչեն Ցարեկչուան ։

401. Սխտործեծ կոչի փոքր Ղանդն յորում կու ծեծեն սխտոր եւ այլ նոյնպիսի նիւթեր ։

402. Սողնակ, Թուրքերէն ([illegible]) ։

403. Սռատ, կոչի Մեծ Մաղ, որով ի կալի կու մաղեն ։

404. Խզուզ կոչի ցորենն եւ յարդ որ մնայ ի սռատի ։

405. Տանուտէր կոչի տան մեծն, որոյ հրամանին հնազանդին ընտանիքն ։ Տանուտէրն է որ տնօրինէ զգործս արտաքոյ տան ։

406. Ջտան գործս մատակարարող տան տիկինն է ։

407. Տոփան կամ Տփան, եօթն կամ ութ քաշ ծանրութեամբ շինուած եւ կոկուած կոճ է, ընդ որ անցուցանեն իբր մի գրկաչափ երկայն ծող. զոր գործաւորք բարձրացուցանելով իջուցանեն ուժգին ի յատակն տանեաց, որպէս զի ամրանայ հողն եւ ի ձմերան եղանակի ջուրն չծորէ ի վայր ։ Այս գործ կոչի [illegible] կամ [illegible] ։

408. Ցախաւել, Թուրքերէնն է ([illegible]) ։

409. Փեթակ, զաղք կովուց եւ զկարմիր եւ փոքր հող յիրար խառնելով շինեն մեծ ամաններ չորեքկուսի կամ բոլորակ, եւ չորացուցանեն յարեւու ։ Այս ամանովք պահեն ցորեան եւ այլ ունդ ։ Մեծամեծքն այս ամանոց մինչեւ տասն ջրուոյ բեռն ցորեն կու տանին. ի փոքունս եւ ի բոլորակս մեղուք մեղր կու շինեն ։

410. Փեթակ կոչուած անօթք կոչին նաեւ Ամբար ։

411. Մեղուաց անօթ է փեթակ ։

412. Տապակ, պղնձէ բոլորակ աման է, եւ ունի կոթ խինչ ի ծայր ։ ի տապակի կու հալեն իւղ, կ'եփեն խաւիծ, հաւկիթ եւ այլ սոցին նմանիս ։ Թուրքերէն ([illegible]) ։

413. Որորոց, Թուրքերէն ([illegible]) ։

414. Տան ներքին անկեանց անեն Քունջ ։

415. Իսկ քրծոյ անկեանց անեն Պուճախ ։

416. Տան առաստաղին ([illegible]) անեն Առիք. յատակին անեն Տախտ ։

417. Փազախ, է Թուրքերէն ([illegible]), ուր կու կապեն եզն, կով, ձի, ջորի, էշ եւ այլն ։

418. Ախոռ, է Թուրքերէն ([illegible]) ։

419. Լուծ, այն փայտն է զորոյ մի ծայրն կու դնեն ի միոյ ե-

զին վիզ, եւ միւս ծայրն ի միւս եզին վիզ. երկաթք կամ փայտք կ'իջանեն լծոյ իւրաքանչիւր ծայրի յերկուց ծակուց դէպ ի վայր. այլ երկաթներու կամ փայտերու երկու ծայրեր չուանաւ կու կապեն ընդ վզով կամ կոկորդով եզանց։

120. Սամի, է անուն լծոյ փայտերուն ընդ որ կապեն զեզինս։

121. Սամի թել, է անուն չուանին որով կապեն լծոյ փայտերուն ծայրեր։

122. Լծոյ միջոցին փոկով կապուած փայտեայ մեծ օղին (հալքա) անուն է Կանդրիւ։

123. Լծոյ փոկին անուն է Ամոլփոկ։

124. Արօրոյ երկայն փայտն՝ որոյ ծայր անցեալ է ի միջոյ կանդրուի՝ կու կոչուի Արօրի Նետ կամ Արօրի Ամպ։

125. Արօրի տակի փայտն յորոյ ծայրն կ'անցուցանեն երկաթ՝ կ'անուանի Արօրի Կոճ։

126. Արօրոյ երկաթոյ անուն է Խոփ։

127. Արօրոյ կոճոյ եւ նետի երկու ծայրերէն ելանեն ի վեր երկու փայտք որ զարօրոյ կոճ եւ զնետ յիրար կապեն։ Այս երկու փայտք կոչին Ասող։

128. Ի վերին ծայր Ասողի գամուած փայտն զոր երկրագործն միով ձեռամբ բռնելով զԱրօր կ'ուղղէ, եւ միւս ձեռամբ զեզինս կու վարէ, կու կոչուի Մաճ։

129. Ջարտ կամ զպարտէզ դիւրաւ ոռոգելոյ համար, արտի կամ պարտիզի մի ծայրէն մինչեւ ի միւս ծայրն կու բանան արօրով ակօսներ, որպէս զի յայն ակօսէ ջուր երթալով մինչեւ ի միւս ակօս ոռոգանէ։ Այս ակօսներ կու կոչուին Կորի։

130. Ակօսի կամ առուի ստորին կողմն կու ճեղքեն որ այն ճեղքէ ջուր երթայ տարածուի յարտի կամ ի պարտէզի վերայ եւ ոռոգէ։ Այն ճեղքուած տեղեր կոչին Ուրդ։

131. Եթէ արտի մի կամ երկու կամ աւելի տեղեր զէճ լինին, ի միոյ ծայրէն մինչեւ ի միւս ծայրն ակօս ձգելով, զայն զիճութիւն ծծելու համար զէճ տեղերէն կ'անցուցանեն, եւ այն ակօսի անուն է Պեղ։

132. Երբ ի պարտիզի կու բանան ակօսներ իբրեւ մի թզաչափ ի միմեանց հեռի, որպէս զի յայն ակօսներ կա-

ղամբ, պրաս, եւ այլ բանջար տնկեն, այն ակօսներու կ'ասեն Մշարայ կամ Մաշարայ ։

133. Երբ զարտերու ցաներ (ե+է) կու հնձեն աշխատաւորք, յարտի ի մի ծայրէն մինչեւ ի միւս ծայրն մասն ինչ կու հնձեն. երբ այն մասն կու սպառի, կու դառնան ի միւս մասն, եւ այսպէս կ'երթան յառաջ մինչեւ կու հնձեն զարտն ողջոյն ։ Արդ՝ այն մասեր կ'անուանին Հօն ։

134. Աշխատաւորն՝ որ վասն հնձելոյ ուղղէ զմասունս ցանաց կոչի Հօնած ։

135. Վանեցիք զօրական աշխատաւոր կ'անուանեն Սարակ. յիմ հայրենիս Հայն եւ Քուրդ ասեն Փալայ, այլք՝ Ըրկատ ։

136. Մի տարի կամ վեց եւ եօթն ամիս վարձաւոր աշխատողն կու կոչուի Մշակ ։

137. Ջպատանիս որ կ'արածեն եզինս՝ Հայն եւ Քուրդ կ'անուանեն Խօտաղ կամ Հօտաղ ։

138. Մարդոյ որ զառինս արածէ՝ ասեն Գառնարած ։

139. Որ զուլս արածեն՝ կոչին Ուլարած ։

140. Կովուց խմբի անուն է Նախիր ։

141. Եւ արածողաց անուն է Նախրորդ ։

142. Իսկ ոչխարաց խմբի անուն է Հօտ, եւ աշխարհաբառ՝ կոխր, եւ արածողի անուն՝ Հովիւ ։

143. Ամենեցուն միանգամայն ասի Խաշնարած ։

144. Ի հնձել զցորեն եւ զայլն, երբ հնձողի ձեռն լնանի կոչի Բռունք, երեք կամ չորք որ դրուին յիրարու վերայ՝ կոչի Որայ ։

145. Որայք որ կու դրուին յիրարու վերայ եւ կու կապուին՝ կոչուին Խուրձ ։

146. Հնձուած միահամուռ ցանն, մինչ չէ կալոտուած, կոչի նոյնպէս Որայ ։

147. Կապքն որով զխրձունս կու կապեն, եթէ յորայէ կամ ի խոտոյ շինուած են, կ'անուանին Ջով ։

148. Եթէ կապն որով կապեն զխրձունսն ի փայտէ շինուած է, կանուանի Ոգոր ։

149. Ի հնձելն մասունք հասկաց որ մնան իբր երկու մատ կամ աւելի ի հողոյ ի վեր կ'անուանին Ծղօտ ։

150\. Տախտակն՝ ընդ որով կրակաման (ւ-ն-ու [illegible]) քարեր շարուած են, եւ զոր ձիերով կամ եզամբք յորայի վերայ շուրջ կ'ածեն որ ջարդելով զորայն առնէ յարդ, կ'անուանի կամն ։

151\. Վայրն՝ ուր այս գործողութիւն կու կատարի կ'անուանի կալ ։

152\. Գործին՝ որով զջարդուած որայն ի վեր կու նետեն, զի հողմն զյարդ տանի, եւ ցորենի հատեր անկանին ի կալին յոմանց կ'անուանի Հոսելի ։

153\. Հոսելին յոմանց կ'անուանի Քառէշտ ։

154\. Մանր մանր յարդ, զորս հողմն տանելով կու հեռացուցանէ՝ գրաբար անուանի Մղեղ, աշխարհաբար Մռեխ ։

155\. Եզան եւ կովու աղբ կոչի Կու ։

156\. Ձիոց եւ իշոց աղբ կոչի Թրիք ։

157\. Ոչխարներու մանր եւ բոլորակ աղբ կոչի գրաբար Սպըտուր, եւ աշխարհաբար Պտտուր ։

158\. Ամէն տեսակ աղբ խառնուած եւ ի մի վայր դիզուած կու կոչուի Աղբիս ։

159\. Ցորենոյ խրձերու հասկեր ի հողոյ վերայ դրուած եւ յիրար կցած խիտ առ խիտ, որ բաւական գետին կու բըռնեն կու կոչուին Գաղիշ ։

160\. Ցորենոյ հասկեր զորս իրարու վերայ դնելով բարձրացուցանեն՝ կոչին Դէզ ։

161\. Գործին՝ զոր միով ձեռամբ կու բռնեն, եւ կու հնձեն զորայն կամ զցորեան՝ կոչի Մանգաղ ։

162\. Մանգաղ որ յերկայն փայտի ծայր զամուած է, եւ զոր երկու ձեռամբ բռնելով եւ շարժելով կու հնձեն՝ կ'անուանի Գերանդի ։

163\. Երկու եզանց կ'ասեն Լծոյ ։

164\. Տեղի գետոյն ուր քար եւ փայտ նետելով զջուրն կ'արգելուն, երթալ ընդ առուն՝ կոչի Ապառն ։

165\. Երկաթեայ թի ([illegible]) կոչի Բահ ։

166\. Կտաւատ, է ([illegible]) ։

167\. Բաղմ, է քթան ([illegible]) ։

168\. Բոլորակ եւ պինդ հող կոչուի Կոշտ կամ Կլոշտ ։

169\. Հաստ եւ երկայն չուան կ'անուանի Ճոպան ։

170. փոցխ է (կէշկէշ) ։
171. Ընդ փայտիւ որ է երկու գրկաչափ՝ կու շարեն երկու թզաչափ փայտեր իրարու մօտ, մեծ եւ ճղակ (չուքուռ) փայտ մի եւս կու գամեն ի նա, եւ յետ ցանելոյ սերմն ի հերկին վերայ, այր ոմն կանգնի յայն փայտին վերայ. եւ երկու զոմէշով շուրջ կ՚ածէ ի հերկին, որպէս զի սերմն եւ հող յիրար խառնուին ։ Զայն փայտ կ՚անուանեն Մանգեռ ։
172. Ոսպան, սխռան, կտաւատի եւ սոցին նմանեաց հասկեր կ՚անուանեն Պատիճ ։
173. Վՙարոգՙ, է դալար գաւազան ի չափ ծխափողի. երկրագործք սովաւ կու վարեն զեզինս եւ զգոմէշս ։
174. փուք կոչի նախ՝ ունդերու թեփն, եւ երկրորդ՝ օդն որ ելանէ ի բերանոյ, երբ կու փչեն զկրակ կամ զտիկ՝ ուռուցանելոյ համար ։
175. փայտատ, բրիչ (քիւրէկ) է, որով աշխատաւորք հող կու փորեն ։
176. Ի մարտի ամսեան ի Հայաստան ձիւնն այնքան կու պնդանայ, զի զոմէշ, ձի, ջորի եւ այլ անասունք զնան ի վերայ, եւ հազիւ նոցա ոտից հետք կու նշմարին ։ Այսպէս պնդացեալ ձեան ասեն Եղուրջ ։
177. Որպէս զի ցորենոյ արտերու ձիւներ արագ հալին, ի վերայ հող կու ցանեն, եւ այն ցանուած հողն կոչի փուրխ ։
178. Ձեան վերայ հող ցանելոյ ասեն փրխեմ ։
179. Ցարտի կամ ի պարտիզի բուսեալ չար խոտերու ասեն Քաղհանք կամ Քաղանք ։
180. Զքաղհան արմատախիլ առնելոյ ասեն Քաղ հանեմ կամ Քաղնեմ ։
181. Գագաթն է լերանց բարձրագոյն մասին անուն ։ Ամէն գագաթն է գլուխ, բայց ոչ ամէն գլուխ գագաթն ։ Քան զգագաթն ի վեր այլ ինչ չկայ, բայց քան զգագաթն ի վայր կան այնպիսի տեղեր, որ անուանին լերան գլուխ ։
182. Կան լերինք որոց գագաթներէն ի վայր ձիու ողին կամ քամակի նման երկայն տարածութիւնն կու կոչուի լերան կամ սարի Թեւ ։
183. փոքր թեւք որ լերանց գլուխներէն դէպ ի վայր կ՚իջնեն,

կ'անուանին սարի կամ լերան Մատունք, եւ այն մատանց մէջ ծորերուն՝ ուր ազգի ազգի ծաղիկներ, բանջարներ եւ խոտեր կու բուսանին՝ կու կոչուին Հովիտ ։ Կան դաշտեր յորս կան Թեւեր, եւ այս երկու Թեւերու միջոցն ծոր է, յորս արտեր, եւ մարգեր կան, եւ սորա եւս կ'անուանին Հովիտ ։

184. Ստորոտ լերանց Թեւերու որ իջանեն յեզերս դաշտաց՝ կոչի սարի Ոտն ։

185. Իսկ Թեւք լերանց որ չունին ստորոտ՝ կոչին սարի Ագիք։ Կան սարեր որոց ագիք տարածուած են բազում ժամուց ճանապարհ ։

186. Ուր սարերու կամ լերանց Թեւ եւ մատն չկան, եթէ սաստիկ զառ ի վայր չեն, կու կոչուին սարի Կող ։

187. Եթէ լերինք սաստիկ զառ ի վայր են, կ'անուանին սարի Պառեկ ։ Նաեւ հանդերձից բղանցք կոչին ագիք, եւ տեղին որ ի վեր է քան զբղանց՝ ասի պառեկ ։ Ճանապարհ որ է ուղիղ ի միջոցի կողի լերանց՝ կոչի զառ ի կող ճանապարհ ։ Ասեն եւս « Ա— է Լ— Գ— » ։

188. Լերան հարաւային երեսին ասեն Արեգդէմ ։

189. Լերան հիւսիսային կողման երեսին ասեն Զմայ եւ Զմէն ։

190. Անտառի ասեն Պրակ ։

191. Ձոր խոր որ է ի մէջ երկու լերանց, եթէ տուն, արտ եւ այլն չիք, կու կոչուի Ձոր ։

192. Ձոր որ լայն եւ ընդարձակ է եւ կան ի նմա գիւղեր, արտեր, մարգագետիններ՝ կու կոչուի Ձորագաւառ. ասեն նաեւ Ձորագնայ ։

193. Միատարր քարինք որ են ընդ հողով կամ արտաքոյ՝ կ'անուանին Տրամ ։

194. Մեծ եւ բարձր քարերուն ասեն Վէմ ։

195. Քար որ ունի լայն եւ հարթ կամ դիւր երես՝ կ'անուանի Պալ ։

196. Քարինք որոց երկու կողմն կամ երես դիւր է, կամ չէ կարի Թանձր կ'անուանին Սալար քար ։

197. Փայտեայ տախտակաց նման բարակ քարերու ասեն Սալ ։

198. Փոքր եւ գնդաձեւ այլ փոքր ինչ տափարակ քարերու անուն է Խօռայ ։

199. փորրիկ քարերու անուն է խիճ ։
200. Մանր մանր քարինք կոչին Աւազ ։
201. Գարբնաց սալ է ([illegible]) ։
202. փայտեղէն անօթք յորս կու լնուն ցորեն որ անտի իջանէ յերկանս, այն է ի ջաղացի քարինս եւ կու աղցուի՝ կ'անուանի Որոմ ։
203. փայտեայ փոքր աման, ուր ցորենն յողմէ նախ իջանէ եւ անտի ապա ի ջաղացի քարինս եւ կ'աղցուի՝ կ'անուանի Կրիճակ ։
204. Մեծ եւ անագին խողովակն ([illegible]) ընդ որ ջուրն իջանելով զջաղացի անիւն դարձուցանէ՝ կու կոչուի Վ.ագ, կամ ջաղացի Վ.ագ ։
205. Ջաղացի վարի յարկն ուր անիւն կու դառնայ եւ զքարն դարձուցանէ՝ յոմանց կու կոչուի Ջրտուն, եւ յոմանց՝ Շողտուն ։
206. Երկաթն որ ի միջոյ անուոյ անցնելով ելանէ ի վեր եւ զերկանաքարն դարձուցանէ՝ կ'անուանի ջաղացի Ցից ։
207. Երկաթն որ անցուկ է ի ցցին ծայր, եւ յորոյ վերայ հենեալ է երկանաքարն եւ կու դառնայ՝ կ'անուանի Կարմընջակ ։
207. փայտն որ ի պահանջել հարկին երբեմն ի խողովակն մտանելով զջուրն կու ցրուէ զի չաղայ՝ կ'անուանի Ջըրհատ, յոմանց՝ ջրխատ ։
208. Իջանել ցորենոյն յողմէն ի կրիճակն եւ անտի յերկանաքարն՝ կոչի Սորալ ։
209. Անիւն որով մանեն բամբակ՝ կոչի Ճախարակ ։
210. Կոճն որ այն անուոյ տախտակներու մէջ է՝ կոչի Կունդ ։
210. փայտն որ անցանէ ի միջոյ կնդին եւ տախտակաց՝ կոչի Նետ ։
211. Ճախարակի տախտակներ կոչին Թեւք ։
212. փայտքն որ յետոյ եւ առաջոյ կան, եւ որոց ի միջոյ եւս անցանէ նետն՝ կոչին Ոտք ճախարակին ։
213. Ջուանն որով տախտակներու ծայրք կապին յիրեար՝ կոչի Աղապատ ։
214. Լաթն որ կարուած է ի մէջ ծայրից տախտակաց եւ ի վերայ աղապատին՝ կոչի ճախարակի Շապիկ ։

215. Բոլորակ եւ տափարակ փայտն որ ճախարակի ոտից եւ տախտակներու միջոցին է, եւ որոյ, նաեւ ի տախտակներու կնդոյ եւ ի նորա ոտից միջոյ անցանէ ճախարակի նետն կ'անուանի Լիսեռն ։

216. Ծամփուրն՝ որով կու մանուի եւ յորոյ վերայ կու փաթթուի բամբակի մանածն՝ կոչի Իլիկ ։

217. Այն մասունք յորոց ի միջոյ իլկի մէջն եւ ծայր անցանեն՝ կ'անուանին ճախարակի Ականջներ ։

218. Զիլիկն դարձուցանող բարակ չուաններու անուն է ճախարակի Լար ։

219. Բոլորշի փայտն որոյ ի մի ծայրին միջոյ անցանէ ճախարակի նետն, եւ ի միւս ծայրէն այլ կարճ փայտ, զոր միով ձեռամբ կու բռնեն եւ զճախարակն դարձուցանեն՝ կ'անուանի ճախարակի Թաթիկ ։

220. Փոքր փայտն զոր միով ձեռամբ բռնելով զճախարակն դարձուցանեն՝ կ'անուանի Մանիճ ։

221. Գործին՝ զոր դարձուցանեն, եւ յորոյ վերայ կու փաթթուի մանածն որ յիլկին՝ կու կոչուի Վիլակ ։

222. Փաթթուած մանածն յելանելն ի վիլակէն եւ յետոյ՝ կու կոչուի Օղ ։ Այսպէս ասի մի օղ, տասն օղ մանած, եւլն ։

223. Զվիլակն դարձուցանելոյ ասեն Վիլկել, կամ մանած Վիլկել ։

224. Նազուք կոչի վիլակի նետի ստորին ծայրն որ ի կոճի միոյ վերայ զամուած է. զմանածի օղեր թանալով ի նորա վերայ կ'անցունեն, եւ զծայրն ի մասրայն փաթթելով կ'անցունեն յիլիկ. եւ ճախարակին դարձմամբ այն եւս կու դառնայ եւ մանածն փաթթուի մասրային վերայ ։

225. Մասրայի անուն արդէն է Մասրայ ։

226. Բուրդ մանելոյ գործւոյն անուն Առիչկան է ։

226. Անուն կեռ եւ փոքրիկ երկաթոյն որ ի գլուխ առիչկանի՝ է Ծներդ ։ Առիչկան յերից մասանց կու բաղկանայ, յորոց միոյ անուն է առիչկանի Գլուխ, երկրորդին՝ առիչկանի Պոչ, եւ երրորդին՝ առիչկանի Ծներդ ։

227. Զզզուած բուրդն երբ յիրար կու խառնեն, փոքր ինչ ոլորելով երկայնեն, եւ ձեռաց վերայ փաթթելով կու մանեն. այսպէս յիրար խառնելոյ եւ երկայնելոյ ասեն

Բարեմ ։

228. Երբ զգզուած բամբակ առնեն գնդակ գնդակ՝ այն գընդակներու ասեն Քուլայ, կամ բամբակի Քուլայ ։

229. Ջորս օղ բամբակի մանած միացունելով եւ սակաւ մի ոլբելով զգլուխներն յիրար կ'անցունեն, եւ այս կ'անուանի Կամ ։

230. Հասարակ կանգնոյ ([illegible]) ասեն Գազ. ճարտարապետական կանգնոյ ([illegible]) Նետ ։

231. Գզելոյ գործւոյն անուն Աղեղ է, ռամիկն ասէ Անեղ ։

232. Ցաղեաց ([illegible]) շինուած բարակ չուանի ասեն Լար ։

233. Փայտն որ զարնուելով ընդ լարն բամբակ կու զզուի՝ կ'անուանի Անդան փայտ ։

234. Անուն գործւոյն զորոյ բերան, փայտ ծակելոյ համար, դնելով ի փայտին վերայ եւ Թակով ([illegible]) զարնելով կու ծակեն զփայտն՝ կոչի Դուր ։ Ջղուռն հարկանելոյ գործին եւս կ'անուանի Դուր ։

235. Երկաթագործն կոչի Դարբին ։

236. Մեծագոյն կռանի անուն է Ջոմբ ։

237. Թակն է ([illegible]) ։

238. Ագբն, բամբակի մանածով շինուած գործի է, զոր ոստայնանկք ([illegible]) կոխելով կու բանան զմանած եւ կկոց ([illegible]) նետելով կտաւ եւայլն կու գործեն ։

239. Դերան մի բարձր տեղ կու դնեն, եւ ոմն ի գերանին վեբայ եւ այլ ոք ի ներքոյ կանգնելով կու սղոցեն ։ Այս սղոցի անուն է Խիզար ։

240. Եթէ գերանն ի գետնի կայ եւ ոմն յայս կոյս, եւ այլ ոմն յայն կոյս նստելով կու սղոցեն, այն սղոցի անուն է Բոլորկտուր ։

241. Խեցեղէն, այսինքն հողէ աման շինող ձեռագկտի անուն է Բրուտ ։

241. Կարմիր հողն յորմէ ամաններ կու շինուին կ'անուանի Բրտին ։

242. Երբ մանածն փաթութուելով կու լինի գնդակ, կ'անուանի Կծիկ ։

243. Զկծիկ փաթութելոյ ասեն Կծկեմ ։

244. Կռան է ([illegible]) ։

245. Ձորան է երկայն եւ բարակ փայտի անուն ։
246. Ձող է չգործուած երկաթոյ անուն ։ Ձող է նաեւ ([illegible]).
247. Շաղափ է գործի որ յորոյ ի մեղեխն փոկ փաթթելով կու քաշեն , եւ շաղափն մերթ յայս կոյս եւ մերթ յայն կոյս դառնալով զփայտ կու ծակէ ։
248. Շիւղ ասեն բարակ եւ փոքր շամփուրններու որովք զուրպայ ([illegible]) կու հիւսեն ։
249. Ուրագ է ([illegible]) ։
250. Սանդր կրկին է . մին այն՝ որով զգլուխ կու սանդրեն ։
251. Երկրորդն՝ յեղեգանէ շինուած է , եւ սովաւ ոստայնանկք կտաւ եւայլն կու գործեն ։
252. Գարբիններու հնոցի անուն է Քուրայ ։
253. Փուքն է ([illegible]) ։
254. Աղոց է ([illegible]) ։
255. Քերիչ է ([illegible]) ։
256. Շրջեմ , դարձուցանեմ , կործանեմ , պտուտեմ , կանեմ , ոլորեմ կամ ոլրեմ , մալեմ , բայերու գործածութիւն ի միմեանց կու տարբերին յիմ հայրենիս ։ Եթէ փայտի մի ծայրն յարեւելս եւ միւս ծայրն յարեւմուտս է , եւ տէրն ասէ ցծառայն « Դարձո՛ւր » , նա զարեւելեան կողմի զգլուխն կու տանի յարեւմուտս , եւ զարեւմտեանն կու բերէ յարեւելս , եւ կամ , եթէ եզն , կով , ձի եւայլ անասուն , յիւրեանց խմբէ հեռացած են , ասէ տէրն ցծառայն . « Գնա՛ , դարձուր » ։
257. Թուղթ , հանդերձ , եւայլ սոցին նմանս դարձուցանելոյ ասեն . « Շրջէ » ։ Ջանկողին , զվերմակ , զքար , զփայտ եւայլ սոցին նմանս վեր ի վեր շրջելոյ ասեն նոյնպէս Շրջել ։
258. Կործանել , է տապալել ինչ որ կանգուն կայ , զոր օրինակ՝ կոթող կամ կարաս որ կանգնեալ է ։
259. Ձի զպարտէզներու մեծ անիւներ կամ ճախարակներ կու Պտուտէ ։
260. Թանձր եւ երկայն չուան կամ ճոպան շինելոյ ասեն Կանեմ , այսինքն Ոլորեմ ։
261. Ցերկրագործութեան ոլորած փայտ յաճախ պիտոյ է . ուստի զդալար փայտեր ոլորելոյ ասեն Մալեմ ։

262. Ջմալեալ փայտ եւս կ'անուանեն Ոզոր։
263. Երբ զմանուած Թելն երկու տակ ([illegible]) անելով կրկին մանեն, ասեն Ոլորեմ կամ Ոլրեմ։
264. Ջճախարակ դարձուցանելոյ ասեն Մանեմ։
265. Երկան ([illegible]) դարձուցանելոյ ասեն Աղամ։
266. Բուրդ եւ բամբակ նետելոյ ասեն Գզեմ։
267. Եթէ կամին երկու կամ աւելի մասն առանց ոսկեր միս ի կողն Թոնրոյ կամ ակԹի մածուցանել, խորովել կամ եփել, զբերան դանակին ուրեք ուրեք կու քաշեն յայն մասանց վերայ, որպէս զի վաղ եփին։ Արդ՝ զդանակ այսպէս քաշելոյ ասեն Փարեմ։
268. Ջցորեն, սիսեռն, սուրճ եւ սոցին նմանս խարելոյ կամ խորովելոյ ոմանք ասեն Խարկեմ, այլք՝ Բովեմ։
269. Երկու չուանի կամ դերձանի ծայրեր յիրար կապելոյ ասեն Հանգուցեմ կամ Հանգուրցեմ։
270. Ջեմելոյ ասեն Ճուռ կամ Շուռ գալ։
271. Որիզոյ, ցորենոյ, լուբիայի եւայլ սոյնպիսեաց զստաբոտի ինչ որ խառն է՝ զատելոյ ասեն Ցատկեմ։
272. Բշտեմ է ([illegible]) առնել։
273. Գեժռիմ է ([illegible])։
274. Դեղ անձին անեմ, կամ զիմ դեղ անձին անեմ, անձամբ անձին զիւր դարման կամ ճնար գտանել է։
275. Գառնամ է ետ դառնալ։
276. Ջորիզն այսինքն զբրինձ, զոսպն, եւ զսոցին նմանս յափսէն լցուցանելով եւ ի վեր նետելով ունդեր Թափին ի գետին, եւ քար կամ հող կու մնան յափսէին. այս գործողուԹեան կ'ասեն Ծուեմ։
277. Իւղ, պանիր, բանջար, եւ սոցին նմանք, եԹէ զիւրեանց գոյն փոխելով սակաւ ինչ սեւնան, այն սեւանալոյ ասեն Խամրել։
278. Կասկածիմ, է սակաւ ինն երկմտիլ։
278. Կսկծալ, սաստիկ ճոգալ կու նշանակէ։
279. Կոճոպեմ կամ Կճպեմ կու նշանակէ զցորենի հասկն եւ զեգիպտական ցորենի գլուխն հատանել։
280. ԵԹէ երկու կամ երեք դերձանի կամ չուանի ծայրեր յիրար կապելով երկայնեն, ասի զչուաններ կցել ([illegible])

յիրար, ոչ թէ կապել։

281. Երբ կացին, փայտատ, մաշելով կու կարճանան եւ դարբին ի նոցա վերայ երկաթ դնելով երկայնէ, ասեն Ջոթել, գրաբար Ջօղել։

282. Նրտեմ է (է-էւ էր-մէ)։

283. Ճարել է հայթայթել զոր չունի ոք, փոխ առնլով կամ մուրանալով։

284. Ճապաղիլ է ցրուիլ (---ր-ո-նէւ)։

285. Ճիրեմ է (-է--ւմէ)։

286. Երբ երկաթեղէն գործեաց բերանք կու բթանան, դարբինն զնոսա դնելով ի քուրայն փքով այնքան կու փչէ մինչեւ լինին հրաշէկ, եւ ապա կու նետէ ի ջուր ցուրտ, այսպէս գործիքն լինին հատու. այսպէս առնել է Մխել։

287. Շեզիմ։ Երբ մարդ անկողնոյ, փայտի, եւ այլ սոյնպիսեաց մի կողմէն ի միւսն անցնի, ասեն մարդն զանկողին, եւայլն, շեզաւ։

288. Երկու կտոր առնել է կիսել, եւ երկու մասանց ասի կտոր եւ կտորներ։

289. Ջժմերուկ, զեխ եւ զսոցին նմանս մասն մասն առնել է Շերտել։

290. Շերտեալ մասունք իրիք կու կոչուին Շերտ։

291. Շիշկռիմ է (ււ-ւմ-է)։

292. Մկրատ է (մ-է--)։

293. Ի սոխոյ եւ սխտորոյ եւ ի սոցին նմանեաց, եւ կամ ի բորբոքիչ նիւթոց աչաց կսկծելոյ ասի Մռմռալ։

294. Մոլեմ է (-ււ-մ-է)։

295. Ծեփել է ճեղքեալ հողէ աման կրոյ, ծիթոյ եւայլ նիւթոց խառնուածով պատել։ Ցետոյ ի կրակի վերայ դընեն զամանն, որ կ՚ամրանայ եւ պնդի, մինչեւ կերակուր անգամ եփել ի նմա։

296. Ուկ մասնիկն ունի անցեալ ընդունելութեան ժամանակի նշանակութիւն. զոր օրինակ՝ շինուկ տուն, մեռուկ մարդ, հնծուկ արտ. այսինքն շինեալ տուն, մեռեալ մարդ եւ հնձեալ արտ։

297. Պարտկիմ է (-ււմ-է). զոր օրինակ՝ ասի ամբողջ ոչխարի միս յայս ինչ աման չպարտկի։

298. Պըպկել է պտկել . որպէս մրգին նախ կու պըպկի , եւ պըպուկն կամ կոկոն բացուելով լինի ծաղիկ , եւ ծա. ղիկն՝ միրգ ։

299. Ջախջախեմ կամ ջախջխեմ է (ե-վե+) ։

300. Ջոկեմ է զատել . զոր օրինակ՝ այսչափ ոչխար ի հօտէն ջոկել , զատել ։

301. Սերսեմ է մաքրեմ ։

302. Սկիլ կու նշանակէ (դ-ի-մ-գ) . բայց ընկղմիմ բայէն կու տարբերի . մարդ եթէ մինչեւ ի գօտին մխուի ի ջուր կամ ի տիղմն , կարէ ասել ընկղմեցայ . բայց եթէ աներեւութանայ ի մէջ ջրոյն կամ տղմին՝ ասի Սկաւ ։

303. Կծկիմ է (ե--ե-իւ օմ-ե) ։

304. Ցրուեմ կրկին է . մի՝ ցիր ու ցան առնել , երկրորդ՝ բաժանել ։

305. Կաղամբ , պրաս եւայլն տնկելոյ ասեն Սատրեմ ։ Իսկ տունկ տնկելոյ ասեն Տնկեմ ։

306. Ջոխ է անուն ընկուզի վերին կեղեւոյ ։

307. Ընկուզի երկրորդ կարծր կեղեւոյ անուն է Կերճ ։ Բուն ընկոյզն է ի կերճին ։ Նմանապէս կաղնոյ , շագանակի եւ սոցին նմանեաց կարծր կեղեւոյ ասեն Կերճ ։

308. Ջոխ , կերճ եւ ընկոյզ միանգամայն կոչին Կոկով կամ Կօկօվ ։

309. Յաշնան , երբ կերճն ջոխէն կու մերկանայ , կ՚անուանի Սպլոր կոկով ։

310. Ի բեկանելն եթէ ընկոյզն մնայ ամբողջ , կոչի Կթոն ։

311. Եթէ կթոնն երկու մասն բաժանի , մասունքն անուանին Տապակ ։ Կան այլ եւս իրք որոց երկու բաժինք կոչին նոյնպէս Տապակ ։

312. Եթէ ընկուզի կթոն չորս մասն բաժանի , այն մասունք կոչին Պճեղ ։

312. Ընկուզի կթոնի երկու տապակի կամ չորս պճղան միջի սեւ մասն կ՚անուանի Ճու ։

313. Ջգոխն յընկուզէն զատելով դանակի ծայրով , երկու բաժանել եւ զթարմ ընկոյզն հանել է Պորել ։

314. Թարմ ընկոյզն կոչի Պոր ։

315. Եթէ ընկոյզն ի կերճի կամ ի կճեպի ամուր է եւ դըժ-

ուարաւ կու հանուի, այն տեսակ ընկոյզ կ'անուանի Քցիփ ընկոյզ ։

516. Ջվայրենի խնձոր ոմանք կոչեն Դառնինճ, այլք՝ փացի ։

517. Սերկեւիլ է ([illegible]), յիմ հայրենիս, որպէս այլուր ։

518. Ծիրան է Ծիրան ։

519. Խնձոր է Խնձոր ։

520. Տանձ է Տանձ ։

521. Հազորան է ([illegible]), սպիտակ, մեծ եւ կարմրագոյն ։

522. Մանրագոյնն եւ կարի կարմիր կ'անուանի Սինձ, ոմանք կոչեն Ալուճ, այլք՝ Մկնալուճ ։

523. Ստեպղին ([illegible]) կոչի Տապղին ։

524. Ճակնդեղ ([illegible]) կոչի Բազուկ ։

525. Կաղամբի ասեն Քալամ ։

526. Դդում է ([illegible]) ։

527. Խազէզ է ինքնաբոյս բանջար որ ունի գլուխ իբրեւ սըխտոր, բայց փոքր յոյժ. քան զսոխն եւ սխտոր պինդ է ։

528. Գանի՝ թրքերէն ասի Արտուճ ։

528. Աճառ է ([illegible]) ։

529. Քաղհանք է անուն չար խոտոց որ բուսանի ի սերմանուած արտեր եւ պարտէզներ ։ Զսոսա արմատախիլ անելոյ ասեն Քաղհանեմ, կամ Քաղնքեմ ։

530. Եգիպտական ցորենի Հայեր եւ Քրդեր ասեն Բաճիկ ։ Ինձ թուի թէ Հայերէն բառ է, եւ ուղիղն Պատճիկ է. քանզի Պատիճ բառ ունիմք ։

531. Վարդենւոյ փոքր եւ կարմիր պտուղն կ'անուանի Մասուր ։

532. Երբ մասուրն աճելով կու բացուի եւ չորանալով լինի իբրեւ փայտ, կ'անուանի Գոդռէճ ։ Կանայք նովաւ սեւ կու ներկեն ։

533. Փայտեղէն տունկեր երբ փոքր ինչ կու մեծնան, Հայեր եւ Քրդեր կու կոչեն զնոսա ([illegible]) ։

534. Կաղամբի, շողգամի եւ սոցին նմանեաց տերեւներու ասեն Թուփ ․ մի խաւ սերոյ ([illegible]) եւս ասեն Թուփ մի սեր ։

535. Ծառերու տերեւոց ասեն Տերեւ ։

536. Ցաշնան տերեւոց դեղնելով թափելն է Թաւշիլ ։

537. Ջընդոյ եւ այլոց նմանեաց սերման բողբոջելն կոչի Ծլել •
537. Մատաղ բողբոջն կոչի Ծիլ ։
538. Ցնլանել բողբոջոյ ի հողոյ՝ ասեն Բուսաւ ։
539. Ամբողջ կանաչ բողբոջն կոչի Բոյս ։
540. Ծառերու, տունկերու, եւ խոտերու արմատոց ասեն Մզեղ ։
541. Բանջարներու, խոտերու եւ Թուփերու ծայրք որ կու բարձրանան, յորոց ծայրն սերմն կու գոյանայ՝ կ'անուանին Որձայ ։
542. Ջողունն որ ի սերմանէ եւ ի հողոյ ի վեր ելանէ՝ կոչի Շաղ ։
543. Երբ շաղն սակաւ ինչ կ'աճի, կոչուի Ցռուկ ։
544. Շաղն աւելի աճելով կու լինի Ալուք ։
545. Յետ այնորիկ կոչի Ծառ ։
546. Փարփառ է ([illegible]) ։
547. Օղին կամ Ըղին ինքնաբոյս բանջար է, սակաւ ինչ նըման պրասի ։
547. Ջըղւոյ արմատն չորացուցանեն, եւ կ'աղան ի ջաղացի ։ Ոստայնանկք յիւրեանց արուեստին կու գործածեն ։ Հայերէն կոչեն զսա Շրեշտ, եւ Թրքերէն՝ ([illegible]) ։
548. Ճուռ է Ողկոյզ ։ Խնձ Թոփ Թէ Ճիռն ազաւաղմամբ եղած է Ճուռ ։
549. Մրգի, շողգամի, եւ սոցին նմանեաց արտաքին մասին ասեն Կեղեւ կամ Կեղուի ։
550. Շարան է չոր Թզոյ, կաղնւոյ եւ նմանեաց շարուածն յառասանի ([illegible]) ։
551. Մարգագետնոյ բահով կտրատեալ մասունք կոչին Սինձ։
552. Աքաղաղ է ([illegible]) ։
553. Գառ մինչեւ գրեԹէ մի տարի կու կոչուի Գառն ։
554. Գառն կոչի Տարեւոր յետ միոյ ամի ։
555. Գառնն յետ երկուց ամաց կոչի Որոջ կամ Շիշաք ։
556. Որոջն յետ յղանալոյ եւ ծնանելոյ կոչի Մաքի ։
557. Այծն մատաղ՝ Ուլ է ։
558. Միամեայ ուլ կոչի Ամիկ ։
559. Ամիկն յետ երկուց ամաց լինի Ալոջ, կու յղանայ, եւ յետ ծնանելոյ կ'անուանի Այծ ։

560. Արու մաքին կ'անուանի խոյ ։
561. Արու այծ կ'անուանի քօշ ։
562. Աղաւնւոյ ասեն Եղուրնեկ ։
563. Մեծ ճանճի ասեն Գոռեխ ։
563. Անծեղ՝ պոչով երկայն , սեւ եւ սպիտակ թռչուն է, որոյ միս չուտուիր ։
564. Արօտ կարճ եւ մանր խոտերու անուն է, զորս կովեր եւ ոչխարներ կորզելով բերանով կուտեն ։
565. Այր որ անցեալ է զաւուրբք՝ կոչի Ալեւոր, իսկ կին՝ Պառաւ ։
566. Անասնոց եւ գազանաց. սողնոց եւ թռչնոց ծերոյն , ասի Գաճ կամ Գախ , եւ ոչ ծեր կամ պառաւ ։
566. Նոյնպէս ճնացեալ բանջարոյ եւ խոտոյ , ընդեղինաց եւ արմտեաց ասի նոյնպէս Գաճ ։
567. Գմակ է ազգ ինչ ոչխարի մեծ եւ լայն ագին , զոր ոմանք կու ճալեն եւ կու գործածեն իբրեւ կոգի ։
567. Իսկ ագի ոչխարի որ չէ այնպէս մեծ եւ լայն՝ է պոչ ։
568. Երիկամ, կամ երիկմներ կու նշանակէ ([illegible]) ։
569. Փայծաղին ([illegible]) ասեն առ մեզ Փածեղ ։
570. Որթիկ է ([illegible]) ։ Մինչեւ զիւր տարին լրացնէ՝ որթիկ է ։
571. Յետ այնորիկ կ'անուանի Հերուընեկ ։
572. Իբրեւ լինի երեքամեայ , եթէ էգ է՝ կ'անուանի Երինջ եւ կու յղանայ ։
573. Յետ ծնանելոյ կ'անուանի Կով ։ Իսկ եթէ որձ, այսինքն արու է եւ լինի երեքամեայ , եթէ կրտեալ չէ , կ'անուանի Ցուլ ։ Յետ կրտելոյ կոչի Արջառ ։ Իսկ յետ վարժելոյ եւ վարելոյ իբրեւ եզն՝ է Եզն ։
574. Ձիոյ ճամետի ([illegible]) ասեն Թամբ ։
575. Երբ զարտերն արօրադրելով սերմանեն եւ ցաքեն , եթէ մինչ չեւ է բուսեալ, անձրեւ գայ եւ զարտի երեսն պնդէ , այն պնդելոյ ասեն Սպռել ։ Սակաւ ինչ վախցողին եւս ասեն Սպռաւ կամ Սպռեցաւ ։
576. Ածուխին ասեն Գործելի ։
577. Թծուծ կոչի ճաւու կամ թռչնոյ կոկորդի ուռեցածն . քանզի ինչ որ ուտեն կ'երթայ անդր ։
578. Քիրիճակ է թռչնոց փոր ։

579. Եոյն՝ Թռչնոյ ([illegible]) է ։
580. Եուոյ ([illegible]) ասեն Եուվ ։
581. Երէտի Հայք եւ Քուրդք ասեն Ջակօլ, որ մեղուի ձեւով եւ նորա կրկին մեծութեամբ միջատ է, եւ ի մեղուանոց եւ կամ ի մեղուներու փեթակ մտանելով զմեղուներ կու խեղդէ եւ դուրս կու նետէ, եւ զմեղրն կ'ուտէ ։ Այս է զոր իմաստունն ասէ. « [illegible] » ։
582. Թռչնոց նստելն ի վերայ ծառոյ կամ ոստոյ, կոչի Թառան, Թառալ, կու Թառի ։
583. Հաւուց գիշերուան օթարանի ասեն Թառ ։
584. Թռչնոց բերանոյ ասեն Կտուց ։
585. Կաշւոյն որ բարձրացած է ի վերայ գլխոյ հաւուն՝ ասեն Կատար ։
586. Կնէտ մեծ միջատ է, որ ի յունիս եւ յուլիս ամսեան, երբ զկովեր կու խածանեն, զիւրեանց պոչեր կու տնկեն եւ կու փախչին ։
587. Կող որ է ([illegible]), ասի եւս Թոնրոյ եւ լերանց զառիվայրաց ։
588. Կուզ է ([illegible]) եւ Սապատողն ։
589. Հորալ աղաւնոյ տեսակէն է, կրկին մեծութեամբ աղաւնւոյ, եւ որսորդք Թշնամի են յոյժ նմա ։
590. Ճրագուն է Ճարպ ([illegible]) ։
591. Հաւու ձագեր երբ կու մեծնան, էգերն կ'անուանին Վառեկ ։
592. Որձերն, այսինքն արուներն կ'անուանին Ճետ ։
593. Ճնճղուկ է ([illegible]) ։
594. Ցիմ հայրենիս արու եւ էգ բառեր չեն գործածեր վասն մարդոյ, այլ՝ կին, աղջիկ, եւայլն ։ Իսկ վասն անբանից էգ, մատակ կու գործածեն ։ Գազանաց, շանց, կատուներու եւ անսուրբ անասնոց ասեն Քած ։
595. Արուներուն առ հասարակ ասեն Որձ ։ Եուզանդ յայս միտոն ասէ « [illegible] » ։
596. Ուղտ է ([illegible]) ։
597. Եզան, կովու, գոմիշոյ եւ սոցին նմանեաց երեսաց եւ բերանոյ ասեն Պինչ ։

398. Պախուրց է (ե––ւ–է) ։

399. Եզան, կովու, գոմիշոյ, ոչխարաց եւ սոցին նմանեաց ոտից ծայրերու որ երկու բաժնուած են՝ ասի Պճեղ ։

400. Տիկ է (Ե––ւ––մ) ։

401. Տկճոր է փոքր տիկ, ի մորթոյ զառին եւ ուլու ։

402. Տատրակ է (ք––կ––) ։

403. Եզն, կով, գոմէշ, որթիկ, նաեւ ձի, ջորի, էշ եւ սոցին նմանք կու կոչուին Տաւար ։

404. Եթէ սոքա խումբ կազմեն եւ երթան արածել, կոչին Նախիր ։

405. Անասնոց համար ասեն Ծնաւ. իսկ շանց եւ գազանաց համար ասեն Ցրթաւ ։

406. Փոքրերու ասեն Ցնգնաւ. զոր օրինակ՝ շուն ցրթաւ, կատու կամ մուկն՝ ցնգնաւ ։ Ձիոյ, իշոյ եւ սոցին նմանեաց ասեն Տրկաւ ։ Քուրդք եւս ասեն Տըրըկի ։

407. Գործին՝ որով զձիս եւ զայլ անասունս կու քերեն՝ կոչի Քերոց (ք–ւ–ա) ։

408. Աշնան գիշերներ ոչխարներ օթեւանելու համար ի չորս կողմն մարդաչափ որմ ածելով եւ ի վերայ դրան դուխէճ (եչէշէ դուռ) դնելով, կ'անուանեն Փարախ ։

409. Բարեկամ եւ չարկամ հակառակ նշանակութիւն ունին ։

410. Թանձր եւ նօսր՝ նոյնպէս ։

411. Կտաւ կամ Թանձր է՝ եւ կամ նօսր ։

412 Կ. Պոլսեցիք ի Թըրքաց առնլով ասեն հաստ եւ բարակ ։

413-414. Խոր եւ սաղր ասի ծովու եզերաց եւ ջրոյ ։

415. Սաղր ասի ուր անկանողն ոչ վնասի ։

416. Բարձրին հակառակն կոչի Ցածր ։

417-418. Վերին եւ ներքին նոյնպէս հակառակ են նշանակութեամբ. այսինքն՝ վերի եւ վարի ։ Ներք կու նշանակէ նաեւ ի ներս ։

419-420. Մանր մանր եւ բէտ ։ Բարակ ալեր եւ շատ փոքր բաներու ասեն մանր կամ մանտր, իսկ մեծամեծաց ասեն Բէտ ։

421. Թեփ է (ւեշեւ) ։ Բայց ընդոց Թեփն կոչի Փուք ։

422. Գեղեցիկ սեւոյ ասեն Թուխ, եւ հասարակ սեւոյ՝ Սեւ ։

423. Շան կերակրոյ ասեն Լակ ։

424-425. Մոսկ եւ Լոկ կու նշանակեն ([illegible]) ։
426. Լօլոզ եւ Լօլոզիկ է ([illegible]) ։
427. Լօր կամ Լօռ է Ջրի ։
428. Կան տեղիք ընդ որովք ջուր է, ուստի եւ յարեգական զօրութենէ ոչ չորանան ։ Կան նաեւ գետնափոր տուներ որ երբեմն տաք եւ երբեմն պաղ են, եւ կու մնան միշտ թաց ։ Այսպիսի տեղիք կոչին Գէջ ։
429. Բոյլ կոչին փայտ փուշք, խոտք ելն, խիտ առ խիտ բուսեալք ։
430. Սակաւ ինչ զառ ի վայր կամ զառ ի վեր տեղիք կ'անուանին Քեշ ։
431-432. Հարթ տեղիք կոչին Դուրան՝ յոմանց. յայլոց՝ Խէշտրան ։
433. Բուք է ([illegible]) ։
434. Անխառն իրք կոչին Ցստակ, որպէս դրամ, գինի, եւլն ։
435. Մաքուր մարդոյ, հանդերձի, տան, սենեկի եւայլն ասեն Սեռսուք ։
436. Լող է գործին՝ զոր միով ձեռամբ բռնելով յանտառի փայտ կու կտրեն ։
437. Փայտերու բարակ ծայրեր կ'անուանին Բաշ ։
438. Կոկ եւ բոլորակ փայտն որոյ երկու ծայրք բարակ են, եւ զոր բահանայք ի վերայ հայսին ([illegible]) գլորելով կու բանան նշխար եւ մասն կու շինեն, կ'անուանի Գրտնակ ([illegible]) ։
439. Այսպիսի նշխար շինելոյ կաղապարն կոչի Կաղպար ։
440. Ածուխ որ կէս փայտ է՝ կոչի Երտ ([illegible]) ։
441. Գետոյ եզերք կոչի Գետափ ։
442. Երբ սակաւ ինչ անձրեւ գայ եւ դադարի, ասեն Երակ մի անձրեւ եկաւ ։
443. Կ. Պոլսոյ Հայք ասեն. երկու, երեք տեսակ կերակուր, հագուստ եւայլն ։ Ի Հայս ուրեք ասի երկու, երեք Թաւուր կամ Թուուր կերակուր եւայլն ։
444. Բոզ է ([illegible]) ։
445. Կարւան է ([illegible]) ։
446. Կրկուտ կոչին փայտի կտորուանք, զոր ժողովեն կանայք եւ մանկտի ։

447. Հազարթերթ կամ Հազարթերթիկ է փոքր փորն որ ելանէ յորովայնէ կովու կամ ոչխարի ։
448. Հերու է անցեալ տարի ։
449. Քան զհերու կանխագոյն տարին կոչի Հերզընամ ։
450. Կուսք կոչի աւելորդ մասն որ կու մնայ ի ծիթապտղոյ, յընգուզոյ , ի կտաւատէ ծեծելոյ վասն ծիթոյ ։
451. Հերուն ([illegible]) է գործի կօշկակարաց որով բանան ծակ անցուցանել զասեղն ։
452. Մախաթ է Հերիւն որով կարեն քուրձերու բերան. Թըրքերէն ([illegible]) ։
453. Կարելու չուանի ասեն Լարան ։
454. Միջատն որ ի գիշերի փայլէ իբրեւ կայծ կ'անուանի Լուսոռիկ ։
455. Մոխրախառն մանր կրակի ասեն Մորմոր կրակ ։
456. Մուխ եւ Ծուխ սակաւ ինչ կու տարբերին ։ Ծուխ ելանէ ի բորբոքեալ կրակէ , մուխ ելանէ ի կրակէ որ չէ բորբոքեալ բոցով ։ Իսկ աղտն որ գոյանայ ի ծխոյ կամ ի մխոյ կոչի Մուր ։
457. Յիմ հայրենիս ոչ գործածի Տապար բառն. Թուի սակայն թէ տապար եւ կացին տարբեր են ։ Կ. Պոլսոյ կացիններու բերան շատ լայն է իբրեւ զտապակ, ուստի թուի թէ տապար նորա անունն է ։
458. Իսկ յիմ հայրենեաց կացիններու բերանոյ լայնութիւն հազիւ երեք մատ է , եւ ակներն , այսինքն կոթեր անցուցանելոյ կողմն մեծ է եւ բոլորակ ։ Ուստի կացին անուն նոցա պատշաճի ։
459. Դաչախ քան զկացին փոքր է , բերանն աւելի լայն քան զկացնոյն եւ ակն՝ փոքր ։ Ջնաչախ Քուրդք ի սրոյ տեղի կու գործածեն ։
460. Կայ՝ որոյ բերան իբրեւ շամբուր բոլորակ , սուր եւ կոր է, զսա եւս երբեմն իբրեւ սուր գործածեն , երբեմն եւս Նովաւ զգետին կու փորեն. բայց սորա անուն Մուրճ է ։
461. Հայք եւ Քուրդք մօր ([illegible]) տեղւոյ ասեն Յիշ ։
462. Շերտ ասեն ճմերուկի երկու կտորոց ([illegible]) եւ սոցին նմանեաց , որպէս եւ փայտի ճեղքեալ կտորոց ։
463. Սաւան է ([illegible]) ։

464. Դանակով զկաշին իբրեւ զչուան բարակ եւ երկայն կու կտրեն, եւ զայնպիսի կտորս կոչեն Սրի ։
465. Ցզրուկի սեն ճզրուկ ։
466. Ցղմի սեն Ցիլ ։
467. Ցոպրակին սեն Ցուրիկ ։ Քրդեր սեն Ցուր ։
467. Կաղնւոյ մանր չոր եւ բարակ ոստերու սեն Ցախ ։
468. Ջոր եւ Ցամաք տարբեր են ։ Երբ ջրոտ գետին, աղբիւրներ եւ սոցին նմանք կու չորնան, ասի Ցամաքեցան, եւ ոչ չորցան. իսկ լուացեալ ծորձերու, պտղոց եւ սոցին նմանեաց զորս դնեն յարեւու, սեն Ջորցան ։
469. Ցան՝ եզակին է ցանուց ։ Ցան սեն նաեւ չոր աղբի ։
470. Փերթ է անուն կտորոյ կաշւոյ, զոր ճնացեալ կօշկաց կու զործածեն ։
471. Հայք եւ Քուրդք փինչ կոչեն զգործին որով փայտ կու ճեղքեն. այսինքն բերան նորա դնելով ի ճեղքուածի փայտին, կու ծեծեն կռանով զգլուխն, որ մխի ի փայտն եւ ճեղքէ զնա ։ Թրքերէնն է ([illegible]) ։
472. Փոկ է ([illegible]) ։
472. Քուռչ է ([illegible]) ։
473. Քամոց է գործին ուր ջուր, գինի, կաթն եւ այլ հեղուկ լնուն, եւ զտեն ի մրրոյն ։ Թրքերէնն է ([illegible]) ։
474. Ամարանի եւ ի կէս աւուր զկովեր եւ զոչխարներ կու նստուցանեն յեզերս գետոց. տեղիքն ուր նստին նորա՝ կոչի Մակաղատեղ ։
475. Իսկ նստելոյն սեն Մակաղան կամ Մակղան ։
476. Երբ հովիւ զհօտն մակաղեցուցանէ, ասի հովիւ զհօտն կամ նախրորդ ըզնախիր եստ ի Մակաղ ։
477. Աղցան է ([illegible]) ։
478. Գաղայ է իւղով եփեալ հաց ([illegible]) ։
478. Նորածին կովի եւ ոչխարի կաթն կ'եփեն, կու լինի իբրեւ տկլի պանիր եւ քաղցր. այս է Դալ ։
479. Գոմիշոյ իգի սեն Մատակ ։
480. Անուշուկ կամ Անուշած կերակուր է ([illegible]) կերակուր ։
481. Անժուռ ասի կերակուր որ չէ պարարտ ։
482. Կ. Պոլսեցիք սեն. ի՞նչ համէսով կ'ուտէ. յիմ հայրենիս սեն. ի՞նչ նսկուծ կ'ուտէ ։

483. Գդում է ([illegible]) ։ Երկայնվիզ դդում է ([illegible]) ։
484. Բակլայ է ([illegible]) ։
485. Բաղարջ է ([illegible]) . իսկ Լօշ է ([illegible]) ։
486. Ընթրիս է Երեկոյեան ճաշ ։
487. Թան է ([illegible]) եւ Ապուր ։
488. Բանջար է ([illegible]) ։
489. Ժաժիկ է տկլի պանիր ([illegible]) ։
490. Բլիթ՝ փոքրիկ փաղարջ է ։
491. Բռնուածք է ([illegible]) ։ Ցիմ հայրենիս ասեն . Շողգամ, փարփառ եւ այլ սոցին նմանս կու բռնեմ, կը հասկցուի [illegible] դնել ։
492. Հաց ջարդելոյ ասեն Բրդեմ ։
493. Միս ջարդելոյ ասեն կտրտեմ, այսինքն կտրատեմ ։
494. ([illegible]) է Բրդոն ։ Արգանակի, այսինքն մսի ջրոյ, ասեն ձենձի ջուր ։ Ինձ թուի թէ ձենճ Հայոց բառ է եւ ձարպէն յառաջ եկած է ։ Բրդերն եւս ասեն ձենճ ։
495. Ոչխարի ամբողջ մարմին կու կախեն ի թոնիր եւ զբերան կու գոցեն, եւ կու մնայ յերեկոյէ մինչեւ ցառաւօտ, եւ բաց եփուելով կու կարմրի, եւ կ՚անուանի խորովու կամ խորվու ։
496-497. Բրդուճ է ([illegible]) . կու նշանակէ նաեւ Պատառ ։
498. Թուզ է ([illegible]) ։
499. Կանաչի ([illegible] եւ [illegible]) ։
500. Կարագ այն ինչ ի մածնոյ եկած եւ դեռ չաղուած իւղ է:
501. Կոյտ, ասի անձեւ հաց եփեալ ի կրակի ։
502. Կցան է ցորեան ծեծեալ յանկանի ։
503. Կորկոտ է ([illegible]) ։
504. Ջաւար է ([illegible] եւ [illegible]) ։
505. Ջմերուկ է ([illegible]) ։
506. Առաւօտեան ճաշոյ ասեն Ակռատ ։
507. Բուն ճաշ է ի միջօրէի ։
508. Կերակրոյ որ ի մէջ ճաշու եւ ընթրեաց է՝ ասի Հրամէն ։
509. Ջու է հաւու կամ թռչնոյ կիթ ։
510. Մածուն է ([illegible]) ։
511. Մատղաշ կոչի որ ինչ նոր է ([illegible]) ։ Զոր օրինակ վարունկ, կանկար, հազար եւ այլք ։ Նաեւ փոքր տղայք

կոչին Մատղաշ։

512. Կակուղ իրք կոչին ղալար, որպէս ճեռն, խաւրծիլ ելն։

513. Մերան է ([illegible])։

514. Մակարդ է ([illegible]). ուրիշ բաներու եւս ասեն մակարդ։

515. Մեծ եւ բոլոր մեղրի որ չէ հալած՝ կոչի Մեղրիհաց։

516. Եթէ ընդ ալեր մեղր խառնելով հաց շինեն, կոչի Մեղ-րէհաց։

517. Խնձոր, տանձ, դղում եւ սոցին նմանս ջարդելով կու չորցունեն յարեւի եւ կ՚անուանեն խնձորի չիր, տանձի չիր, դդմի չիր ելն։ Ջարդելոյն ասեն խնձոր, տանձ, եւայլն Չրեմ։

518. Ժաժիկ, այսինքն տկի պանիր, շինելով ի ձեւ մեծ ([illegible]), յարեւի կու չորցունեն, կ՚անուանեն չոր Թան ([illegible])։ ի ձմերան չոխթրիկ անուն յամանի տաք ջը-րով կու տրորեն, եւ կու լինի Թան ([illegible]), եւ նովաւ կերակուրներ կու շինեն։

519. Տրորեմ կու նշանակէ ([illegible])։

520. Սխեռն է ([illegible])։

521. Ոսպն է ([illegible])։

522. Սոխաթան է ([illegible])։

523. Վռիկ կամ Վռուշ է ([illegible])։

523. Տարգեղ է ([illegible])։

524. Բուալ կամ Բուփի է ([illegible])։

525. Փշրուկ է ([illegible])։

526. Գազաթ է գլխու կատար ([illegible])։

527. Ակռա կոչին մարդոյ բերնի երկու կողման մեծ Ատա-մունք։

528. Ատմներ կամ Ատամունք են բոլոր ակռաներ։

529. Արմուկն է ([illegible])։

530. Արպիջան կամ Ապարանջան է ([illegible])։

531. Գուրպայի երեսէն ի վեր բարձրացած մասին ասեն Գուրպի փող կամ Գուրպափող։ Նոյնպէս ասի կօշկի փող։

532. Ձեռաց թաթէ մինչեւ յարմուկն Բազուկ կոչի, եւ յար-մկէ ի վեր՝ Թեւ։ Բազկի եւ թեւոյ ի միասին ձիւ եւս ասեն։

533. Ոտաց Թաթերէ մինչեւ ի ծունկս անուանեն Ոլոք ։
534. Ի ծնգաց ի վեր կոչեն ձուռն ։
535. Մերկ ոտից ասեն Բոպիկ ։
536. Եղունկ կամ Ըղունք է (թըռնագ) ։
537. Երակ է (դամար) ։
538. Աղիք են (պաղըրսագ) ։
539. Ափ մի իրաց ասեն Բուռն մի, զոր օրինակ բուռն մի կանաչ սոխ, բուռն մի փարփառ ։
540. Բռնցի է (եումրուգ) ։
541. Որք զառարկայն իւրեանց աչաց շատ մերձեցուցանելով կարեն տեսանել՝ կ՚անուանին Բուշ ։
542. Կ. Պոլսոյ Հայք ասեն Իրա՛ւ. առ մեզ ասեն Ողո՛րդ․ զոր օրինակ՝ Ողո՛րդ ասես ։
543. Թաղիք է (քեչէ) ։
544. Բաճկոնի եւ նմին նման զգեստուց Թեւերու ծռաց Թաթին մօտ ճեղքուած տեղւոյ ասեն Թեզնիք, գրաբար Թեզանիք ։
545. Թիզ կոչի (գարըշ) ։
546. Բթան, այսինքն մեծ մատի ծայրէն մինչեւ նմին կից մատի ծայրն է Քիլ ։
547. Ի բերնի պարտկուելու չափ հացի, մոյ եւայլն ասեն Թուշ մի հաց, միս եւայլն ։
548. Լպզտրիմ է Լպրծիմ ։
549. Խոնջան կու նշանակէ (եօրղուն) ։
550. Խոնջնդարձ է (եօրղունլուգ) ։
551. Կանանց գլխոյ հերաց ասեն Ծամ ։
552. Բաց գլխոյ ասեն Կունդիկ ։
553. Երբ զերկու ձեռս յիրար մածուցանեն վասն չափելոյ ինչ որպէս ալիւր, ձաւար, եւայլն, ասեն Կուց. այսպէս ասի կուց մի ալիւր, կուց միծաւար ։
554. Ոտից երկու կողմանէ դուրս ցցեալ ոսկերք կոչին Ճան ։
555. Մարդոյ Թիկամք բարձեալ բեռն է Շալակ ։
556. Բեռնակիր մարդոյ ասեն Շալկուոր․ բանզի անվայել է ասել բեռնակիր. բեռնակիր ասեն ձիոյ, ջորւոյ, իշոյ, եւ ուղտու ։ Բեռն պարտի լինել զոյգ, այսինքն մին զըրաստու յայս կոյս եւ միւսն յայն կոյս, յայնժամ ասի

բեռն. անգոյգ բեռին երբէք չասի բեռն, այլ շալակ զոր մարդիկ կու կրեն ։

556. Աղքատի եւ տխմար մարդոց ասեն Շիւար ։

557. Մարդոյ գօտին եթէ ի մետաքսէ, ի բամբակէ եւ սոցին նման նիւթոց է, կ'անուանի Ճարիկ ։

558. Եթէ ի դերձանէ շինուած է. կ'անուանի Քաշիկ ։

559. Մարդոյ գլխոյ յետին կողմն անուանի Պճօճ ։

560. Կ. Պոլսեցիք ասեն, Մասխարայ կ'ընէ. առ մեզ ասեն Ցնազ կ'անէ ։

561. Ի մէջ լերանց խոր փոսեր կան, որոց յատակներ է զի քան զասպարէզ մի աւելի լայն եւ ընդարձակ են, եւ է զի պակաս. չորեքին կողմանք նոցա իբրեւ յորմոց պատեալ են ի լերանց ։ Յոմանց մէջ աղբիւր եւս կայ, եւ իւրեանց ստորին կողմ խորխորատ եւս ունին, ուր հալած ձեան եւ աղբերաց ջուրք կ'աներեւութանան ի նոսա եւ կոչին Ջրկորոյս ։ փոսն ամբողջ կոչի Փապար ։

562. Սայլի ([illegible]) այն երկայն փայտ՝ որոյ ծայրն կապուած է ի լուծ եւ զոր եզներ եւ գոմէշներ կու քաշեն՝ կ'անուանի Առեղ ։

563. Քարաթաթօշի ասեն Քարթաթօշ. երկայնութիւն նորա հազիւ մողէսի չափ լինի, բայց գլուխն մեծ է եւ քան զմողէսին երկայն. հաստկն եւս աւելի հաստ, եւ գոյնն կոկորդիլոսի գոյն է, եւ ի վերայ քարանց կու շրջի ։

564. Կովու եւ ոչխարի կաթն քամելոյ ասեն Կթեմ ։

565. Թաղիս ([illegible]) շինելոյ համար զգզուած բուրդ յիրար կըցելոյ ասեն Լմեմ ։

566. Ակռիլ է Կառչիլ ([illegible]) ։

567. Անեղ կամ Աղեղն այն գործին է որով բամբակ եւ բուրդ կու գզեն ։

568. Ափն կոչին ծովերու, գետերու, արտերու, պարտէզներու եւ այլոց Եզերք ։

569. Բազայ կամ Բազէ ([illegible]) Թռչնոյ անուն է ։

570. Զօրապի ոմանք ասեն Գուրպայ, այլք՝ Բուճ, եւ ոմանք՝ Թաթ ։

571. Գանգ մեռեալ մարդոյ, առն, կնոջ եւ տղայոյ գլխոյ ամբողջ ոսկեր անուն է ։

572. Դամոն է ([illegible])։
573. Քար որ ի լեռնէ գլորելով իջանէ ի վայր՝ կոչի Գիլ, ուստի է Գլորել։
574. Թամպան է ([illegible])։
575. Տնկոյ, բանջարի եւ խոտոյ հասնելով չորանալոյն ասեն Թռաւ։
576. Հողէ ամաններ շինելով կրակի մէջ չորացուցանելոյ ասեն թրծեմ։
577. Խոնաւ է հողն ուր ունդեր անկանելով բուսանին։ Ուստի երկրագործք միմեանց կու հարցանեն Անձրեւի խոնաւ իջա՞ւ ի հող թէ ո՛չ։
578. Կաճ է ([illegible])։
579. Լաթի կտորոյ ասեն Կարկտան։ Հին լաթեր նորոգելոյն ասեն Կարկատեմ։
580. Ջեռօք շինուած ցեխոյ ասեն Կաւ։
580. Երկաթոյ եւ փայտի արմկան ([illegible]) ասեն Կեռ։
581. Կրահան կամ Կրակահան է ([illegible])։
582. Հուղ եւ Խուղ է ([illegible])։
583. Ցօթն, ութ կամ տասն եւ երկոտասան եզն եւ արջառ քովէ քով շարելով, չուանով կամ շղթայիւ վիզեր կամ ճիտեր նոցա յիրար կու կապեն, եւ կալի ([illegible]) մէջ որային վերայ շուրջ կ'ածեն, որպէս զի որայն ջարդուի եւ լինի յարդ։ Արդ՝ այն շարք եզանց եւ արջառոց կ'անուանի Կռռի։
584. Վանեցիք Կիր ասեն ([illegible]), եւ Կաճ՝ ([illegible])։
585. Ճղակ կամ Ճղլակ է ([illegible]) ինչ։
586. Հողէ Կանթեղի ասեն Ճրագ։
587. Ցիմ հայրենիս Ցատեն նշանակէ նեղութիւն եւ վտանգ. ուստի ասեն. Ցատեն հիւանդ է։ Նաեւ ի ցրտոյ կամ ի ճանապարհ գնալոյ եւ ի սոցին նման իրաց նեղելոյ ասեն յատեն է, կամ յատեն էր։ Բայց եթէ նեղութիւն, վտանգ եւայլն կու տեւէ, յայնժամ փոխանակ յատենի նեղութիւն եւ այլ բառեր կու գործածեն. եւ յատեն եղող անձինք ասեն. Ո՛վ ատենահաս Ս. Կարապետ, Ս. Գէորգ, հասիր ինձ։ Ցայս միտս Շարականն աէ. Ատենահաս սուրբդ Սարգիս, եւայլն։

588. Շեգ է ([illegible]) ։
589. Շէկ է ([illegible]) ։
590. Ողն ասեն մարդոց եւ անասնոց Թիկան ։ Ուստի ողան շար է որ կու մնայ, երբ ձի, ջորի, էշ եւայլն կու սատակին, եւ գազանք եւ Թռչունք զմիս նոցա կ'ուտեն եւ կու մնայ միայն Թիկանց ոսկրն, եւ ի նա կցեալ կողեր ([illegible]) ։
591. Հեղուկներ կա'մ յստակ են եւ կամ պղտոր ([illegible]) ։
592. Գորանի կամ Բորանի է ([illegible]) ։
593. Մարդոյ փորի վերայ կոկոնի պէս փոքրիկ բան մի կայ, նոր ծնած մանկանն երկայն է եւ կու կտրեն ։ Այս է Պորտ ։
594. Լերան ամարանոցի ([illegible]) ասեն Ջոկ ։
595. Սալոր եւ Շլոր է ([illegible]) ։
596. Կաղամբի, պրասի, բանջարոյ ելն, տնկոց ասեն Սատր ։
597. Ոչխարի կաշւոյ ասեն Մորթ, եւ եԹէ խաղախորդի արուեստիւ հարԹարուած է, կ'անուանի Սեկ ։
598. Խստորոյ ([illegible]) ասեն Սխտոր ։
599. Սռնեմ ասի զոպն, զծաւար եւ սոցին նման ունդս խոշոր աղալոյ ։
600. Փուշ կամ մացառ որով պարտէզի, բուրաստանի, այգւոյ, արտի եւ սոցին նմաննաց չորս կողմ ամրացուցանեն զի մարդ կամ անասուն չկարողանան մտանել ի ներքս, կոչի Ցանգ ։
601. Ցանցառ հակառակն է Կոկ բառի. զոր օրինակ՝ ոռեբով շինուած իրք կամ կոկ են եւ կամ Ցանցառ ։
602. Ցաք է զհերկ հարԹող գործւոյ անուն ։
603. Ցից է ([illegible]) ։
604. Խարկուած (խորոված), ալիւրով, մեղրով եւ իւղով շինուած կերակրոյ ասեն Փոխինդ ։
605. Քամեմ է քամել եւ լաԹ եւ այլ հեղուկներ զտել ([illegible]) ։
606. Ի ցորենի հասկերուն վերայ իբրեւ մազ բարակ եւ երկայն իրք են Քիս, գրաբար՝ Քիստ ։
607. Քշտեմ է ([illegible]) ։
608. Քուրձ ([illegible]) ։
609. Կ. Պոլսեցիք ասեն. Խնձի կամ քեզի մէրաք եղաւ ։

Մերըն ասեն . ինձ կամ քեզ Բոր եղաւ , կամ քեզ Բոր արարեր ։

610. Ապսպրեմ է ([illegible]) ։

611. Խրիմ ունի երկու նշանակութիւն . մի՛ ի ծեան , ի տղմի եւ ի սոցին նմանս ընկղմել . երկրորդ՝ մասն մի հող որ հոսի եւ գայ ի վայր ի լերանց ասի խրաւ ։ Աստի է Խը֊րամ ։

612. Քոս է ազգ ինչ բորոյ ([illegible]) ։

613. Կ. Պոլսեցիք ասեն . Թախըմ մը անկողին , դգալ , չա֊թալ , եւայլն . առ մեզ ասեն . Ջեռք մի այս ինչ կամ այն ինչ իրաց ։

614. Սաստկանալոյ ասեն հիւանդութիւն , ելն , խստեր է ։

615. Մաղունչք են ունդք որ ի մաղելն մնան ի մաղին ։

616. Երկայն աղտ որ երեւի ի քարինս ի մէջ ջրոյ իբրեւ խոտ՝ կոչի Մամուռ ։

617. Կակազելոյ ասի ([illegible]) ։

618. Այն որ զ ~՝ ւ կու հնչէ , որպէս , Ամալն՝ փոխանակ Ա֊մառն , Գալն՝ փոխանակ Գառն , կոչի Թլուատ ։

619. Մեծ ուրագ որոյ կոթէն ՚երկու ծնռօք բռնելով եւ մեծ փայտերու վերայ կանգնելով կու տաշեն՝ կ'անուանի Ոտնուրագ ։

620. Ի տանց պատերուն վերայ Քիւ ([illegible])՝ կոչի Ցուիցք ։

621. Հաց ու պանիր ([illegible]) անուն է ։

622. Հանագ է ([illegible]) ։

623. Մազքաշ է ([illegible]) ։

624. Մակատուզ է [illegible]) ։

625. Ախուիմ է ([illegible]) ։

626. Պրտեմ է ամուր շփել ։

627. Խեղամղիմ է ([illegible]) ։

628. Թիկունք ասի մի՛ կռնակի , երկրորդ՝ Թէ՛ եկեղեցւոյ եւ Թէ ազանելի շապիկներու օձեաց ([illegible]) եւ սոցին նմանեաց ։

629. Գեղ , խեցի եւ քար ծեծելով իբրեւ զալիւր մանրելոյ ասեն Սղկեմ ։

630. Օթեկ է ([illegible]) ։

631. Տուտը կոչին սիւնք զորս գետերու մէջ քարով եւ կրով

*բարձրացուցանեն, եւ ի վերայ կամարներ դարձուցանելով եւ կամ գերաններ ձգելով կամուրջներ կու շինեն ։*

632\. Կոծիծ կամ կոծոծ է ([illegible] եւ [illegible]) ։

633\. Կղունձ է ([illegible]) ։

634\. Կտաւ կամ դերձան կամ չուան եւ սոցին նմանք որ կրկին են՝ կոչին Երկուտակ ։

# ԳԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Հ. Մանուէլ վարդապետ Բաջունի գրած է թէ, Հրազդան գետ կ՚ելանէ Գեղամայ ծովէն և կ՚անցնի յԱյրարատ նահանգի առ Երեւան քաղաքաւ, և կու միանայ ընդ Երասխ գետոյ։ Թէպէտ մեք ի սկզբան այնպէս լինել ուղիղ չդատեցաք, սակայն յԵրեւան քաղաքէ մինչեւ յեզր Գեղամայ ծովուն բեռնաւորեալ և քառաձի կառօք զճանապարհի մեծ մասն ի մէջ գիշերի գնացաք, ուստի խաւար գիշերոյն, յորդ տեղացումն ձեան, նաեւ ցուրտ, մէգ և մառախուղ տուրնջեան արգելին զմեզ ուշի ուշով ի դիտելոյ. այսր աղագաւ կասկած ի միտս մեր յղացաք, զի մի ստեսցուք, Հարց արարինք, որոց յայն կողմանս ճանապարհորդութիւն արարեալ էին, և ընկալաք պատասխանի թէ, Ոչ գիտեն։ Իսկ եպիսկոպոս մի և վարժապետ ումն ստուգեցին թէ Արդարեւ գետ ինչ ելանէ ի Գեղամայ ծովէն և անցանելով առ Երեւան քաղաքաւ, միանայ ընդ Երասխ գետոյ։

Թէեւ նկարագրութիւն մեր ճիշդ է, այսինքն չուրջ զԳեղամայ ծովու, նաեւ ի միջի նորա և Արարատեան դաշտի և Երեւան քաղաքի լերինք բարձրացեալ կան, սակայն յետկոյս Երեւան քաղաքի յարեւելեան հիւսիսային կողմանէ, Գըրդչէչմէլէր անուն յականց, Երեւան քաղաքի ուղղութենէ բաւական ի խոնարհ, գետ մի կազմուելով սաստիկ սրընթացութեամբ երթայ դէպ ուղիղ ի կողմն Գեղամայ ծովուն, և թերեւս յետ գնալոյ բազում ասպարէզս, զիւր ընթացս դարձուցանէ դէպ ի հիւսիսային կողմն։ Զի լերինքն ի մէջ իւր-

եանց ունին խորագոյն ձորեր ընդ որս ճանապարհ տուած են գետոյն, զոր մեք չեմք տեսած։

Երկրորդ՝ փոխանակ ասելոյ Աղձնեաց աշխարհի, Քրդաստանի և Ասորեստանի սահմանագլուխներ, սխալմամբ գրուած է Հայաստանի։ Նոյնպէս ուրեք ուրեք փոխանակ գրելոյ Հայրենիս, գրուած է Հայաստան։

Գաւառական բառերու դիմաց դնելու ծանօթ Հայ անուններ չկարացինք գտնել. վասն որոյ զնոյն նշանակութիւնն այլ իմն բառերով բացատրեցինք։ Բայց որչափ անուանս զոր յիշէաք, երկրագործութեան, հողեղէն, փայտեղէն և ուտեղէն անօթոց, և այլ պէսպէս իրաց, զամենեսին եդաք Այբուբենի կարգաւ։ Թուանշանք առաջի իւրաքանչիւր բառի տան դիւրաւ գտանել զմեկնութիւն բառին զկնի։

Զոր օրինակ՝ առաջի Հօբալ բառի եդեալ է 389 թուանշան. յառաջ երթալով նոյն 389 թուանշանով գտանես զՀօբալ բառի մեկնութիւն։

Մի ոք կարծես ի մտի իւրում ունիցի թէ այն բառեր ի Քրդերէնէ առնուած են. քանզի յայն բառից միայն Ալուք, Յաճիկ, Գէժուխ, Լակ, Լօփ, Խիզար, Խօտաղ, Կօտ և Հնճան Հայեր և Քրդեր միեւնոյն հնչմամբ արտաբերեն, և զժաժիկ, զՃարիկ, զՃոռն, զՄանգեռն, զՇիշաք, զՋիր, զՊուխէրիկ, զՍուստ, զՓալայ, զՔասայ բառսն Քրդեր ժաժի, Ճար, Ճօռ, Մանկէռ, Շիշըք, Ջիրըկ, Պըլխէրի, Սէուստ, Փալը, Քեասը կու հնչեն, իսկ միւս բառեր ամէնքն եւս Հայկական բառեր են, և յորդւոց յորդիս հասած են մինչեւ ի մեզ։

# ՑԱՆԿ

Ա. Ակունք Եփրատայ որ ի կողմանս Բագրեւանդայ . . . . . . . . . . . . . 1
Բ. Ակունք Եփրատայ որ ի կողմանս Կարնոյ 6
Գ. Շղթայք լերանց որ ունին զակունս Եփրատ և Մուրատ գետոց . . . . . . 8
Դ. Յաղագս Արարատայ դաշտին, Երեւան և Տփղիս քաղաքաց և նոցին գետոց 25
Ե. Տիգրիս գետ . . . . . . . . . . . . . 27
Զ. Բաղիշոյ այսինքն Պիթլիզու գետ . . . 30
Է. Գեզերու գետ . . . . . . . . . . . 31
Ը. Ակունք Տիգրիս գետոյ . . . . . . . . 38
Թ. Կորդուաց աշխարհ . . . . . . . . . . 48
Ժ. Վանորայք Հայոց որ ի հարաւային կողմանս . . . . . . . . . . . . . . . 51
ԺԱ. Հին և Նոր անուանք գաւառաց ինչ . . 60
Ծանօթութիւն . . . . . . . . . . . . 76
Յաղագս կործանման Ակոռի գեղջ . . . 80
Յաղագս Բրդայ . . . . . . . . . . . 83
Յաղագս Արեւորդեաց, նոցա աղանդից, հաւատոյ և արարողութեանց . . . 90
Յաղագս լեզուի Պոլսոյ և գաւառացի Հայոց . . . . . . . . . . . . . 95
Գաւառական բառք . . . . . . . . . 68
Մեկնութիւնք գաւառական բառից . . 111

# ՎՐԻՊԱԿՔ

| Երես | ՍԽԱԼ | Տող | ՈՒՂԻՂ |
|---|---|---|---|
| 23. | *Ջուրք* | 12. | *Լերանց շարք* |
| 29. | *Ի Խոյթ և ի Գղեխ* | 6. | *Ի Խոյթ և ի Գղեխ գաւառաց* |
| 29. | *Իսկ հարաւային կողմանէ Տիգ-րանակերտի* | 24. | *Իսկ հարաւային կողմանէ գետոյն Տիգրանակերտի* |
| 35. | *Գիւղին Կիւղէլ-տէրէի* | 11. | *Դաշտին Կիւղէլ-տէրէի* |
| 45. | *Ի տեղէն կու բղխէ* | 4. | *Ի տեղէն ուր բղխէ* |
| 53. | *Աղձնեաց երկրի վանաց* | 6. | *Աղձնեաց երկրի և այլ վանաց* |
| 56. | *Ի միոյ ապառաժի վերայ է* | 38. | *Ի վերայ միատարր քարի է* |
| 86. | *Սակաւ* | 24. | *Սակառ* |
| 91. | *Շէհթանէս նահլաթ* | 24. | *Շէյթանէ նանլէթ* |
| 136. | *Լող* | 18. | *Լող* |

Գին 5 դահեկան

7585
7586
7587
7588
7589
7590

0003646
0003647
0003648
0003649
0003650
0003651

2013

0003646
0003647
0003648
0003649
0003650
0003651

2013